

Բնագիր

ԼՂՀ ԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊՐԱՆՈՍՏԻ

9. ՏԱՐԻ 1964
Յ Ո Ւ Լ Ի Ս 7^{TV}

پاکین
 مجلہ شہرہ آفاق ادبیہ و فنیہ عالیہ
 مدیر المسؤؤل
 السيد ارنيس كارنيك قزائجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բԱԳԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՀԱՐՈՋ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍՍՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐՆԵՐ
 ԵԴ. ՊՕՑԱՅԵԱՆ, Պ. ՄՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՅԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԵ
 ED. BOYADJIAN
 B P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային բիւ 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Կ. ՄԵՀԵԱՆ
- Ռ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
- ԵԴ. ՊՕՑԱՅԵԱՆ
- Պ. ՄՆԱՊԵԱՆ
- Ա. ԵՐԿՈԹ
- Բ. ԿՌԱՆԵԱՆ
- Ա. ԴԱԽԻԹԵԱՆ
- Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Լ. ՄԿՐՏՋԵԱՆ
- Զ. ՄԻՐՋԱՅԵԱՆ
- Ե. ԳԱՍՊԱՐԵԱՆ
- Ծ. Պ.
- Պ. Ս.
- Բ. Փ.
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՆԱԲԱԿՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Գ. ՅԱՐԻ, ԹԻՒՆ 7

Յ Ա Ւ Լ Ի Ս 1964

ԳԼՈՐԻՐ

ԱՆՈՆՔ ՎԵՐՍՏԻՆ Կ'ԱՐՄԱՏԱՆԱՆ...

(ՏԵՍԻԼ ՍԸ)

4. ՄԵՂԵԱՆ

(Սարգիսանի գրասենյակը: Անդա-
նին սողելու մատած է Սարգիսան: Դեմը՝
տիւամին վրայ՝ Օհաննան եւ Դանիել-
եան):

ՕՀԱՆՆԱՆ.— (Թօքուելով գլանիկին
մոխիրը մոխրամանին մէջ) Ուրեմն Կի-
րակէն է Վեր Վիլլան էք:

ՍԱՐԳԻՍԱՆ.— Այո՛, Մերանը գլու-
խըս կերաւ. փաթիկի աղմուկէն ձանձ-
րացած եմ, կ'ըսէ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Տղա՞քը:

ՍԱՐԳԻՍԱՆ.— Հանրին տո՛ւնն է:
Կարծեմ Սպանիա պիտի մեկնի Օգոստոս-
ին:

ՕՀԱՆՆԱՆ.— Այո՛, ալ:

ՍԱՐԳԻՍԱՆ.— Ո՛չ, Մեզի հետ է,
բայց նորէն Յունաստան մեկնելու խօսքեր
կ'ընէ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Նկարելու, կ'երեւի:

ՍԱՐԳԻՍԱՆ.— Այո՛, (Լսելով դրամ
բայտում մը) Մտէ՛ք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Կը մտնէ: Կը համ-
զլտարկը: Անուշիկն քերքեր) Բարե՛ւ
ձեզ: Տէրամի՞ն չե՛մ ընէր:

ՍԱՐԳԻՍԱՆ.— Խնդրե՛մ, Հրամա՛ն-
ցէք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Կարգով ձեռք տա-
լով երեքին) Տխանեա՛ն (կը մտնի):

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Երկարելով ծխա-
տուփը) Կը ծխե՞ք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մերսի՛: Ո՛չ, Ո՛չ ծը-
խախոտ, ո՛չ ալ ըմպելի:

ՕՀԱՆՆԱՆ.— (Ժպտում) Կ'երեւի ար-
գելքը տունէն կու գայ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Դռնալու ծպտում)
Այո՛... (Նիւթը փոխելով եւ դառնալով
Սարգիսանին) Եթէ չեմ սխալի՞ր՝ մոտ-
դիր էք նոր փապրիֆա մը չիկնել: Անբը-
բընէօր եմ (Դրամնէն կ'առնէ դրամա-
պանակը: Կը համէ այցնտումս մը) Հաս-
մը Թող դռնուի մեր քով եւս:

ԵՎ ԱՍՈՒՆ ԼՍՈՒ

20213-ԱԿ

digitized by A.R.A.R.®

ՍԱՐԳԻՍԵԱՆ. — (Կ'առնէ) այցեւումը) Առայժմ ծրագրեր մըն է միայն եւ ոչ թէ որոշում: Այսուհանդերձ նկատի կ'ուենեամ (նայելով այցեւումսին) կը ներէք, բայց ինչո՞ւ Տիտան եւ ո'չ թէ Տիտանեան:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Մեղմ) Ընդհանրապէս օտարներու հետ է դործս: Եւանջը չա՞տ հայկական է. խորթ կը հնչէ...: Վանկ մը աւելի կամ պակաս՝ ի՞նչ է տարբերութիւնը:

ՕՀԱՆԵԱՆ. — Վա՞նկ մը, թէ ազգային պատկանելիութեան յատկանիշը:

ՏԻՏԱՆԵԱՆ. — Բայց «եան»ը չէ, որ Հայը հայ կ'ընէ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ. — Թէեւ ա՛ն է, որ Հայը հայ ցոյց կու տայ:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Բամալով ձեռքերը) Ի՞նչ հարկ կայ ամէն տեղ ու ամէն առիթով լեւտելու, թէ հայ ենք: Մինք հայ ենք մեզի, եւ ո'չ թէ օտարին համար:

ՕՀԱՆԵԱՆ. — Խնդրոյ առարկան մեր հայ ըլլալը ցոյց տալը չէ, այլ՝ դայն ծածկելու՞ հիշել:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Շարժուելով) Խօսինք ֆրանշըման: Ատենէ մը ի վեր Հայերս կիւրքի մը վերածած ենք մեր հայութիւնը:

ԴԱՆԻԷԼԵԱՆ. — (Ընդմիջելով) Այսօր է:

ՏԻՏԱՆԵԱՆ. — Կ'ուզենք, որ ամէն Հայ ըսէ՛, պոռա՛յ, գրէ՛ թէ ինք հայ է: Նո՛յնը պատահեցաւ հայածին գրազէտին առիթով: Հաղիւ համրաւի հասած՝ յիշեցինք թէ հայ է: Իսկ երբ աճառեմք մտաւ, սրտեղեցանք, թէ ինչո՞ւ չ'ըսեր որ հայ է:

ՕՀԱՆԵԱՆ. — Ի՞նչպէս կը բացատրէք այդ պարագան:

ՏԻՏԱՆԵԱՆ. — Կը նկատեմ ազգային ինքնատիրութեան պակաս: Ես չեմ ժրտահր այդ գրազէտին տաղանդը: Այսուհանդերձ, իրեւ Հայ, ես ինծի լեմ թոյլտրեր պահանջել նոյնիսկ գերարժէք աւել Հայէ, որ յայտարարէ, թէ ինք Հայ է, եթէ ինք կը գովամակի: Ա՞յդքան նուազ է մեր դնահատումը հայ դը-

րականութեան, մեր ժողովուրդի դարաւոր ստեղծագործութիւններու մասին, որ ըսելու զանազան լիւրճ, թէ Ծրանսայի մը կը կարօտինք արժէք մը դառնալու համար:

ՍԱՐԳԻՍԵԱՆ. — Ատիկա տեսակէտ մըն է անշուշտ:

ՕՀԱՆԵԱՆ. — Պարագան միշտ նո՛յնն է: Ծածկելու ճիգն է, որ մեղադրուած է:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Ընդմիջելով) Ինչո՞ւ, ուրեմն, նոյն առտը չէք ուղղեր այն հայ գրողներուն, որոնք հայերէն սկըսան, բայց երբ անգլերէն կամ ֆրանսերէն գրեցին, ամերիկեան կամ ֆրանսական անուններով հրապարակ իջան: Դո՞ւք ինչպէս կը բացատրէք այս գիծափոխումը:

ԴԱՆԻԷԼԵԱՆ. — (Շեշտակի) Ճի՛շդ այն մտայնութեամբ՝ ինչ մտայնութեամբ, որ դուք ջնջեր էք մեր մակա-նունին «եան»ը՝ խորհելով, թէ մեր գործը օտարներու հետ է ու խորթ կը հընչէ...

ՏԻՏԱՆԵԱՆ. — Բայց...

ԴԱՆԻԷԼԵԱՆ. — (Կտրուկ) Ո՛ւր մէկ բայց, քանի որ ուզեցիք խօսել անկեղծօրէն:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Անդրադառնալով) Ա՛յո... կ'ըսէի, թէ կիրքի մը վերածած ենք մեր հայութիւնը:

ՕՀԱՆԵԱՆ. — Յամառութեան մը:

Հայ մնալու յամառութեան...

ՍԱՐԳԻՍԵԱՆ. — Ինչ որ դարերէն կու դայ:

ՏԻՏԱՆԵԱՆ. — (Շարունակելով) Ձե՞ք կարծիք, թէ հարկ է յարմարիլ միջա-վայրին, պայմաններուն: Ի՞նչ ընենք, ամէն օր Ծրանսայիներուն քի՞թը խօթենք մեր հայ բլլալը:

ՕՀԱՆԵԱՆ. — Բայց ո՛չ ալ ծպտուած մօտենանք անոնց...

ՏԻՏԱՆԵԱՆ. — Հարկը օրէնքը կը լուծէ: Պէտք է օրինակ առնել Հրեաներէն: Ռուսիոյ մէջ «օֆ» են, Գերմանիոյ մէջ՝ «ման»։ Իսկ այստեղ կամ Անգլիա՝ Հիթլէրի ըրածին պէս արիւնք պիտի քննեմ, որպէսզի իմանամ ի՞նչ ըլլալը:

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Այո՛, բայց կը մնան Հրեայի, Հայը կրնայ Հրեային նման առեւտրական ըլլալ։ Բայց չի կրնար կամ չ'ուզեր Հրեային հրեայ մնայուն նման հայ մնալ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ազդուած) Եթէ ինծի կ'ակնարկէք, անիրաւ էք։

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ակնարկութիւն չըրի — այլ՝ ըրի ընդհանուր բնորոշում մը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ծուռկիմ վրայէն վերացնելով քերքերը) Այս թերթերը կը տեսնէ՞ք, Ֆիլիպոս, Օրօր, Քոմպա, Պըրաքս-Սուառ... Կարգացի՞ք, թէ ի՞նչ գրած են «Վարդանանք»ի Ֆրանսերէն թարգմանութեանը առթիւ։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Այո՛։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Կրօնքի՞ պատերազմ է եղեր... Կրօնքը պատրուակ էր Պարսիկներուն համար, իսկ պատուար մը՝ մեզի համար... Պարսիկ չղառնալու եւ Հայ մնալու կոթիւ մըն էր... Ճի՞շդ է։

ՕՀԱՆԵԱՆ.— Էսթեան մէջ՝ այո՛։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Յետոյ՝ հազար տարի ե՛տ մզեր ենք ճիթանոսներուն արշաւանքը դէպի Արեւմուտք։ Ըսել կ'ուզենք, թէ մենք մեռանք, զոհուեցանք, որպէսզի դուք ապրիք...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Աւարայրի Հետեւանքներէն մէկը մասնանշուած է ապա-հովարար։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Թերեւս։ Բայց, խորքին մէջ, օտարի՛ն ծառայած ըլլալու մը-տայնութիւնն է։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Մեր ազգային տկա-րութիւններէն մէկը, զոր է յայտ կը բեւ բենք ամէն առթիւ։ Կամ ծառայութիւն մատուցած ենք օտարին, կամ շնորհ ըս-տացած ենք անկէ...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ուժեղ) Պիտի գրեմ, պիտի գրեմ Ֆիլիպոսի մէջ (կը նայի ե-րեքիմ) Թերեւս յաւակնութիւն նկատէք։ Թոյլ տուէք ըսելու, թէ 1913-էն ի վեր Փարիզ եմ։ Ուսած եմ Սիան Փօլիթիք եւ սոփօրա՛ւ ունիմ։

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Իսկ ձեր այցատու-մին վրայ իբրեւ անթրոպոլոգի կ'երե-ւիք։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այո՛։ Սիան Փօլիթիքը

ի՛նչ կը բերէ ինծի։ Առեւտրական ըն-դուհակութիւն ալ տեսայ մէջն եւ նուր-ուեցայ անոր։

ՕՀԱՆԵԱՆ.— Եսզը ուրիշ է...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ծարուհեկեալ) Հի-մա, փառք Աստուծոյ, հրապարակի վը-րայ դիմեք մը ունիմ։ Փառաւոր չէնք մըն ալ ինծի չիենցի Սէմ Քլու։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ուրեմն կոնակնիդ տաք է...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Փայտն) Ուի՛։ Ու-նեցածս զաւակներու ալ կը բաւէ, թո-նեւրու ալ...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ատկա բախտաւ-րութիւն մըն է ընտանիքի հօր մը հա-մար։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ցանկալով) Մենք ձա՛յն չունինք, ձա՛յն... Ա՛ս է մեր տը-կար կողմը։

ՕՀԱՆԵԱՆ.— (Ուղիղ նայելով Տի-տանեանին) Այսի՞նքն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մեր հանդէսներուն մէջ ճառ խօսելով ո՛չ մեր դատը կըր-նանք պաշտպանել եւ ո՛չ ալ մեր պատ-մական հողերը ետ ստանալ։ Մենք միշտ մեզի՛ կը խօսինք այդ մասին... Սէր ապսիւրս։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Իսկ ըստ ձեզի՞...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ընդմիջելով) Մէ՛կ հատիկ Ֆրանսերէն կամ անգլերէն թերթ չունինք՝ օտարներուն խօսելու համար։

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ճի՛շդ է։

ՏԻՏԱՆԵԱՆ.— 1919-ին ժուռնալ տէ ժուռնո մը կար. մեծ քրքած ունէր։ Պատու էր։ Պօղոս Նուպարին բռնեք որ...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ըսի՞նք...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Տեսելով զՎիլի) Ան-չու՛շտ, քի՞չ խօսած եմ հետը։ Փաշա՛ս, բռնեք, գնէ՛ որ թերթը. Էմքէրմաւիւ-նալ բեմ մը ունենանք Փարիզի մէջ։ Մը-տիկ չըբաւ։ Եւ ելաւ՝ Պանեօ Քաշանի մէջ աւանդներու չէնք մը չիենց... Մ'օն շեր, արիւսով ու պատերով ազգ կը փրկուի՞...

ՕՀԱՆԵԱՆ.— Եւ ի՞նչ կը խորհէիք ը-նել այդ թերթով։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ի՞նչ ընե՛մ... Հայկա-կան քաղաք պիտի պաշտպանէինք...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Փրփրահանա...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այո՛, եւ ոչ թէ «միայն զէնքով»... Մեր դատը Սասունի լեռներէն փոխադրուած է...

ՕՀԱՆԵԱՆ.— (Ընդմիջելով աւ շեշտակի ճայելով Տիտանեանին) Ո՛ւր...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Պահ մը կը վարանի) Վերջուպէս... այլեւս Սասունի լեռներուն կամ Վանի մէջ չէ այդ դատը։ (Ցանկաբար փոխելով Ուրբը) Նորէն, փառք Աստուծոյ, աղէկ գէշ Հայաստան մը ունինք հիմա։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Համադարտ) Ի՞նչ կը հասկնաք Հայաստան ըսելով...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Անսկիւնկալի եկած՝ կ'ազդէ մէջքը) Ի՞նչպէս թէ՛ ի՞նչ կը հասկնամ... Հայաստան մը չունի՞նք...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Միշտ շեշտակի) Իսկ պետութիւն ըսելով ի՞նչ կը հասկընաք... Կը խորհիմ, թէ դուք լատիներոս կրնաք ըմբռնել այդ բառերուն ճշգրիտ իմաստը, քանի որ կ'ըսէք, թէ սխալն փոյիթիք ուսած էք։

ՍԱԴԳԻՍԵԱՆ.— (Դանիելեանին) Բայց խի՛ստ է այդ հարցումը... Անողո՛ք՝ նայի՛նք...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ստրգիսեանին) Կը հասկնամ, թէ ի՞նչ բռնի կ'ուզէ պարտնը։ (Դանիելեանին) Մեղով Աղէկ գէշ ուրբը, ատոր համար ըսի... Մեր հողերէն մէկ մասին վրայ Հայերու մեծամասնութիւն մը կա՞յ... Կտոալարութիւն մը կա՞յ...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Ընդմիջելով) Աղէկ գէշ...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Օտարներն ու Հայերն զայն Հայաստան կը կոչենք։ Այս բոլորը, ո՛րքան ալ անբաւարար ըլլան, պէտք է նկատենք իրողութիւն մը, զոր ցարդ չուշէինք։

ՕՀԱՆԵԱՆ.— Բայց ոչ ոք կը ժխտէ զայն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ոգիւտը) Ե վաւապ։ Ասիկա տէրիւր մըն է։ Մենք հիմա այս Հայաստանին ուս պիտի տանք, Իրաւահանը, քաղաքականը, տնտեսականը մէկ կողմ։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ժիշդ այդ պատճառով ալ՝ պէտք է ընդդիմանանք, երբ կ'աշխատուի որեւէ ձեւով ապագայատանադնելի դայի։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Շարունակելով) Ռէժիմը այսօր կայ, վաղը չկայ։ Ասիկա միշտ ըսած եմ ու կ'ըսեմ։ Դուն համարեմար ես, կ'ըսեն ինծի։ (Սրտնայ) Ո՛չ։ Ես ո՛չ Համարեմար եմ եւ ո՛չ ալ Դաշնակցական։ Ես Հա՛յ եմ... (չուզուած) Հա՛յ եմ, Հա՛յ... Եւ Հայո՛ւ պէս ալ կը սիրեմ Հայաստանը... Մե՛ղք է, յանցածնք է Հայաստան սիրելը։

ՕՀԱՆԵԱՆ.— Անշուշտ՝ ո՛չ։ Առանց մեծաշնորհ դարձնելու եւ ուրիշներ թշնամի նկատելու սակայն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ա՛հ, ո՛չ... Այդ վերադրումը ինք թշնամանք է։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ես չեմ հասկնար, թէ մինչ Ծրանասցին ինքզինք Ֆրանսայաւր, կամ՝ Անգլիացին՝ ինքզինք Անգլիայէր չ'որակելը, դուք եւ ձեզի նմաններ ինչո՞ւ ձեզ Հայաստանաւերներ կ'որակէք։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Որովհետեւ մեր պարագան ուրիշ է։

ՕՀԱՆԵԱՆ.— Ինչո՞ւ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մենք դ՛ուրսն ենք, հեռո՛ւ ենք, կարօ՞տ ունինք... Հողի՛ կարօտ, պետութեան՝ կարօտ... Կարօ՞տ՝ վէց կարիւր տարիներէ ի վեր։ Եւ յետոյ՝ անիկա մեզի Աստուծով տրուածի պէս բան մըն է։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Խիստ) Իսկ դուք կը մոռնաք, որ օտարին տուրք տալու մը տանելակերպ մըն է նաեւ այդ ձեւով ընտրողը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ո՛չ։ Ես կ'ընդունիմ թէ Անկախ Հայաստան մը ունեցանք։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Որո՞ւ շնորհիւ. օտարի՞ն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մե՛ր։ Կ'ընդունիմ նաեւ թէ՛ առանց յեղափոխական շարժան մեր ժողովուրդը անհրաժեշտ չափով խըմորուած ու պարտաստ պիտի չըլլար Սարտարապատ կերտելու։ Բայց ասիկա պատմութիւն է։

ՕՀԱՆԵԱՆ.— Նաեւ խորի՛ստ մը։

նախընթաց մը։ Սեփական ուժով հայրենիք կերտելու կարելիութեան փառս մը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ըսել կ'ուզէք, թէ այդ նախընթացին վրայ պէտք է խորսխուի վաղուան Հայաստանը։

ՕՀԱՆԵԱՆ.— Անշուշտ։ Այդ պէտք է ըլլայ մեր հիմնական ձգտումը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ըսել կ'ուզէք նաեւ թէ՛ հիմնականը վարչաձևի փոփոխում մըն է լոկ։ Տ'ախար։ Բայց ռէալիստ պէտք է ըլլանք։ Ունինք շունչն աշտարակի Հայաստանը ունինք եւ պատրաստ ենք հաշտուիլ այս իրողութեան հետ։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Հանդուրժել՝ առանց հրաժարելու հիմնականէն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Հանդուրժենք կոմ հաշտութիւն, մենք ստիպուած ենք կոտորի ահոր։

ՕՀԱՆԵԱՆ.— Հայաստանին եւ ոչ թէ իշխանութեան։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Եւ առանց շփոթելու առաջինը երկրորդին հետ։ Եւ, ի հարկին, առաջինը պաշտպանելով երկրորդին դէմ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ինչպէ՞ս... (կը մտածէ պահ մը) Չգիտեմ... Եւ ի հարկին առաջինը պաշտպանել երկրորդին դէմ... (Անդրադարձ) Մեր այդ զանցառութիւնը թերեւս կու գայ եղած այդ քիչը չկորսնցնելու մեր մտահոգութենէն... Հայաստանը, իր կարգին, ուժի մը կատարելու հարկադրանքին տակ տեսնելու մեր մտաւիտութենէն...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Աւելի ճիշդ՝ մեր ժողովուրդի արժէքներուն ու կարելիութիւններուն ստորադնահատումէն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Բայց առիկա չի նշանակեցնէր մեր սէրը դէպի Հայաստանը։

ՕՀԱՆԵԱՆ.— Կը նուազեցնէ, սակայն, ձեր ու ձերի նմաններուն հաւատքը մեր ժողովուրդի ապագայի մասին։ ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Կարելի՞ է իմանալ, թէ զուգ որ այդքան ուժեղ կառնած էք Հայաստանին, ի՞նչ կ'ընէք ահոր համար։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Հայաստանը՝ հոն, ես՝ հոս, ի՞նչ կրնամ ընել։ Կ'ուրախա-

նամ, որ ջար քարի վրայ կը դնեն, կը շինեն, կը վերաշինեն... Քաղաքներ, երկիրականութիւն, ջրանցք, դործարաններ... Գացի ու աշխարհիս տեսայ, չէ՞...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Տեսաք եւ...։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ուրախացա՛յ՝ ու հը պարտացա՛յ նոյնիսկ։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Մեղմ) Բայց չիւրդահարեցա՞ք...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Զարմացած) Խղճահարէ՞ք... Ինչո՞ւ։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Իբրեւ հա՛յ, իբրեւ Հայաստանասէր մը մանաւանդ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Շփոթ) Ձեմ հասկընար... Խղճահարէի, որովհետեւ Հարբենիքը կը ծաղկի՞, կը բարգաւաճի՞...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ո՛չ. որովհետեւ կ'ըսէք թէ կը շինեն, կը վերաշինեն։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այո՛, կարելի՞ է ժըրտել։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Անշուշտ՝ ո՛չ։ Բայց դուք եւ ձերի նմաններ այստեղ կամ այլուր մտահոգուած էք միայն ձեր սեփական չէրեքով ու միեւն իսկ ձեր թոռներուն ապագայովը...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Բայց ես իմ շէնքս չեմ կարող Հայաստան փոխադրել։

ՕՀԱՆԵԱՆ.— Շէնքը՝ ո՛չ, անշուշտ։ Բայց դուք ձեզ՝ այո՛։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Երբ տեսաք հայ աշխատաւորին քրտինքն ու դրկանքը, ձեր մէջի Հայաստանասէրը չմտածե՞ց այդ մասին։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Հայաստան՝ փոխադրուելու մասին։

ՕՀԱՆԵԱՆ.— Ժիշդ ա՛յդ է, զոր կ'ուզէի ըսել։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Որովհետեւ սէրը լոկ զգացում չէ. այլեւ՝ նուիրում է. զուգադուրիւ. զոհարարութիւն՝ ի հարկին։ Հայաստանը ուրեւր միայն զգացումի խնդիր պէտք չէ ըլլայ, այլեւ՝ պարտականութեան եւ խղճի՝ խնդիր մը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Բայց...։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Եւս ի՞նչ կ'ընեմ Հայաստանի համար, — այս հարցումին գոնէ ինք իրեն զրակաւ պատասխան մը

չտուող Հայաստանապետը ազգային դա-
սախթ մըն է...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Դանիէլեան, միշտ
միեւնոյն անողոքն ես...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ծարժուկով) Օ՛,
ո՛չ, Ո՛վ ըսաւ, թէ չեմ խղճահարի:
Բայց կամենալը միշտ կարենալ չէ: Եւ
յետոյ, ամէն բան վարժութեան խնդիր
է, ինչպէս կ'ըսեն: Յիսո՞ւն տարի է Ձե-
րանսս եմ: Այստեղ ապրեմ, այստեղ ու-
սանեմ, այստեղ չահեր եմ ու վարժուեմ
այս երկրի ազատութեան: Իսկ այնտեղի
պայմանները...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Ընդմիջելով) Այդ
պայմանները, որոնց մասին միշտ կը
մտածեն, բայց երբեք չեն խօսիր...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ըսի, չէ՞: Մեզի նը-
մանները կրնա՞ն կաղապարի մէջ մըտ-
նել...

ՕՀԱՆԵԱՆ.— Այդ պատճառով ալ՝
զացիք, տեսաք ու վերադարձաք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Գացի իբրեւ քա-
րիս: Եթէ կ'ողջէ՛ք՝ իբրեւ ուխտաւոր
մը: (Բարձր) Այո՛, իբրեւ ուխտաւոր
մը: Ամէն Հայ ունի այդ ուխտը՝ խօսուն
կամ լուս:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Բայց քարիվը կամ
ուխտադնացութիւնը Հայրենասիրութիւն
չէ, ինքնասիրութիւն է:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ինչո՞ւ, Ձե՞՛ որ Հայ-
րենիքի հանդէպ տածուած սէրէն կը բը-
խի:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Այո՛, բայց իբրեւ
գրաստիչի կացողը երկրին բնութիւնը,
յիշատակարանները, կառուցումները
տեսնելով դժուանակութիւն մը կ'ուզէ
ունենալ՝ Հայաստան այցելելը գրաստի-
չի մը վերածելով...: Կամ՝ հոգեկան
բաւարարութեան մը:

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ատիկա կարելի չէ
ընդհանրացնել:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Վրդովուած) Ոսկի
ու ծախու իրեր տանող-բերողնե՞րը...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ոչ միայն իբրեւ Հայ,
այլեւ իբրեւ մարդ հոգեպէս ազարտած
ու պախարակելի տարրեր են անոնք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Իսկ անո՞նք, որ, հա-

զիւ ոտք կոխած, կը ծնրադրեն եւ հողը
կը համարեն: Գալով ինծի՝ տունէ,
տեղէ, դործէ դատ՝ զաւակներուս եւ
թոռներուս պարագան ալ կայ: Տղաքս
ու աղջիկս սանկնանկ Հայերէն մը կը
խօսին: Թոռներս բա՛ւ չեն դիտեր...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Իսկ ատիկա ներելի
չէ, Պ. Տիտանեան:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մենք Ծրանսա ծնած
ենք ու Ծրանացի ենք, Հայերէնը ի՞նչ
օգուտ ունի մեզի, կ'ըսեն: Բի՛չ կը վի-
ճիմ իրենց հետ: Միբայ կ'արիւնի,
բայց...

ՕՀԱՆԵԱՆ.— Իսկ դուք բացատրած
չէ՞ք, թէ ծնած են Հայ Տիտանեանի՝
տանը մէջ: Եւ ջանացած չէ՞ք ձեր տունը
Հայաստան մը ընել:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Զարմացած) Տո՛ւ-
նը... Ի՞նչպէս...

ՕՀԱՆԵԱՆ.— Փռքերի՛կ, չորս պատերու
միջեւ Հայաստան մը:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Ընդմիջելով) Կ'ը-
սէք թէ Հայ էք:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Կը կասկածի՞ք:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Կը հաւատամ: Բայց
ըստ ձեզի՝ ի՞նչ կը նշանակէ Հայ ըլլալ:
Մեր օրերուն մահաւանդ, երբ գոյութեան
կոխ կը մղենք կրկին: Ամէն մէկ Հայ
տուն խրամ մըն է: Աղիւս մը: Եւ այդ
աղիւսներն են, որ, օր մը, կցուելով ի-
րարու, պէտք է կազմեն ամբողջական
Հայրենիքին ամբողջական Հայութիւնը:
Ինչո՞վ կը պաշտպանէք այդ խրամը:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ատիկա քեզի է լուկ
եւ ոչ թէ իրատես մտեցում: Ամէն Հայ
իւր պայմաններուն ենթակայ է ստաւել
կամ նուազ չափով:

ՕՀԱՆԵԱՆ.— Բայց ամէն Հայ պատ-
րաստ է ջանալ ո՛չ թէ առաւել, այլ նը-
ւա՛ղ չափով ենթարկուիլ այդ պայման-
ներուն:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ի՞նչ առաջ ճշդում մը
կ'ընէիք Վարդանանքի մասին: Համա-
ձայն եմ, որ Հայ միալու կոխ մըն էր
ան: Ոմանք թերեւս անխորհուրդ խո-
յանք մը նկատեն զայն՝ հազար հինգ հա-
րիւր տարի ետք հեռուէն դիտելով եւ ոչ
թէ քննելով: Բայց ամէն մէկ դէպք ի՛ր

պայմաններում, թե՛ մթնոլորտին, զայն վարող ու անկէ վարուող ժողովուրդին նկարագրին համաձայն պէտք է դառնալ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Անշուշտ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ժան ա՛նրք ու վաթ-դանանք... Ասոնք կրնան յիմարութիւններ կամ առնուազն արկածախնդրութիւններ նկատուիլ Անգլիացիի մը դատումով: Բայց՝ բնակիսն, չա՛տ բնական են թէ՛ Ծրանասցիին եւ թէ՛ Հայուն համար:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այդ օրերուն ե՛ս եւս պիտի կուռէի վարդանի կողքին...

ՕՀԱՆԵԱՆ.— Իսկ այսօ՞ր... Աւարայր մը չէ՞ նաեւ մեր այսօրը: Սարտաբապատը Հայաստանէն ներս կը շարունակուի, Աւարայրը՝ Հայաստանէն դուրս:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Իրար անցած) Ի՞նչ, կրկի՞ն խաչ ու զէնք...

ՕՀԱՆԵԱՆ.— Ո՛ւր, Բայց կրկի՛ն յորժանքին զէմ պատուար: Կրկի՛ն հայ մը՝ նալու յամառութիւն: Եւ՛՝ աւելի՛ ծանր պայմաններու տակ, քան՝ 451-ին: Ժի՛շդ է:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այո՛:

ՕՀԱՆԵԱՆ.— Յրուած՝ Փիզիքսպէս, հետեւաբար՝ անհամեմատելի չափով աղաւթ՝ անհամեմատելի չափով մեծ ու կլանիչ ուժերու զէմ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ժիշդ այդ պատճառով ալ՝ կ'ըսենք, թէ պէտք է կառնինք այժմու Հայաստանին:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Վրդով) Բայց ինչո՞ւ կ'ենթադրէք կամ կ'ակնարկէք թէ ուրիշներ զէմ են այդ կառնելուն: Ձեր ու մեր միջեւ տարբերութիւնը կառնելու մասին չէ, այլ՝ կառնելիքի՝ մասին:

ՕՀԱՆԵԱՆ.— Նաեւ՝ կառնելու կերպի մասին:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Դառնալով Օհանեսեանին) Ինչպէ՞ս... Կերպի՞ մասին:

ՕՀԱՆԵԱՆ.— Այո՛, հետուէն գիտելով, ծափահարելով ու զովարանելով՝ նոյնանալ այդ Հայրենիքին, թէ օժանդակելով աչ միայն անոր ճիգերուն, այլև

անոր խուլ ալլ յամառ պայքարին՝ ընդդէմ զայն կլանելու փորձերուն:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Տե՛քար մը կը Եկա-տէիք զայն, չէ՞:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Այո՛, անշուշտ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Իսկ մե՞ր տէքարը... կը հրաժարի՞ք անկէ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Բայց ըսի թէ՛ ինչո՞ւ: ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ահա այդ գիշուշն է, որ կը հակադրուի մեր Հայաստանա-սիրութեան: Վարչաժեւը, զրկանքը, պայմանները եւ կազապարը խտացուած են այդ գիշուշին մէջ: Հանգիստ կեանքի մը բոլո՛ր պայմանները ապահոված՝ կը հրճուիք Հայաստանի բարդաւանդու-մով՝ բազկաթոռին մէջ անգլաւորուած՝ անկիւնի հետադեմիլը դիտելու եւ զը-ւարճանալու ձեւով...:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ձեւին մէջ թերեւ ճիշդ, բայց խորքին մէջ անտրդար մե-զագրանք մըն է այդ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Լսեցէ՛ք: Ուշեւոր, ազատ տուպարէղի մարդ, մտաւորական, զրոզ, արուեստագէտ՝ բոլո՛ր անոնք, որոնք արտասահման հասած Հայաստա-նասէրի մենաշնորհը տուած են իրենք ի-րենց, պէտք է անխնայ խարաղանդին...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Բանալով աչքերը) Խարաղանդի՞ն... Ձե՛ր կողմէ՞...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ո՛ւր, Հայաստանի իշ-խանութեան կողմէ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ինչո՞ւ:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Որո՞վ հետեւ...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ձեռքը օդին մէջ շար-ժելով եւ օտփի ելլելով) Կը հասկնամ, թէ ի՞նչ ըսել կ'ուզէք (թերթերը կը գը-նէ սեղանին անկիւնը: Կը հանէ քաշկի-նակը: Կը սրբէ թակտին քրտինքը. յե-տոյ՝ զանկը: Լայն շուռն մը կ'առնէ: Պան մը կը մնայ լուս: Ակնարկը կը պը-տըտցնէ երեքին վրայ: Հագիւն խորէն ծորազ յայդ մը, որ ե՛ւ տրամաբխիմ ե՛ւ հրճուամբ է, կը պայծառացնէ աչքերը: Հայնացքը սեւեռած պատուհանէն դուրս) Այո՛... Այո՛... Փարիզ, Նիւ Եորք, Գա-հրէ, հեռաւոր Ձիլի թէ Յունաստան... Տուն-տեղ, դուստներ, անոնց օսպաղան, ազատ ապրելու բնատուր բաղձանքը

եւ... եւ Հայաստան... Աւերակներէն
յառնող երկիր մը... Բար ու քարքա-
րուա... Յիշատակարաններ... Հազա-
րամեակներու անցեալ մը, որ թէ՛ ող-
բերգութիւն է, թէ՛ փառք... Արտաշէս,
Մեծն Տիգրան, Տրդատ, Ս. Մեսրոպ,
Վարդան... Յետո՞յ... Հիմա՞... Ման-
րանկար հայրենիք մը... Մեյրամասնի-
կը նորատիպ կայսրութեան մը... Տի-
րապետող տարր եւ տիրապետող լեզու...
Եւ դարձեա՞յ նո՞յն հարկադրանքը՝ ու-
ղի՞ն պահելու, Մեծաքանիւնը պահելու,
ա՞ղբ պահելու... (Յանկարծ դառնալով
Դանիէլեանին) Ի՞նչ կը հարցնէիք...
Հայաստան... Պետութիւն... Բայց,
ի՞րապէս անողոք է այդ հարցումը:
Մանաւանդ անոր պատասխանը... (Բար-
ձրը) Եօթն անգամ գետնին տակն անց-
նին քաղաքական դիտութիւնն ալ, իր
տօքթօրան ալ... (Դիմելով աղաղակե-
լով) Ո՛հ, ո՛հ, ի՞մ մէջի Հայը չ'ուզե՛ր,
չի՛ կրնար մեկնաբանել... (Ծիծելով
կատրօնը) Այո տեղի Հայը, ներկայ պայ-
մաններուն մէջ, աւելի շատ սիրտ է,
քան միտք... Եւ ես կ'ուզեմ աւելի շատ
սրտի՞ս ծայրին ունկնդրել, քան մըտ-
քի... Կը հասկնա՞ք... Դուք պէտք է
հասկնաք ասիկա...

ՕՀԱՆՆԵԱՆ.— Կը հասկնա՞ք...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ո՛հ, չէ՞ք հասկնար,
չէ՞ք ուզեր հասկնալ... Եւ ա՛յդ է պատ-
ճառը, որ կասկածանքով կը նայիք ինծի
եւ ինծի նմաններուն... (Պահ մը) Ե-
տակաւոր ժողովուրդ ու պատմական Հայ-
րենիքին եւս մնացորդացը... (Դառնա-
լով Դանիէլեանին) Այո՛, գիտե՛մ, գի-
տե՛մ թէ ի՞նչ է ձեզ մտահոգողն ու ընդ-
վըդեցնողը... Բայց, գիտե՛մ նաեւ թէ
մեր զարաւոր տառապանքներէն, մեր
անհայտելի կորուստներէն, մեր յուսա-
լըքումներէն ետք, Հայաստանի մը գո-
յութեան, հայ պետութեան մը գոյու-
թեան ո՛չ թէ համոզումը, այլ հաւատքը
պէտք է մեղի...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Բայց ոչ թէ պատ-
բանքը...

ՏԻՏԱՆԵԱՆ.— Նո՛յնիսկ պատրանքի
մեւով, նո՛յնիսկ ինքնախաբէութեամբ,

նո՛յնիսկ ուստերէն տառերով «Առաջնի»
մը... Եւ առանց մեկնաբանելու կամ
դատելու՝ պէտք է օրօրօրեօրէն անո՞վ՝ օր
մը թերեւս կլանուելու յորձանքէն, կամ
իրական տէրը դառնալու համար մեր
երկրին... Այո՛, գոնէ՞ այդ մնացորդա-
ցին... (Արագ շունչ կ'առնէ: Պահ մը:
Մեղմ) Ներեցէ՛ք, եթէ...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Խնդրե՛մ, հարկ է
որ ըսուին այս բոլորը:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Զիտ կը մեղադրէք,
թէ չեմ փոխադրուիր Հայաստան: Եւ կը
կասկածիք հայրենասիրութենէս:

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ո՛հ, թերի կը դըռ-
նեմ զայն:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Եւ կը գտնէք խառ-
դանելի՛ դովող, բայց, մատը մատին
լզարեողը: Մինչ արմատախիւներ ենք
ամէնքս ալ: Արմատախիւներ, սակայն,
որոնք օտար հողերու վրայ հեղահանէ
աւելի կ'արմատանան, քանի տարիները
կ'անցնին՝ աւելի՛ ճիւղաւորելով ու խը-
րելով իրենց արմատները: Իսկ ամէն մէկ
Հայ, որ զես հայ եմ՝ կ'ըսէ կամ կը մը-
տածէ, չ'անդրադառնար, թէ իր այդ
նախադասութեան ճեպն ու ճշգրտը իրա-
րու դէմ պայքարի մէջ են ու պիտի ըլ-
լա՞ն տեւապէս՝ քանի հեռու է Հայրեն-
իքէն...

ՕՀԱՆՆԵԱՆ.— Ճիշտ է:

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Բարձր) Բացէ՛ք Հա-
յաստանի գոնէրը: Փոխեցէ՛ք ռեժիմ-ն
ալ... Ստեղծեցէ՛ք ազատ երկրի մը պայ-
մանները...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Ժպտում) Ըսել կ'ու-
ղէք՝ վերցնենք ճիւղո՞ւն...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Նայելով ժպտում)
Այո՛, եթէ դադրի իսկ այդ ճիւղո՞ւնն,
քանի՞ տոկոսը տուն-տեղ, գործ ու, ի
հարկին, զուսակներ թողած պիտի մեկ-
նի Հայաստան... Ասիկա իրողութիւն
մըն է երկու կողմերուն համար ալ...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Ընթարտութենէն շատ
հեռու չէ՞ք դժբախտաբար:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ընթարտութիւնն իսկ
է... Բւ կը տեսնէք, թէ մենք զեռ են-
թակայ ենք Ապրիլեան եղեռնին...

ՕՀԱՆՆԵԱՆ.— Համաժամ՛յն եմ:

ՏԻՏԱՆԵԱՆ.— Դեռ կը կրննք ու պիտի կրննք անոր հետեւանքները... (Դաւիթեանիմ) Եւ մենք, մեր կարգին, խաղաղանի արժանի կը գտնենք ձեզ, որովհետեւ կը քննադատէք Հայաստանը...

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Ընդմիջելով) Ո՛չ թէ Հայաստանը, այլ՝ իշխանութիւնը։ Դիտումնաւոր մեղադրանք մըն է այդ, որուն ստեղծած շփոթումին ենթակայ էք նաեւ դուք։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Ձեռքերը քանդելով) Ես ու ինծի նմանները ենթակայ ենք ոչ թէ այդ շփոթութեան, այլ զգացումի մը, որ մեզի թոյլ չի տար մտածել այդ մասին... (Աղաչական) Ա՛յս է, զոր պէտք է հասկնաք դուք... Հայրենասիրութիւնն է, Հայրենաբաղձութիւնն, իրականութիւնը անստեղծ եւ բաղձալին իբրեւ իրականութիւն ընդունելու տկարութիւն... Ձե՛մ դիտելով, չե՛մ ուզեր դիտել... Եւ թերեւս այդ է պատճառը, որ մենք ալ, մեր կարգին, կը թերահաւատանք ձեր Հայրենասիրութեան...

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Իսկ փոխադարձ այդ թերահաւատութիւնը, որ երկուստեք ու հասարակագէտ մեզ տղարող Հայրենասիրութեան արդիւնքն է, մեզ կ'անջատէ իրարմէ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Մտածկոտ) Ըսել կ'ուզէք, թէ աւելի շատ արդիւնքին ենթակայ ենք, քան թէ պատճառին։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— (Կ'իյլ ռաբի։ Կը մօտենայ Տիտանեանիմ։ Ձեռքը կը դնէ սեղանի վրայ)։ Համոզարտ ու մտերմիկ) Ձեզի նմաններուն ու մեզի նմաններուն Հայաստանի հանդէպ տառած սէրերու մասին փոխադարձ թերահաւատութիւնը չէ, որ մեզ կը բաժնէ իրարմէ։ Այլ՝ ձեր թերահաւատութիւնը՝ առանձնապէս ու միայն Հայ Ժողովուրդի ուսերուն ու կարելիութիւններու մասին, եւ այն տեսակէտը, թէ մենք կը կարօտանք յենաբանի մը, որմէ դուրս փրկութիւն չէք տեսներ։ Եւ ձեր թերահաւատութիւնը՝ միշտ այդ յենաբանին հանդէպ։ Մենք կը պայքարինք ո՛չ թէ Հայաստանին, այլ՝ ձե՛ր իսկ որակումով ուսերէն տառերով զննողներին դէմ...

ՏԻՏԱՆԵԱՆ.— (Հայեացքը կրկին աւելիելով պատուհանէն դուրս։ Մտածկոտ) Կ'ըսէք թէ նաեւ այսօր կը շարունակուի Աւարայրը...

ՕՀԱՆԵԱՆ.— Այո՛. թէեւ ուրիշ մեծ տակ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Ուրեմն, ձեր կարծիքով, այսօր եւս ես Վարդանանց կողքին չեմ... (Դաւանելով Օհանեանիմ) Բայց երէկ դէմ առ դէմ էին կռուող ուժերը. իսկ այսօր խառնուած են իրարու։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Աւելի՛ դէշ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մի՞թէ...

ՕՀԱՆԵԱՆ.— Անո՛ւշտ։ Եւ ասկէ՛ է, «Խորհրդային Հայաստան» որակումով իրարու կցուած այդ երկու բառերէն է, որ Հայաստանին ու Խորհրդայինին ընդհանրութիւնը ստեղծուած է ձեր եւ մեզի նմաններուն մէջ։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Տարօրինակ... (Միշտ մտածկոտ) Ո՛րքան թերթագրութիւններ կան... Եւ աւելի շատ թերթագրութիւններ քան՝ հակադրութիւններ... (Յանկաբար) Պէ՛տք է մտածենք, երկուստե՛ք պէտք է մտածենք այս բոլորի մասին... Կ'երեւի հարկ էր բան մը պարպել՝ բանով մը լեցունելու համար...։ Այսուհանդերձ ներողամիտ եղէք, եթէ ահաճութեան պատճառեցի ձեզի։

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Հաճոյք թէ ահաճութեան՝ փոխադարձ է։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Մի՞թէ այս աստիճան անծանօթ ենք իրարու...

ՕՀԱՆԵԱՆ.— Ոչ թէ մենք, այլ՝ մեր մէջի Հայերը։

ՏԻՏԱՆԵԱՆ.— Թերեւա... (Անգրադարձ) Այո՛, այո՛, մեր մէջի Հայերը։ (Կը վերցնէ քերթերը անդանէն եւ կը դնէ ամուրիս սակ։ Ձեռք տալով միտք Սեբուսի) Տեսութիւն։ (Կ'իյլ դուրս)։

ՕՀԱՆԵԱՆ.— Այս տարբերակի հարկաւորման մը, զոր հարկ է լրջօրէն ուսումնասիրել։

ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Այո՛, բարդոյթ մը կ'ապրի։

ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Կայ նաեւ հակադրութիւն մը Հայր Տիտանեանին եւ Հայ Տիտանեանին միջեւ։

ՕՀԱՆՆԱՆ.— Միայն անո՞ր մէջ, Ո՞ր քան լատ են հայրն ու հայրը իրենց մէջ ներս հակադրած Տիտանեանները...
 ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Գիտէ՞ք ինչ, ես համաձայն եմ, որ ասոնք ըլլան ու մնան Հայաստանապետներ՝ նոյնիսկ Հայաստանն ու խորհրդային իրար հետ շփոթելու դեմով։ Բայց մնա՛ն։ Երկրէն ներս մեծ թիւով կուսակցականներու եւ երկրէն դուրս մեծ թիւով Հայաստանապետներու հոգեվիճակը նոյնն է։ Խորհրդայինի մասին կը խօսին, բայց Հայաստանի մասին կը մտածեն։
 ՕՀԱՆՆԱՆ.— Եւ այդտե՛ղ է, Դանիէլեան, անկախութեան զաղափարին

հիմնական խարխոհներէն մէկը։ Երէկ մեզմով զօրացաւ այդ զաղափարը։ Այսօր՝ իրմով ուժով ենք մենք... (Նայնալով ժամացույցին) Օ՛ր, ութին քառորդ կայ... Ուշացայ։
 ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Երթա՛նք։ (Զեռք կուտան Սարգիսեանին)։
 ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Կիրակի առաւօրեէ հէ՛ջ վիլլա։
 ՕՀԱՆՆԱՆ.— Տեսնե՛նք, ցտեսութե՛ն։
 ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Յետուրթի՛ն (կ'ելան դուրս)։
 Կ. Մ.

ԻՐԻԿՈՒՆ ԷՐ

Անձայն ու ցուրտ իրիկում էր.
 Փռք էին դնաւ...
 Ձէին գիտեր
 Ի՞նչ խենթ կատակ էր կ'ըմէին...
 Երկու փոքրիկ,
 Մէկը տալայ, միւսը աղբիկ,
 Անտառին մէջ երկու սիրուն մամուկ էին
 Եւ կ'այրէին
 Ուրախացած
 Աշնամ դեղին տերևները հաւաքած։
 Անձայն ու ցուրտ իրիկում էր.
 Ձէին գիտեր
 Ո՞րք կը տամէր կատակն իրենց.
 Խաղով այնքան տարուեր էին
 Ձէին գիտեր ինչ կ'ըմէին.
 Ձէին գիտեր
 Թէ կրակն այդ երգիք
 Երբեք
 Պիտ'ըմարէր,
 Թէ կրակն այդ պիտի վառէր
 Օր մը շարիչ իրիկումներ։

Անձայն ու ցուրտ իրիկում էր...
 Կը դիտէի, հեռում կեցած,
 Երկու մամուկ խաղով տարուած,
 Իրենց վառած կրակին դէմ
 Այնքան անփոյթ, զուարթադէմ,
 Երկու թեթեւ, ամաշտ սրտեր
 Եւ որոնք դեռ
 Ձէին գիտեր
 Թէ
 Զրօսամբն այդ կրակէ
 Երբոր փշէր հովը խելաւ
 Ինչե՛ր, ինչե՛ր պիտի վառէր
 Երբոր տխուր գիշերը գար...
 Ձէին գիտեր —
 Փռք էին դնաւ։

Բայց ո՞վ կ'ըսէր
 Թէ այդ խաղը գեղեցիկ չէր
 Երբ անձայն, ցուրտ իրիկում էր...

Փարիզ

ՌԻՐԵՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ



Ձեզիկ տեղ էր ամայի,
Տեղ չգտնելի, ծովաբազի ու ճայի,
Ձեզիկ տեղ էր կարծես մահաւան ու վայի:
Լեբան ոտք էր եւ ծովու ամփ,
Վա՛յր մը կարծես մահաւանտաի: -
Կար թզենի, որքաւտունկ,
Կար թունաւոր այնտեղ սունկ,
Լեռնածառքի մը խորունկ:

Ըսա՛ծ էր մէկը պատմութեան հեռուէն,
Եւ գա՛լ ճգոված այդքան սասկօրէն,
Որ խորշն այս ծովու
Սելեւկեաններու,
Կալած էր դարձած միայն մեմութեան,
Միայն լռութեան
Ու կրիաներու:

Ըսա՛ծ էր մէկը՝ - թող քու արիւնքդ մտնէ միշտ ծով,
Եւ իժերն իբրեւ թռչնի եին լուցիկի՝
Քարերդ վառեն իրենց մարտերուն թէժ կրակներով:



Ոգի՛ կար այնտեղ, կաք անեծքի հոտ,
Հին դարէ եկած, եկած մնացած
Բա՛ն մը կար այնտեղ, քան մը անծանօթ -
Թախծոտ, գայրացկաւ ու քաներ գիտցող,
Ջաննա՛ք չպատմող,
Կտոր մը եին օդ,
Պատմութեան կուրծքի կտոր մը մրմունջ:



Մովածոցին մէջ կապոյտ,
Հեռու ինկած մեծ ճայներէն աշխարհի,
Քանի մը տուն հայ կար լոկ,
Բարի՛, խաղա՛ղ ու խելօք:
Կ'ուտէին հաց, խոնարհ թուգ,
Մարդե՛ք էին տխրայայտ,
Կ'աշխարհային արտութիւն:



Ի՞նչ քախծառ պատկեր,
Պատկեր լացարեր...
Որոհալ դարեր, ու սերունդ, սերունդ՝
Իբրեւ սուրբ սմունդ,
Հող ու արժայի կարօտը սրտիդ,
Սահմանէ հեռու եւ յայտնի վտիտ:
Հիմ տապ տեսնել ու հիմնալ այդպէս,
Քամին՝ տեսնել, ամպեր՝ սեւադէզ՝
Ու ցրուի՛լ այդպէս,
Հի՛ն ատգի պէս:
Տեսնել միշտ ալիք
Եւ օտարութեան սեւ արիւնքուն դառնալ խաղալիք:

Օտար բանի դէմ - ամսպա՛ռ օտար -,
Արի՛ւն մը հայտ, արիւն մը յամառ՝
Եւ ո՛չ մէկ հնար...



Ձեզիկի ծովուն գարշաւազ արիւն,
Մեծ ու սպիտակ Մինա ժայռը կար,
Ու տաք մզով ուրիշ ոչ մէկ խոր:
Մարտի մրրիկին ու ցուրտին մէջէն,
Ամէն կէս-գիշեր,
Այլ մարդերէ մարդ մը տարրեր,
Այդ ժայռն ի վեր կը մագլցէր:

Իր արիւնին կամէն փախչող
Ու չկրցող,
Մարգարէին նման Յովնան
Հայ մըն էր ամ:

Ձեր գար լաւ օդին, չէր գար ցերեկին,
Իբրեւ մարդ յօգտեալ, իբրեւ մարդ տարրեր՝
Ամէն խաղաղ ծով ճանին կը սեպէր,
- Մ'զլո՛տ, մահաբեր -:
Ու կ'աւեր, կ'աւեր,
Արեգա՛կը դեռ՝
Որ կը յօժարի
Մուռ աշխարհին դէմ, մնալ չի՛նք, բարի:

Կա՛ր գար միշտ մութին, կա՛ր գար միշտ ցուրտին,
Կա՛ր գար փոքրեկին,
Յաւով մը խորունկ, խռնո՛վ մ'ահագին:
Թէ չմարնչէր ծովը դրացի,
Ձեր կարծիք գայն խոր, մեծ ու խելացի.
Խորհի՛ք կը փութար, կը պառկէր հիւանդ, Հայն այդ արտառաց

Ու կ'ըսէր այցի եկած խեղճ մարդոց.
 - Եղբայրիւմ է, ջուր ըլլալ շատ, աղ ունենալ, չափեկոծիլ,
 Հոգարտօրէն չգալ ցամաք ու չկռուիլ.
 Կե'րտը պահել տալէն բոքր աղ, տալէն ալիք,
 Հրաշալիք:

••

Աշխարհի մէջ կան շատ մարդիկ մեծամարմին,
 Որ երբ խօսին, որ երբ գործեն, որ երբ շարժին,
 Կ'ըլլան փոքրիկ, կ'ըլլան ճղճիւմ, կ'ըլլան չնչիւն:
 Տա'ք են առաջ, շուտ կը պաղին,
 Ու թէ ուժով՝ կ'ուժաբափին,
 Թէ գեղեցիկ՝
 Կը տգեղանան, կը տափալկանան:
 Առաջ հսկայ՝
 Անհունօրէն կը լմնանան...

••

Եռվէն հեռու, խրճիթին մէջ, խաղաղ տունն,
 Պատիկ պատիկ ու լմնցած բանի նման Մեսրոպ Քեռին,
 Երբ ծով երբոր կէտ-գիշերուայ անհուն ցարտին,
 Հետգիտէ կը թանձրանար,
 Կը բարձրանար, կը գորանար
 Ինքնիւր աչիւն.
 Այիքներու եւ մթուքեան ճամբուն վրայ,
 Յառաջացող մարդ մը կ'ըլլար ան աժդահա:

••

Պատիկ էր ան, այո', պատիկ.
 Օտարութեան ծովափներու Հա'յ մը պատիկ,
 Բայց երբ խորհէր ծովու մասին, ժայռի մասին,
 Անցեալի հին բանի մասին,
 Զինք հալածո'ղ իր արիւնէն երբոր փախչէր
 Ու ճախաղէր՝
 Կ'անէր, կ'անէր,
 Անձ մը կ'ըլլար, Մեսրոպ մ'անհուն, բազմապատիկ:
 Կը մայէր ան խորակին դէմ ինքզինք փշրող երբ ալիքին՝
 Կը հրճուէր.
 Ուժ կը դիզուէր իր մերձիկն անօրինակ,
 Ու ինք եւս ժայռ մը կ'ըլլար հոն անխորտակ:

••

Գեղեցիկ չէր խաղաղ տունն Մեսրոպ Քեռին,
 Կը շփեղնա'ր սակայն իսկայն, երբոր մթին՝
 Որոտային ամպեր վերէն,
 Որոտային երբ ալիքներ ծովուն խորէն:

Երբ պայքար կար յաճում կեանքի,
 Յանում արդար ընդդիմութեան ու թռիչքի:
 Իսկ այն ատեն
 Ի՞նչն էր կարծես երկնիմենքու սև գայրաշէն
 Երկիր իջած կայծակն հսկայ.
 Ոչ թէ ամպէն, այլ իր կուրծքէն պարկար պիտի կարծես կրակ,
 Հրդեհեկու այն աշխարհիս գործերը ծուռ, կեանքն անորակ:

••

Հեմիկուէյի ծերուկէն վեր մէկն էր կարծես Մեսրոպ Քեռիմ,
 Վրան խաւար ու ամայի, ու դժնդակ այդ ծովափին,
 Ուր ան կ'երթար ու կը կարգար՝
 Երկնի, երկրի բարբ քանկում,
 Տաքերու մեծ իրարանցում, համախմբում,
 Խորունկ յուզում:
 Ան հոն կ'երթար դիմադրութեան ժա՛յռ կարդալու,
 Ծովային մեծ բարկութիւնն'ը ուսանելու:

Ըրած իմզգիմք տիեզերքի խորունկներում անհուն մուլին,
 Կ'արձագանգէր ազգ էութեամբ շրջապատի ծո՛ղ մոռումչին.
 - «Օգ մը խոնարհ, օգ մը անշարժ՝
 Ու կը մեռնիմ.
 Ես հով կ'ուզեմ, քանզի, կտաղի, պայքարավարժ.
 Մորի՛կ կ'ուզեմ որ գիտ սարսէ.
 Որ գիտ տանի,
 Որ բարձունքի գաւառներում մէջ գիտ մարզէ:

- «Լոյս մը բարի, քայլ ու բարշա՛մ՝
 Ու ես չկա՛մ.
 Ես կը պաշտեմ մութը պատռող կայծակներում լոյսը յստակ,
 Ծայլ որսերում ու մտքներում վրայ շաշող լոյսը մտրակ:

- «Պէտք է շարժիլ, պէտք է մերժել,
 Փնտռել յաւեռ, ուզել յաւեռ ու չընդունիլ:
 Յաջողելով, ընդունելով ու միքեկելով,
 Կ'իյնանք տակաւ թակարդին մէջ ամէն ինչի դէմ դաւադրազ
 Անէութեան:
 Ստանալով, գոհանալով ու գիրնալով՝
 Պիտի մեռնիմք, հմար չկա՛յ:
 Պիտի ըլլանք հագար գէշ բան,
 Յետոյ անբա՛ն:

- «Երբ օրն է քիչ, օրն է տժգոյն,
 Գէշ թաղքի պէս կը պատտռեմ ես գայն իսկոյն,
 Ու կը ճատիմ, կը լուսագրեմ անհուն երազ,
 Կ'ազգընցնե՛մ անցեալս ամբողջ, կ'ընեմ Արա,
 Ապա, ապա,

Տեղատարափ սէ՛ր մը իբրեւ աստուածագեղ Շամիրամայ՝
Եւ կը տեղամ, եւ կը թափի՛մ ամօր վրայ...

- «Դիւրին ուղի եւ ի՛նչ տեսայ,
Դիւրին ուղի եւ կը մերժե՛մ.
Լոյս ու արիւն վէպի նման,
Դաժա՛ն, դժխե՛մ,
Կը ճախըմարեմ իմ պապերու եւ նեղ ճամբան:
- «Նեղ ճամբաւ մէջ պապերըս իմ
Ի՛ժ ճգմեցին.
Անոնց նման պէտք է քաշել ճեղ անցքերէ եւ ճգմել օճ
Աշխարհախոց:
Վախկոտ ռաքեր թող փափկօրէն, զգուշօրէն,
Միշտ գորգերու վրայ քայե՞մ,
Ոտքերըս իմ պիտի փնտռեն
Նեղ անցքերու քարտարաւտի օճ հրեղէն:
- «Եւ հարուստ եմ անգերազանց ճիշդ այն ատեն՝
Երբ բա՛մ չկայ,
Միայն ու միշտ՝ երբոր սո՛վ կայ:
Եւ այն ատեն
Սնունդներու ծովածաւալ ու կատաղի սովին ընդդէմ
Ախորժակիս հրամանով արքայական,
Իմ անուանիս կ'արձանագրեմ անցեալին հետ եւ ապագան,
Հազերն ամբողջ, ծովերն ամբողջ,
Երկնի, երկրի հացերն ամբողջ,
Աստուածներուն միշտ խոստացած ու չտուած դրամսն ամբողջ:
- «Ո՛վ պիտիք, ո՛վ հեռանալ, ո՛վ անյայտներ, աղի, լեղի
Ու կատաղի,
Երբ կուշտ եմ եւ, ազատ մըն եմ սարսափելի,
Պնակներու ու ճարպերու առջեւ ինկած մտան լկտի ցուրտ մեռելի:

❖

- Կը մտմտայ գիշեր ատեն, ժայռին վրայ, գիշերամուկ Մեսրոպ ֆեռին.
- «Եմած մարդուն, ծո՛վ մը ուրիշ, ծո՛վ մը մբիմ, ծո՛վ մը խօրին՝ -
Պէտք է մրրիկ, ալեկոծում, անվերջ ցատում,
Պէտք են բաներ, միշտ սկսող, չվերջացող բաներ անհուն:
Պէտք է տեսնէ լայն Աստուծոյ, հեղե՛ղ հեղե՛ղ,
Ու չկարծախ.
Ջայներ գաղտնի երբ զինք կամչեն, ճակատագրի կանչով անհեղ,
Պէտք չէ՛ խուլմայ:
- «Հարկ չէ մնալ.
Արիւնով մը հիմ ու յամառ՝
Հարկ է երթալ:

Բամ մը խորունկ, հոգիիս մէջ ծովաջուրի նման ազի,
Պէտք է ընէ մեկնումըս բոքր ու կատաղի:

- «Ոչի՛նչ նայնն է,
Ալիքնեւը կու զամ, կ'երթամ, կը մարտնչին,
Կ'իյնան սաստիկ ու սաստկօրէն կը բարձրանան,
Կամփով վերջին.
- «Փոքորիկներ սէր կը կապեն հեռուներու հեռու համբուն
Ու կը սուրան իրենց սէրով համբաներէն աստուածներուն:
Ձմեռները արեւ կ'ատեն, կ'ազդեն դաշտ, լեռ ու անտառ,
Ատիւսը համ ու մալսանքի ձիւնակոյտով ցրտալայծառ:
- «Հարկ է սիրոյ վերք ունենալ,
Հպարտութեան ու հաւատքի վերքեր ուրիշ,
Վերք անցեալի, վերք ներկայի,
Վերքեր խորունկ ու սեւամիշ:
Առանց վերքի ու խայթածքի
Եւ վերքին դէմ առանց ցասկո՛ւս հակադարձի
Բա՛ն չի շարժիր, կ'ոչնչանայ:
- «Ծովն այնպէ՛ծ, ցասմազդորդ,
Անշղագճո՛րք՝
Ազն է կիզիչ ու կիրքն անհուն խորախորհուրդ մէկ ծարաւի,
Որ կը պոքկայ, կ'առատանայ, կը տարածուի:
Հշմարտութեան ցաւումն է ան, այսպէս արթուն,
Այսպէս մոռլլ, այսպէս գիտում,
Չարին հանդէպ, ու կեզծիքին, ու քծիքին՝
Ընդդիմութեան իմֆզիմֆ պատմադ, չպատմաւո՛ղ աստուածութիւն.
- «Պէտք է սիրել, սիրել անվե՛րջ,
Խառնարանն այս ամենամեծ խառնակութեան,
Գիշեր է երբ ու կը կռուին դէմ յանդիման,
Երկին, երկիր,
Արարչութեան անկարեկիր,
Ուժերն համայն:
- «Պէտք է սիրել,
Սիրել ծովն այն, մութ, անբնտլ.
Ամենամեծ վերքերն հոս են, բոցերը հոս,
Ջիրար սիրող, զիրար մերժող,
Ջիրար զնգող ու ստեղծող ուժերը հոս:
Ջուրերը հոս, ամպերը հոս, մրրիկը հոս,
Ու մութը հոս, կայծա՛կը հոս:
Այս ամենուն ընդդիմադիր մեծ ժայռը հոս,
Հեռու երկրի, ժողովուրդի փշուր նմայշ,
Կաթիլ արիւն՝
Որք հա՛յ մը հոս...

- «Ի՞նչ պաշտելի խառնակութիւն.
Կ'երկրպագե՛մ դժուարագոյն լինելութեան տիեզերքին,
Ի՞ր երկունքի՛ն.
Ու չընկրկող, մոռնի կամփին:
Կ'երկրպագեմ՝
Ընդհանուրին ընդհանրակա՛ն խառնակութեան,
Ընդհանրացնո՛ղ ըմբոստութեան:
 - «Զիրար անվերջ հոս կը ցնցեմ,
Կ'արթնցնեն ու կը հնձեն:
Զիրար անվերջ կը կազդուտեն, կը պահանջեն, կը ձախացնե՛
Ու կը քնքե՛ն:
Խաւարին մէջ բռնաբը մէկ ոճրագործ են ու կը ապամենն,
Բռնաբը մէկ աստուածն իրենց հո՛ս կը ստեղծեն:
- ❖
- Մեծարալ Գեորգի,
Խառնակութեան Եւ Ժողովի կարծես ոգին,
Հագւո՛յ լոյսի սկզբնական ու անվախճա՛ն ցերեկորդին,
Կը մտածէ բաներ լեցուն, բաներ յստակ,
Տարօրինակ.
- «Մարդն ու Աստուած, կրտսեր ու մեծ երկու եղբայր,
Պէտք է չէ՛ մոգնի, ըլլան աւագ, մանր ու անծայր,
Թափուիմ, բռնիմ,
Հեղեղեղեղ անհետ կորչին:
Պէտք է ըլլան յաւիտ անկալ, յաւիտ ուժեղ, յաւիտ արթուն,
Յաւիտ արդար, յաւիտ խեղուն:
 - «Ի՞նչ խեղճուկ բան, մեղմելի՛ք բան,
Չորս պատ, տանիք
Ու ընտանիք.
Տո՛ւն քէ դամբան:
Օրեր տափակ, օրեր տխուր
Կեանքիս վրայ սպասումի արժա՛ն մտնուն:
 - «Զեվի՛կ, Զեվի՛կ,
Օտարութեան տնակ նեղիկ,
Ու տխրութիւն տարուէ տարի բազմապատիկ.
Վտանգներու ծո՛ղ ծո՛ղ եկող արիքին դէմ,
Յոյսի իրրեւ միակ աստուած
Ժայռո՞ղ ցցած՝
Հայ մարդերու անհո՛ւն Զեվի՛կ...
 - «Կարգացի գիրքեր, ու բուրբեր, բուրբեր.
Ու պատաստեցի, Զեվի՛կ, չե՛ս յիշեր.
Մովը քափեցի խեղճութիւն անքիւ
Ու մանր մարդու ամէն հին հաշիւ:

147-2000

- «Ով մահ կ'ուզէ, թող տուն շինէ ակիճներէ ու մրրիկէ հեռու, հեռու,
Հեղեղներէ հեռու, հեռու,
Սոսկումներէ անվերջ հեռու.
Թող ոչխարի նման գիրտուկ խոնարհութեամբ
Փարախ մտնէ ու մակաղի:
 - «Ով մահ կ'ուզէ, ստոյգ, անդա՛րձ,
Թող չունենայ գոյն, որօշակ, ամֆմութիւն,
Հաւատքի վայր, մեծ բաներու եւ գոյութեան պահակատուն:
 - «Ով մահ կ'ուզէ,
Թող իր սրտին առջեւ չընէ ինքզինք անվերջ հաշուցուցակ,
Գաղափարին դիմաց չըլլայ ցարեւն հացի նման ճերմակ:
 - «Ով որ կ'ուզէ մեռել իբրեւ ու հարպերու ծրար իբրեւ գալ ու ապրիլ,
Եւ օրն ի վար գտն'շտ իբրեւ միշտ գլորուիլ
Երկինքներով, աստուածներով, անյայտներով այս կեանքին մէջ՝
Թող ամենակատ, թող անբռնցք
Եւ թող անկուրծք մարդ մը ըլլայ,
Կնիկ ճարէ եւ արտադրէ
Գերդաստան մը տխուր բանի իբրեւ մանրէ:
- ❖
- Առտուան շէմ, ծովէն դարձիմ,
Կը մտնէր տուն Մեհրապ Քեռին,
Ու կը գրէր իր ինքնութեան թուղթին վրան
Գիրն իր ներքին նուիրակա՛ն ընդդիմութեան.
- «Մե՛կ մըն եմ ես, խառնակ ու խոր,
Երկինք մըն եմ, խառնակ ու խոր,
Օտարութեան ավիանին շէմ
Ժա՛յռ մը հզօր...

ԵԳ. ՊՕՅԱՃԵԱՆ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

Մեծամասնութիւն ԲԺԻՇԿԸ

Երեկոյեան դէմ, Սեպուհ, Փարիզի մէջ դասած առաջին բարեկամս, Սէն Միշելի մեր յաճախած սրճարանը եկաւ եւ յայտնեց, որ բժիշկ Լիպարիտ Ասումեան իր նոր տունը մեզի կը սպասէ։ Քիչ մը թուղթ խաղալու եւ խմելու խայծեր ալ յիշատակեց։ Բժիշկը մեզի չափ կը սիրէր այդ զուարթ կուրը։ Ելանք ճամբայ։ Իջանք Սէնի ուրիշ ու սկսանք փնտրել վարձարան։ Սէն Միշելէն հազիւ քուտորդ ժամուայ հեռավորութեան մը վրայ կը գտնուէր բժիշկին տունը, Անաթոյ ծրանս անունը կրող գետափին կից ու գետին նայող դիւրքի մը վրայ։

Նորէն ախկոծուածի մէջ էր Սեպուհ, ալեկոծումը իր մնայուն վիճակն էր։ Արեւելքի եւ Արեւմուտքի կեդրոնական քաղաքները տակնուվրայ ըրած ժենախրոմով ազան էր ան, որ վերստին կանգ առած էր Փարիզ եւ այժմ կը պեղէր քաղաքական գիտութեանց խրթին տոմարները։ Կ'աշխատէր եւ կ'ուսանէր միաժամանակ։ Կը մասնակցէր ժողովներու, կուսակցական աշխատանքներու, իր յարաշարժ մարմինն ու եռացող հոգիին բոլոր կարեւորութիւններով։ Իր անձին իրական պատկերը շարժումներու մէջ կը անանէր միշտ, կռիւներու եւ անդամաւոր հեռանկարներու մէջ։ Կը աւելորէր երբեմն, կը ցնցուէր յետոյ։ Կ'երա-

զէր արժանաւոր արարքի մը մէջ բուժել անվատաւկ մնացած իր վիրաւոր երիտասարդութիւնը եւ լճացումէն զուրկ պալով՝ բոցակէզ զոհողութեամբ մը ցայտեցնել ցեղին նոր լինելութիւնը։

Սեպուհ մեծ համարում ունէր բժիշկին մասին, ուսանողութեան շրջանին բարեկամներ եղած էին եւ կը պահէր իր բարեկամութիւնը։ Ուրիշ ոչ մէկ անձի հանդէպ այդքան բուխ տեսած եմ զինք։ Մեր բոլոր հանդիպումներուն առիթ կը գտնէր անոր մասին խօսելու, կը շեշտէր նկարագրին պարզութիւնը, արեւմտեան մաքրութիւնը։ Մայրաքաղաքին մէջ նուաճումներ արձանագրած անձ մը, բարի, զոհաբերող, մարդասէս, մարդ։ Կը յիշեմ Սեպուհի ջերմ հոգեւոր խօսքերը, երբ առաջին անգամ, հանդէսի մը ընթացքին ներկայացուց ինծի գիտութեան այդ մարդը։

— Մանօթացէք, — ըսաւ ժպտուն, — բժիշկ Լիպարիտ Ասումեան։ Իր ներկայութեան դժուար թէ մահը համարձակի մօտենալ քեզի։

Բժիշկը, ինքն ալ, Արեւելքէն եկած եւ վիրաբուժական բարձրագոյն վկայականին տիրացած էր եւ բժշկապետի հանգամանքով այժմ կը վարէր երկրին Կարմիր Ուռի մէջ հիւանդանոցին գործողութեան բաժինը։ Ունէր իր սեփական

զինիքը փանթոմ հրապարակին վրայ եւ համարաւ խնդրած էր ժամանակը:

— Ստանձինն մարդասիրական հաստատութեան մը շտաբ գործ կը տեսնէ, — կը պնդէր Սեպուհ, — զիւրեք ցերեկին խառնած, գիտութիւնը բարութեան ընդհերացած, ամէնուն մօտ վազող, ինքզինքը ամէնուն բաշխելու պատրաստ հոգի մը: Ի՞նչ տաղանդով ուրիշ մը միջոցներ պիտի գիտէր, մինչ ինք կ'ապրէ օրը օրին:

Կը քաշէինք աին ի վար:

Օրը Կիրակի էր, եղանակը՝ զարուն, վայրը՝ Փարիզ, կեանքը՝ յորդ, բայց Սեպուհ այդ բոլորին մէջ չէր ապրեր ու չէր ձգեր, որ ես հեռանամ իր մթնոլորտէն, մտնեմ այս միջավայրին մէջ, զգամ Կիրակին, շնչեմ զարունը, տեսնեմ Փարիզը: Ձէր ձգէր: Բժիշկին մասին իր խանդավառ խօսքը հազիւ աւարտած՝ միտքը սկսաւ ուրիշ ուղղութեամբ սաւառնիլ: Հայաստան, արտասահման, կուսակցութիւններ: Իր մտասեւեռումը, մասնագիտութիւնը, կիրքը: Քինախնդրութեամբ կը նայէր աշխարհին եւ սխալալ սպրռումով մը կ'արտասանէր բոլորը: Արդարութեան պալատին դիմաց Ղլայնացաւ յանկարծ: Փօն տէպ'Արի վրայ հայհոյեց Թուրքին ու Համայնավարին: Աչքերը լուսնի յառնելով՝ բորբոքեցաւ ծաղուլթեան նշաններ ցոյց տուող հայկական արեւին դէմ ու զատի կանչուած մեր երիտասարդութեան ուղղած իր ամբաստանութիւնը չէր աւարտած տակաւին երբ հասանք:

Բժիշկը՝ դրան սեմին կանգնած ինչոր պատուէր մը կու տար Տօնիէրժին, ջովը՝ խարտեալ ու նիհար տղայ մը, «Փան Բլոտ»: Բժիշկական համալսարանը նոր աւարտած ֆրանսացի մը, որ Ատոմեանի ձեռքին տակ կ'աշխատէր ձեռք ձեռք իր առաջին փորձառութիւնները: Միասին բարձրացանք տախտակէ աստիճաններէն:

Դուրսէն՝ գորշ դանդաւած մըն էր տունը, բայց հինգերորդ յարկին վրայ պալատ մը քաղաքացաւ մեր առջեւ: Պարզ մարդու համբաւ վայելող տո'ն էր ա-

ռիկա: Նայեցայ Սեպուհի աչքերուն: Զուարթութեամբ կը դիտէր Թան առարկաները: Պատերուն վրայ դիտեղուած էին նկարչական Հին ու նոր նմոշներ, գորգ եւ յախճապական ճոխ անօթներ: Վառարանի եզերքներուն եւ սենեակի անկիւններուն պատմական շրջաններ վերակենդանացնող թանկագին առարկաներ, արձանիկներ, սուրբեր, զարդեր: Դժգոյսով երկու աչքս սեղմեալ տիւաներ դուրս ելին, շրջապատուած՝ թիկնաթոռներու շքեղ անձնակազմով մը: Մրահին ուրեւելեան անկիւնը իշխանական պիւֆէ մը կ'իյնէր եւ հոս ու հոն ճաշակաւոր կամքի մը ենթարկուած պղծութիւն սեղաններ: Շրջապատէր էր լոյսերու առատութիւնը մանաւանդ, իւրաքանչիւր առարկայի վրայ ինկած տարբեր երանդ մը, պայծառ, նուաղուն, արիւնոտ, իւրաքանչիւր առարկայի նկարագրին հետ հաշտ լոյս մը:

Չսիրեցի մարդու վրայ վերէն նստող այդ շքեղ հիւրարարչը, անոր անբռնելի, կարգապահութիւնը: Կարծես մէկը Զարդարեանի արձակը սկսաւ կարդալ նոյն պահուն, մէկը սկսաւ Շիրազի բանաստեղծութիւնները կարդալ: Կեանքը խեղդող ցուրտ պերճանքի մը տպաւորութիւնը առի ու սիրտս սիրեցաւ: Բան մը տեղէն շարժելու, բան մը գետին նետելու, անկարգութիւն մը ընելու կենսատու հնարաւորութենէն զուրկ մարդ մը թուեցայ եւ ինձի, գերի մը: Այս գիտակցութիւնը անհանգստացուց դիմ, ոտքի ելայ անմիջապէս, մօտեցայ պատուհանին եւ քաղաքին ծանօթ մայրերը ստուգելու հաճոյքին յանձնեցի ինքզինքս պահ մը: Մերթ ընդ մերթ կը տեսնուէր Սէնի պղտոր թաւալումը, դիմացը Թիւրլըի պարտէզն էր ու ձախին՝ ամբողջութեամբ կը տեսնէի Քօնքորտը, պորտին՝ Օպելիւքը, ասպետական փրանսայի կրկնալայց այդ կողովուրտը:

Կը նայէի քաղաքին, երկնամերձ շէնքերուն ու երախտադիտութեամբ կը յիշէի իմ բնակած տուներս, հոս, հեռուն: Դիրքեր, թերթեր, սեղաններու եւ արթունքի իրարանցումը, մոխրամանե-

բու եւ օտարճի դաւաժներու բախումը, անոնց ընդհանուր բովանդակութիւնը, ընդհանուր բովանդակութեան յատկանիշը, անկախութիւնը: Կրնամ միթէ օտարեր տեղ մը ապրել կ'ըսէի իւրովի, կրնամ այս պայտաին մէջ ապրել, կըրկոնեցի նորէն տեղս վերադառնալով:

Սեպուհին ոտկածած խանդավառութիւնը հետզհետէ սկսաւ նուազել մէջս եւ Ստոմեանը շուտով տեղաւորեցի հոգիս մէջ թիւղնեբուն յատկացում անհրապոյր անկիւնը: Միշտ պատճառ մը պտտւած է, որ չսիրեմ թիւղնեբուն, դառնանամ, դիմեմ դառն մտածումներու: Ամէն օր հիւանդներու հետ, անձկութիւն, տառապանք, մահ՝ ամէն օր: Ինչպէ՞ս կրնայ մարդ մը տեւաբար այդ ամէնուն հետ ըլլալ ու ժարդ մնալ: Երբ զեղեցկութեան մը յուռէ աչքերը՝ աղաւաղաբ ակնարկի մը յաճախեալը չի՞ պղտորել իր տրամադրութիւնը: Բաժակ մը պարպած ատեն՝ հիւանդի մը կերպարանքը չի՞ խորտակել իր ուրախութիւնը: Երբորդի մը անյուշութիւնը չի՞ խուրկել իր քրտնը: Ինչպէ՞ս կրնայ բժիշկ մը կենեքի այս հարսանիքին մէջ շնորհաւորութեան օր ապրել: Երբեք չեմ համոզուած որ թիւղնեբուն կրնան պահել իրենց հոգեկան հաւասարակշռութիւնը: պահպանելը սրտի քարացում մը կը մատնեն, մասնակցութեան պակաս մը, իրենց անունին շուրջ վերապահութիւններու խտացող սրեւէ պատճառ:

Կը նայէի թիւղնեբուն եւ կրբմն զուրկ վորճէի մօտեցնել իրեն, մօքիս մէջ կազմուած այս թանկարժէք իրերուն վրայ դուրդուրացող դէմքը: Հակասութիւն մը կար երկուքին միջեւ: Ինքնուրուշ մարդու աբու շնոր մը կար այս մէկուն վրայ, մինչ այն ժխաը զեղչուած առնակաւորութեամբ կը ներկայանար մըտքիս լկտեն ատեն, փողկապի մը հանդուրժելի վայելչութիւնն իսկ ինքնիք վրայ աւելորդ համարող չորքաւ խառնուածք մը միայն կը տեսնէի դիմացս եւ իր հետաքրքրութիւնները հաճոյք կը պատճառէին ինծի: Սեպուհին հետ կը խօսէին հայաշատ կեդրոններէ հասած վերջին

լուրերուն մասին, կարօտով ու տենդով: Կարօտով կը նայէր հեռուներուն, կը թուէր թէ հոգին հոն էր, տօներու մէջ, ակումբներու առջեւ, Հայէպի եւ Պէրբուրի Լոռադեռող կեդրոններուն վրայ, աւելի հեռուն, հեռուն...

— Պրանսերէն խօսեցէք որ ես ալ հասնակցեմ, — դժգոհեցաւ Ժոտո:

— Տղան սկսաւ ձանձրանալ, սկսինք յիշեցուց Սեպուհ:

Հիւրանոցին ձախ կողմէն բացուող նրբանցքէ մը տալիացանք եւ մօտանք որբիչ սենեակ մը: Կեդրոնը դրուած էր թղթախաղի յարմարութիւններով օժտուած սեղան մը, վրան՝ Սէնթի Եղիշեքի Սիքստէլը: Նայեցայ բացուած էջին ու կարդացի ընդլուծուած պարբերութիւնը:

Il ne s'agit point de moi,
Je ne suis que celui qui trans-
porte.

Ստածումը փոխանցեցի Սեպուհին:
— միշտ ինքը, ներքին անձը, — ըսաւ ժողով:

Ուրախութիւն մը ողողեց մարմինս: Շուրջս ամէն ինչ պարզ էր ու սրբելի: Աթոռները, լոյսերը, մօխարամանները: Ոչինչ կար աւելի, աւելորդ, վանողապահ ոչինչ կար:

— Աղատեցանք վերջապէս, — բացաղանչեցի ուրախ:

— Ինչէ՞ն, — հետաքրքրուեցաւ թիւղնեբուն:

— Գեղեցկութեան բռնութենէն:

— Մի մեղադրել, տօքթօր, կենեքը անցած է փողոցին կամ սրճարանին մէջ,

— միջամտեց Սեպուհ խնդալով:

— Գոնէ առարկաներուն զոհ չեմ ուղեր գարձնել իշխանութիւնս, — շարունակեցի, — զգացիք հարկաւ, որ անհանդիստ էի քիչ առաջ: Անկախօրէն խօսելու կամ շարժելու փոխարէն՝ մտքորթիտն վրայ հսկելու կամ կարգը չխանդարելու նեղացուցիչ դերի մը մէջ: Չսիրեցի այդ պայտաւը: Կը ներէք այս քանդուին տնկերութեան համար:

— Ապրումդ խորթ չէ ինծի, — ըսաւ թիւղնեբուն պարզութեամբ, — այն մասին

տէրը չեմ համարեր արդէն ինքզինքս, կը համարեմ հիւրը: Պաշտօնական մարդոց տրուած տուրք մըն է ան: Ես հոս կ'անցընեմ իմ ժամերս:

— Եկուր, — անուռն տալով ընդհանուր մեզ մէկէն Սեպուհ, — անակնկալ մը կայ հոս, եկուր:

Պատէն կախուած նկարներուն կը նայէր: Մօտեցայ: Առաջին նկարին տակ տեսայ բժիշկին ստորագրութիւնը: Երկրորդը եւս իրեն կը պատկանէր, երրորդը դարձեալ կը կրէր իր ստորագրութիւնը:

— Նկարչութիւն ալ կ'ընէք, — հարցուցի ուրախ:

— Ես ինծի համար, — յարեց խռով, — երբեմն պէտք կը զգամ ինքզինքս ըզբաղցնել: Հին սիրոյ մը շարունակութիւնն է:

Սենեակին ընդհանուր պարզութեան հետ՝ հոգին տեղ մը պարզելու այս բնականութիւնը արագացուցին սրտիս մէջ ի նպաստ իրեն սկսած համակրանքին աճումը: Աւելի մեծ շահագրգռութեամբ սկսայ դիտել նկարները: Մէկը մանաւանդ, որ կ'անձնաւորէր երեք անսովոր կերպարանքներ, իրարու մօտ, իրարու խառնուած երեք սարսափելիներ, մոխրագոյն ու մութ մթնոլորտի մը մէջ իրենց ազդու կերպարանքները ցցած կատաղի երեք մարդեր: Նոյն շարժումիքներով, նոյն թշնամիին դէմ կռիւի ելած ապստամբներ թուեցան ինծի, հեղեանքով, դայրոյթով ու անդարձ որոշումներով առաջացող անողոք ըմբոստներ:

— Տօթթօր, — ըսի, նկարը մատնանշելով, — այս մէկը անուռն մը ունի:

— Ոչ: Ինչո՞ւ:

— Տեսանելի մասէն անդին կը թուի, թէ բան մը տեղի կ'ունենայ: Կ'ուզէի պարզապէս իմանալ:

— Երեք հիւանդներ են, ներկայացան ինծի նոյն օրը, ետեւ ետեւ: Դիւրին չէր նայիլ անոնց կեանք հայցող աչքերուն եւ կրէլ՝ ոչինչ կարենալ ընելու ցաւը: Եկայ տուն եւ հակեցայ այս նկարին վըրայ: Քանի մը վայրենանէն այս ձեւը

տուաւ: Մինչոցը այս է: Մնացեալը չեմ դիտեր: Անուն չունի:

Ամէնքս ալ նկարին կը նայէինք, լուռ՝ ամէնքս ալ: Ինծի թուեցաւ, թէ քիչ տառի ինծի թելադրուած բառերը սկսան աւելի յոտակնալ, զոյները աւելի ցայտուն դարձուցին անոնց աղաղակները, հեղեանքը, գայլոյթը, ըմբոստութիւնը՝ թերեւս Աստուծոյ դաժան զօրութեան դէմ, գիտութեան թերութիւններուն դէմ թերեւս:

Հիւրասրահէն մեզի հետ բերուած բաժակները ուխտիով լեցուեցան կրկին: Առաջինը թերեւեցաւ սեղանին: Բաժնուեցանք երկու խումբի: Սեպուհ կարգադրեց, որ զպտրժուաները՝ միասին ըլլան: Ես եւ ինք նստանք դէմ դիմաց: — Պրոլետարիատի կամքը անողոք է ու հարուածը՝ հատու, — ըսաւ Ֆրանսուրէն ու խնդրէն ձեռքը զարկաւ սեղանին:

Կը խաղայինք տնեղ խաղ մը, Ֆրանսուրէններուն Պլօքը, այսուհանդերձ Սեպուհ դարձեալ կրէք դրած էր գործին մէջ ու կ'աղմկէր շարունակ, կ'ոգեւորուէր բախտով, կը հայհոյէր բախտին, բախտը ապարդիւն դարձնող իր ընկերով, ինծի: Իր յարձակումներէն խոյս տալու համար կը ջանայի կեղբոնանալ, բայց չէի յաջողեր, միտքս զբաղած էր Ֆիլմ մը վերականգնանքներու շարժարանքով: Պէյրուսի մէջ տեսած էի Ֆիլմը եւ Մոբենիթի թաւառը՝ թարգմանած էի անոր անդերէն խորագիրը: Ի՞նչըրը Պրութին բժիշկի մը դերը կը խաղար անոր մէջ եւ կ'անձնաւորէր իր բարեկամը չկարենալ բուժելու տառապագին տապալակ մը: Կը յիշէի իր նուիրումը, ջանքը, ջրանախոր հակառու: Ի գործ դրուած զոհողութիւնն ու պիտութիւնը փոշիացընող վէրքին յաղթական յառաջխաղացքը եւ բժիշկին մռնչիւնները: Բարեկամին համար ու բարեկամին դիմաց մարտիրոսացող այդ անհաճախողի մարդուն ողբերգութիւնը մեծ դիմաց մը չափ տուաւ պաւորած էր դիմ եւ այդ դիմքը ահաւատիկ նորէն կը բացուէր տոջեւ:

— Տօթթօր, — ըսի միջնաբարի մը, —

եթէ յաջողէիք բժշկել այդ հիւանդները, դարձեալ պիտի փորձէի՞ք գծել այս նշանակաւը:

— Այդ մասին իրապէս չեմ մտածած: Հաւանաբար ոչ:

— Անշուշտ ոչ, — շարունակեց Սեպուհ կտրուկ, — նկարը բացառութիւն չի կրնար ըլլալ: Երջանկութիւնը պատմութիւնն չունի:

— Հաւանաբար ճիշդ է հաստատումը, — յարեց բժիշկը, — երջանկութիւնը ինքնաբաւ է ու ամուլ: Անիկա բնաւ մը դու՛մ չէ տուած ինծի: Զիս առաջնաբողոքը երջանկութեան ծարաւը եղած է միշտ:

Հարցումի պէտք չղգացի այլեւս: Պատմութիւնը պարզ էր այլեւս: Հազարուոր մարդոց երջանկութիւնն պարզեւած, հազարաւորներու օրհնութիւնը վայելած մարդն էր բժիշկը, բայց այդ բոլորէն եւ ոչ մէկը արտայայտութիւն դրուած էր մօտը, երջանկութիւնը ձգած էր հետուն, օրերուն մէջ եւ կեանքին մէկ տխուր պահը, ուրիշներուն եւ իր անյոյս վիճակէն առաջացող խռովքը յանձնած էր գոյներուն: Տարօքինակ էր, բայց մարդուն հոգին էր դարձեալ, այդ անձանօթը, այդ մշտնջենական ծարաւը, երջանկութիւնն փնտռող եւ գտնուած երջանկութեամբ չյազեցող այդ առեղծուածը, որ կը ձգէ թաւայող կեանքը, կեանքին դուարթ ընծաները եւ կը ձեռնարկէ տխրութիւններ յաղթահարելու տաժանելի ու բարդ գործողութիւններու:

— Խաղին ուշադրութիւն ըրէ, — սաստեց Սեպուհ, ինծի վերադարձում մեր տկարութիւնը:

Ըրի, Բախտը օգնեց մեզի: Շահեցանք միջոցով:

— Վերջին անգամ եթէ փիլիսոսադայի, արդիւնքը տարբեր պիտի ըլլար, — ըսաւ բժիշկը:

— Բժիշկ, բժշկեա՛լ զանձն քո, — կատակեց Սեպուհ:

Բժիշկը թարգմանեց ըսուածը փրանսացիին: Զուարթ էին երկուքն ալ:

Երկուքն ալ կ'ախորժէին ազմուկէն, սըրամտութիւններէն:

— Ի դէպ, — դարձաւ Սեպուհ ինծի լրջացած, — բնաւ մտածած ես այդ շատ չարչարուած պատուէրին այլաբանական իմաստին մասին:

— Ոչ:

— Մտածէ՛ ու կը գտնես քէլ առաջ նկարին համար ըրած հարցումներու լրիւ պատասխանները: Խօսքը Փիլիսոսական ցաւերուն չի վերաբերիր, կը վերաբերի ներքին տառապանքներու բուժման: Ուժերու ունեւարարութիւնը տագնապի մը կը մասնէ մարդ էակը, կը ստիպէ, որ փնտռէ իր լրացուցիչ մասը եւ ի միութարութիւն տանջուած հոգիին՝ կը ծնին գեղեցկութիւնները, բանաստեղծութիւնը, երգը, նկարը: Եղածը այս է: Քաշէ՛:

Հոնքի չու՛մ մը կար դուրսը, դարունը վայրկեան առ վայրկեան կ'ընդարձակուէր ծառերուն վրայ ու վարը՝ գիշերային լոյսերուն մէջ հարսնացած՝ Սէնը կը շարունակէր իր մշտնջենականութիւնը: Սեպուհ մինչեւ Փօմ Նէօֆ ընկերացաւ ինծի եւ նոյն կայարանէն, ստորերկրեայ ճամբով մեկնեցաւ տասնըչորսրդ թաղամաս: Տուն մտնելէ առաջ՝ զետափին դանդաղելու ամէնօրեայ հաճոյքս աւելի սաստկութեամբ զգացի: Քուն չունէի, գիւրգի մը կամ սպիտակ թուղթի մը վրայ հակելու տրամադրութիւն չկար: Կոթնեցայ կամուրջի Նօթըրլամ նայող բաղրիքին ու ջուրին մէջ լոյսերու կազմած նկարչութիւնը դիտելով, երկարօրէն մտածեցի այն միւս նշանակարին մասին, անոր ծննդեան պատմութեան, կեանքի առեղծուածներուն, բըժշկութեան, բժիշկին մասին, երկարօրէն, դառնութեամբ, քաղցրութեամբ:

Գ. Ս.

ՇԻՐԻՄ. ՃՊՈՒՌԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Հասկերուն մէջ գտայ մեռած քեզ օր մ'ամբան,
 Լուսանեցեզ ու բոցավառ միջօրէով.
 Դուն շնչասպառ եղած էիր նըւագելով.
 Կաթիլ մը ցօզ կը փայլփլար կուրծքիդ վըբան:

Դեռ երգիչները ոսկեճայն շուրջըդ էին,
 Եւ կակաչներն աստուածընծայ կըրակի պէս
 Կը վառէին խաբոյկներով արեւային
 Ակօսներուն մէջ որաները դէզ առ դէզ:

Ես կանգնեցի քեզի շիրիմ մը պարգունակ,
 Ճամբուն եզերքը սօսափուն սօսիին տակ.
 Քար մը փոքրիկ՝ որ թեթեւցած էր անձրեւէն,

Հասկ մը եղաւ պատանփ.՝ հետն ալ վարդ մը վայրի.
 Ու մեղմիկ սիւֆն ազօրֆի պէս լացաւ զազումի
 Երգիդ համար՝ որ լուծ էր յաւերժօրէն:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Հայրենասիրական ԿԱՏԱՎԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Մինչ այս դէպքերը տեղի կ'ունենային Մարտինելլիներու տունը, Լեւոն կը ջանար լուծուած մը գտնել իր կացութեան:

Մարտինի յայտնած էր ամուսնանալու իր որոշումը: Նիւթակտն դժուարութիւնները, հանրային կարծիքը, Թագուհին — անանցանելի պատուարներ չէին:

Կար մեռած մօր պատգամը:

Նախ քան մեռնիլը, մօրը հանդիսաւոր խոստում էր տուեր, որ օտարի հետ պիտի չամուսնանար: Մայրը յստակ ըսած էր.

— Վերականգնէ հօրենական օճախը:

Երգում մը անքակտելի էր: Մօրը մահը զայն նուիրագործած էր: Ինչպէ՞ս եղաւ, որ առանց խորը մտածելու, առած էր Մարտինի հետ ամուսնանալու որոշումը: Այնքան հապճեպ կերպով:

Ձինք մղողը եղած էր իր պատուախնդրութիւնը: Աղջիկը հրապուրած էր ամենամտերիմ դրութիւններու մէջ, գիտնալով՝ որ զինք խննթի նման կը սերէր:

Հիմա չէր կրնար լքել զայն իր բախտին: Վայելչութեան ուժէ մ էր: Իր դաստիարակութիւնը, ցեղային աւանդութիւնը, բարոյական ըմբռնումը՝ թոյլ չէին տար: Որպէս այր մարդ, իրեն կը մնար աղջկան կողքին կանգնել: Այդ էր ուղիղ կեցուածքը:

Այժմ, Նոյն այդ առնական պատուախնդրութեան զգացումը զինք դրած էր անելի մը առաջ: Իր հանդիսաւոր երգումը, սր մահուամբ իսկ անքակտելի դարձած էր: Իր սիրեցեալ մօրը միակ աւանդը:

Մտածեց Վարդանի, ուսուցչին խօսիլ, խորհուրդ տրուել: Սակայն վստեղ միտքն իսկ ինք պէտք էր լուծէր ինքիւր: Իրն էր, ոչ ոք կրնար օգնել իրեն:

Մայրը բնաւ չէր մոռցած: Ժամանակը չէր կըցած մեղմել ցաւը եւ յիշատակը: Միայն մակերեսը քարացած էր: Մայրը միշտ ներկայ էր հղած. ան էր, որ կատալարած էր զինք կեանքին մէջ: Յանկութիւնը զինք պահ մը կախարդեր էր: Ապրելու հաճոյքը զինովցուցեր էր զինք: Նայել էր ու չէր տեսեր, լսեր ու մտիկ չէր ըրեր:

Անկարելի էր երգումը դրժել: Այդ մասին ոչ մէկ կասկած: Միւս կողմէ, Մարտինի տուած խոստումն ալ չէր կրնար հտ առնել, Մարտին յաճախ ըսեր էր, որ եթէ չէր զինք, պիտի չուզէր ապրել: Աղջիկը հզօր

քննադատներով էակ մըն էր եւ բուն արարքներու ատակ: Ձէր կրնար իր բախտին լքել: կրնար ողբերգական հետեւանքներ ունենալ:

Ընդգծեցաւ ճակատագրին գէտ: Անիծեց ծնած օրը, իր ծագումը, սէրը, երգումը: Ինչո՞ւ մտած էր անլուծելի յանձնառութիւններու, տակ: Երդումը ի՞նչ էր, ի վերջոյ: Միթէ տոնը պայմանադրականութիւններ չէի՞ն: Արուեստական կապանքներ, որոնք միայն երեւակայութեան մէջ գոյութիւն ունին: Կեանքը ի՞նչ առնչութիւն ունի պայմաններու հետ: Կեանքը պարզ է, ուղիղ, առողջ ու կոյր մինչեւ իսկ:

Մարիան, որուն հանդէպ ինքզինք այսօր արտական կը դառար, չէ՞ր գիտեր թէ ո՛ւր կ'երթար: Ինք չէր, որ ինկած էր իր ետեւէն: Ո՞վ զինք մզած էր դուրսիցներու մէջ: Ինքն էր, որ միշտ տեղի էր տուած, քաջալիքած գինք: Ստար աղջիկները աւելի ազատ են սեռային խնդիրներու մէջ: Յետոյ, ի՞նչ վստահութիւն ունէր, որ ամէն ինչ գիտակցաբար չէր, զինք ծուղակը մզելու համար չէր: Եւ, ահա յաջողած էր:

Արդեօք դուր չէ՞ր, որ ինքզինք կը շարժէր: Կը մոռնար, ուրիշ տղայ մը կը գտնէր ու կը մոռնար: Իրեն համար սիրոյ եւ կիրքի սահմաններն ուլ յատակ չէին: Մարմնակներ հզօր էր եւ ցանկութիւնն էր, որ զիրենք իրարու կապած էր: Ձէր կրնար տոնաց կիրքի երեւակայել աղ-լիկը, կամ նստել հետը, երբ միասին էին:

Ան էր, ա՛ն էր յանցաւորը: Ծիւղ է, ինք խիղարներ էր, բայց ան միշտ քաջալիքներ էր գինք: Եւ եթէ գերագոյն աղէտը չէր պատահեր, պատ-ճառը ինքն էր եւ ոչ Մարիան: Դեռ աւելի ցայտուն փառստ կ'ուզէր:

Աղջիկն էր յանցաւորը: Ուստի, իր պարտաւորութիւնը հոս կը վեր-ջանար:

Եւ սակայն, ինչ ալ եղած ըլլային պարագաները, ով ալ որ յանցա-ւոր եղած ըլլար, ինք, լեւոն Երկաթեան, տուեր էր իր խօսքը: Խօսքը ինքն էր, Իր խօսքին ետեւ պիտի կենար:

Եւ սակայն, նոյն առնչութեան մէջ էր մօրը հանգէպ:

Իր ընտանիքը անյիշատակ դարերու պատմութիւնը ունէր: Յաճախ մտածած էր այդ մասին: Ե՛րբ, ո՛ւր, ինչպէ՛ս, որո՞նք սկսան իր ցեղը: Առաջին հայրն ու մայրը:

Մայրը ըսած էր. «Վերականգնէ եւ շարունակէ հօրդ օճախը»:

Ահռելի պատասխանատուութիւն մը: Գոյրերն ու եղբայրները ջարդուեր էին: Ինք միակ վերապրողն էր: Անյիշատակ դարերու պատմութիւնը հիմա հասած էր իրեն եւ ինք պիտի շարունակէր դայն, կամ... պիտի վերջ տար յաւիտենական տեսողութեան:

Ահռելի պատասխանատուութիւն մը:

Ձմայրիկ, աստուածային առանձնաշնորհում: Իր ձեռքին մէջ բրու-նած էր կեանքի հրաւրը: Վայելչութեան, իմաստութեան եւ առնական հը-պարտութեան զգացում մը անցաւ էութենէն: Կեցած էր քառսին առջեւ: Մտեղծագործութեան շէմին:

Այս մեծութեան առջեւ, իր տաղնապը եւ զինք յուզող մտատանջու-թիւնները փոքրացան: Ետեւանը ստեղծագործելն էր, կեանքը շարունակելը: Ինքզինքը կրկնել ու փոխանցել: Յաւիտեան ապրիլ: Ոչ ոք, ոչ մէկ ուժ կրնար կեցնել կեանքը: Ով ծնած է, պիտի ապրի: Պիտի երթայ առաջ, ընդ-

լայնի, մեծնայ, համայնական դառնայ: Կրկնապատկուի: Հոգ չէ թէ տա-
րազը ինչ կերպաւորում ունի, հակա՛նը այն է, որ տրոփումը շարունակուի,
տարբեր գլխատաւորումի տակ, բայց՝ այնուամենայնիւ շարունակուի:

Կեանքը կը հպտտակի անդիմադրելի ձգողականութեան մը:

Կէս գիշերը անց էր: Տանիք ելաւ: Դիտեց ասաղերը: Անհունութեան
զգացումը աւելի շեշտուեցաւ: Հեշտագին բոյր մը լեցուեցաւ թոքերուն
մէջ: Զով հովը շոյեց մորթը, սարսուռ մը անցաւ:

Հիմա ի՞նչ էր ուղածը: Խոստումը Մարիային, խոստումը մօրը: Պայ-
մանադրականութիւններ, սահմանափակումներ՝ հաստատուած մարդոց
կողմէ: Այս հոռոշ, տիեզերական կեանքը ի՞նչ առնչութիւն ունէր վերա-
ցական ըմբռնումներու հետ: Դժուարութիւնը դուրսը, արտաքին աշխարհ-
հին մէջ չէր, այլ ներսը՝ մարդկային ներքին տարածութեան մէջ: Ահա թէ
ինչ ՔԱՅԱ մարդկային ներքինը առանձին աշխարհ մըն էր, նոյնքան անհուն
ու գերբնական, որքան տիեզերքը: Անհոտը իր այս աշխարհէն էր, որ կը դի-
տէր, կը դատէր ու կը զգար արտաքին տիեզերքը:

Ինչ որ ինք կը զգար, այդքան ալ անկարելի էր հսկողութեան տակ
չութիւն մը ունէր կեանքին հետ: Իր կիսնքն էր պարզապէս:

Աւապաւինեցաւ ժամանակին: Ժամանակը պիտի լուծէր ինչորքը:
Գուցէ ողբերգութիւնը վերածուէր կատակերգութեան մը, առանց ճակա-
տագրական պատահարներու, առանց մահուան եւ աստուածային միջամե-
տութեան:

Ժամանակն ալ գուցէ, մէկ այլ անունն էր կեանքին, որ միշտ կը
դտնէր իր ընթացքը եւ կը յաղթահարէր ամէն բան:

Ինչ որ ինք կը զգայ, այդ է ճշմարտութիւնը: Իր սեփական անձն է
ստիկա: Այս խորունկ հասկացողութիւնը այլեւս պիտի տիրապետէ իր դո-
յութեան: Ըճմարտութիւնը յարաբերական է, ինչպէս ամէն ըմբռնում: Այդ
իսկ պատճառով, յաճախ կարեւոր հարցումներ պատասխան չունին:

Քիչ առաջ, ներսը, կը մտածէր սեփական օճախի մը ազգային ըլ-
լայու բնոյթին մասին, չէր կրնար յստակ պատասխան մը ստանալ, որով-
հետեւ իր զգացածը ճիշդ էր իրեն համար: Այլ կերպ չէր կրնար զգալ եւ
ապրիլ: Ձէր կրնար իր անցեալէն խուսափիլ: Ձեւով մը իր կեանքը իրը չէր:
Կապուած էր պատմութեան: Արժանիները խորն էին թաղուելու եւ իր աւերը
անտես ու հեռաւոր ակունքներէ կու գար:

Ի հարկէ կրնար ամուսնանալ օտարուհիին հետ եւ երջանիկ բոյն մը
կազմել: Ոչ մէկ բնական օրէնք խախտած պիտի ըլլար: Իր հայութենէն
բան մը պիտի չփոխուէր: Բարդութիւնը կու գար իր զգալու եղանակէն-
իւր գաղտնարահութենէն, միջավայրէն, իր արեւնէն: Այդ պատճառով հը-
զօր էր տազնապը: Արտաքին որեւէ զժուարտութիւն չկար: Իր ներսն էր,
իր էութեան մէջ:

Իր հայութիւնն էր:

Այս հայութիւնը, որ կրակէ չապրիկի մը նման հագած էր: Իրեն հա-
մար ապրելու միակ կերպը այդ էր: Սքանչելի, անսովոր, խորունկ: Եր-
բեք պիտի չկրնար օրը օրին ապրող, սովորական, պարզ էակ մը ըլլալ:
Իր պայմանները, իր ապրումները, իր ժողովուրդի ոգին տարբեր էին: Ձէր
կրնար ամերիկացիի կամ ֆրանսացիի մը պէս ըլլալ:

Մարդիկ պատմութիւնը սխալ կ'ըմբռնէին, մարդիկ չէին կրնար իրերու խորը թափանցիլ: Մարդիկ օրինակ կը բերէին Միացեալ Նահանգները: Հոն, տարբեր ցեղի, լեզուի ու կրօնի մարդիկ եկեր, իրարու ձուլուեց, համեմատելի ու երջանիկ կ'ապրէին: Ազգային խնդիր չկար, բարեօրէն թիւն չկար:

Յիմարներ:

Այդ նոյն խառնարան Ամերիկան, այսօր, արդէն ազգ մըն էր: Մէկ լեզու, մէկ կենցաղ, մէկ ըմբռնում: Կապուած էր իր հողին, ինչպէս ունէ ժողովուրդ: Ամերիկան պիտի կոտէր ու մեռնէր — եթէ հարկ ըլլար — աճէն ինչի համար, որ ամերիկեան էր, որ իրն էր:

Ազգային զաղափարը պայմանադրական ըմբռնում չէր: Կը թուէր, որ մարդկային ցեղը տեղական միասն չունէր: Իր արմատները միայն որդ ժիջոց կրնային տարածուիլ եւ իր արմատներուն սահմանները կ'եզրափակէին իր հողեկան սահմանները: Հողին ժայնը:

Իրեն համար խորհրդածութեան նիւթ էր նահապետութիւնը: Ի՞նչ էր այդ անդիմադրելի ուժը, որուն համար մարդ հակը կրնար զերազոյն զոհոթութեան երթալ՝ զիտակցօրէն ու կամովին: Կրնա՞ր նման զոհադրծում անխնայ ըլլալ, կամ կեանքի նպատակներուն ներհակ:

Հայոց ժողովուրդը դարեւ չարունակ, անհատաբար կամ խմբովին, նահապետութեան էր իր ինքնութեան եւ անկախութեան համար:

Կրնա՞ր նման պայքար մը ապարդիւն ըլլալ եւ մաս չկազմել ընաշըրջական երեւոյթին: Ի՞նչ էր պատմութիւնը, եթէ ոչ ազգերու պայքարը տեւականութեան համար:

Մայրը իրաւունք ունէր:

Զգոհացած զպայքում մը կար սրտին մէջ, առաւօտուն երբ արթնցաւ: Կացութիւնը փոխուած չէր: Հարկ էր Մարիան տեսնել:

Յերեկը զոռւարութեամբ քաշքշեց եւ երեկոյեան հանդիպեցաւ Մորիային: Մարիան պատմեց ինչ որ տեղի ունեցած էր հօր եւ իր միջեւ:

— Քեզի չէի ըսեր... Կը նախազգայի զժրախտութիւնը...

— Ի՞նչ զժրախտութիւն, — հարցուց Լեւոն:

— Աւելի ինչի՞ կը սպասես... Հայրս դէմ է մեր ամուսնութեան...

Թերեւս անոր համար, որ քեզ չի ճանչնար...

Լեւոն պահ մը մտմտաց, ապա ըսաւ.

— Պէտք է տեսնուիմ հօրդ հետ:

— Դո՛ւն:

— Եւ: Ըսէ իրեն, որ վաղը երեկոյեան պիտի գամ գինք տեսնելու:

Աղջիկը վարանցաւ: Հայրը կրնար կոպիտ ըլլալ: Այն ատեն միանգամ ընդմիջեալ պիտի վտանգուէր իրենց սէրը:

— Թերեւս աւելի լուս կ'ըլլայ... Ամէն պարագայի մեր միակ յոյսն է... Խնդրեմ, մեզմ եզեր հետը, եւ հանդուրժող... Գէշ մարդ չէ, միայն յոր է արտաքուստ...

Յաջորդ օրը երեկոյեան ժամը 7.30-ին ատենները, Լեւոն կը բարձրանար Մարիայի տան վերելակով: Վերջին պահուն, վախի նման զգացում մը սողոսկեցաւ սիրտը: Զղջաց ժամադրութիւնը կարգադրած ըլլալուն համար:

Մարիան տուն դարձին, մօրը յայտնած էր Լեւոնի գալուն մասին: Մայրը պահ մը մտածելէ ետք.

— Թերեւս աւելի լաւ կ'ըլլայ, — ըսեր էր։

Հայրը, առաջին ուղթիւ, վճռականօրէն մերժած էր տղան տեսնել։ Սակայն, հետզհետէ, կնոջ եւ աղջկան թախանձանքին վրայ, — թէ այլ մը տաղարութեամբ, — համաձայնեալ էր։ Մարիան զարմանքով ընդունեց հօր պատրաստակամութիւնը։ Վստահ էր, որ պիտի մերժէր։ Եկեղեցի զնաց եւ ազօթեց։ Արտասուեց Աստուածածնի արձանին առջեւ։

Ժամը 7.30-ին դրան դռնը հնչեց։ Մարիան վազեց դուռը բռնալու, հայրը ճամբան կտրեց, ինք բացաւ։

Լեւոն կերթ կերպով ընդունուեցաւ եւ հրամցուեցաւ հիւրասենեակ։ Առաջին տպաւորութիւնը հղաւ իրեն ի նպատակ։ Մշակուած ու ազնուական դէմք մը ունէր։ Տիկին Մարիանիւ ժանտաւոր, շատ համակրեցաւ Լեւոնին։ Մարիան զգաց իր յաղթանակը եւ խայտաց։

Խօսակցութիւն մը սկսաւ ուրաշիւր։ Պրն. Մարտինելի երկար հարց ու փորձի մը ձեռնարկեց։

— Ձեր հայրենիքը ո՞ւր կը գտնուի։

— Փոքր Ասիոյ Հիւսիս Արեւելքը, Կովկասի Հարաւը։

— Օ՞ր... Հիմա հայրենիք ունի՞ք։

— Այո եւ ոչ... Այսինքն, օւնինք փոքր Հայաստան մը, որ Խորհրդային Միութեան մաս կը կապէ...

— Օ՞ր... այդպէ՞ս... Զարմանալի է, հայ... երբեք լսած չեմ... Եւ ըսէ՛ք, որ պատմութեան մէջ յառաջագէտ էի... Ըսի՞ք, որ լրագրող էք, ո՞ր թերթի...

— «Աղատամարտ»... Հայ օրաթերթ մըն է...

Տիկ. Մարտինելի մէջ մտաւ։

— Ձեր ծնողքը ո՞րքն են։

— Ոչ, դժբախտաբար։ Հայրս, քոյրերս, հղայորներս սպաննուեցան Թուրքերու կողմէ 1915-ին։ Մայրս վախճանեցաւ քանի մը տարի առաջ, Ազեքսանդրիա։

— Կը ցաւիմ, դաւակ, — ըսաւ Տիկ. Մարտինելի։

Սինեօր Մարտինելի շնորհ մը նայեցաւ կնոջը. բացայայտ էր, որ չսիրեց «զաւակս» արտայայտութիւնը։

— Ուզած էք պիս տեսնել, ի՞նչ բանի համար։

— Մարիայի համար։ Անշուշտ գիտէք։

— Բան չեմ դիտեր, — ըսաւ չոր կերպով։

— Բարա՛, — գոչեց Մարիա։

— Դուն աւելի լաւ է չխառնուիս, — սաստեց հայրը։

— Մարիան եւ ես, բուսական ատեն է, կը տեսնուինք...

— Ընչդ այդ է որ դիս կը զայրացնէ... Դուք նոյն քան զաղտնի բարեկամութիւն հաստատելը, պարտ էիք մեզ տեղեակ պահել։

Լեւոն զարմացած արտայայտութիւն մը առած էր։ Ինչպէս թէ։ Ինչ տարօրինակ արամաբանութիւն էր այդ։

— Աւելի պարզ ըսեմ, Պրն. Մարտինելի, Մարիան եւ ես կը սիրենք իրար եւ եկած եմ ձեզմէ իր ձեռքը խնդրելու...

Լեւոնի տիրեց։ Մարիա հօրը նայեցաւ, սիրտը կը թփրտար։ Տիկ. Մարտինելի զարմացած արտայայտութեամբ գետին կը նայէր։ Ծուռառով զարմանքը շփոթութեան փոխուեցաւ։ Անշուշտ կը սպասէր նման յայտաբարութեան մը, բայց... կարծես պահը ճիշդ չէր։ Մարտինելի լսած չէր

Լեւոնի խօսքերը, հանդարտ կը ծխէր ծխամորճը: Դէմքը արտայայտութեանէ զուրկ, անբան երեսոյթ մը ստացած էր: Արդէն իսկ նեղ ճակատը, աւելի կծկուած էր:

Մէկէն, անսպասելիօրէն պոռաց.

— Խեղճ, դուն ո՞վ ես, որ քեզի աղջիկ տամ:

Բոլորը ցնցուեցան: Տիկ. Մարտինելլի ամօթէն շիկնած՝ «Բոպերտօ» սաստեց: Մարիան այնպիսի աղիողորմ շեշտով «բաբա» պոռաց, որ բոլորին քրտերը սարսռացին:

Լեւոն ոտքի ցատկեց:

— Կեցիք պարոն, դեռ չեմ վերջացուցած, — ըսաւ Մարտինելլի, — ուրեմն դուն ամիսներէ ի վեր կը խաղաս աղջկանս հետ... Ժամանակ կ'անցընես հետը, հէ՞... Աղջիկս դեռ տղու մը հետ առանձինն դուրս ելած չէր եւ դուն դայն գլխէ հանեցիր... Միայն ճամբայ տարիք եւ հիմա լրբութիւնը ունիս...

— Կը բաւէ՛, — գոչեց Լեւոն այնպիսի ձայնով մը, որ սինեօր Մարտինելլի պահ մը զգաստացաւ: Ձայնը եւ դէմքը ներքին վայրագ ուժ մը կ'արտայայտէին, բան մը՝ որ չէր ակնկալուէր իր կերթ ու քաղցր գիծաւ դրժէն:

Մինեօր Մարտինելլի սակայն, կալի եղներուն նման, մէկ ուղղութեամբ կ'ընթանար:

— Հիմա լրբութիւնը ունիս միամիտ աղջկանս ձեռքը խնդրելու... Ինչպէ՞ս կը համարձակիս...

— Մամա՛, մամա՛, — աղաչեց աղջիկը:

— Բոպերտօ, — ըսաւ կինը խտալերէն, — չափը մի անցնէր, կրթութիւնդ պահէ, քու տանդ մէջ հերդ կը համարուի:

— Շնորհակալ եմ, տիկին, ես արդէն կը մեկնիմ... Կը կարծէի, որ Եւրոպացիները կերթ կ'ըլլան:

— Աա՛... ուրեմն դուն իմ կրթութիւնս չես հաւնիր... Ահա թէ ինչ... Իսկ դուն, ո՛ւր ես դաստիարակուէր, ո՞ր համալսարանը... Մագումդ անգամ ծանօթ չէ...

— Շատ առաջ մի երթաք, — ըսաւ Լեւոն:

— Ըսել կ'ուզեմ, կորսուած աղջի մը մնացորդն ես... Պատմութեան դրքերէն փրցուած, քարտէսներէն ջնջուած: Ընտանիք չունիս, տնուն չունիս:

— Բոպերտօ՛, — սաստեց կինը:

— Յաւալի է, որ Մարիայի նման ուղջիկ մը ձեզի նման անբարեկերթ հայր մը ունի: Անպատի մարդն իսկ իր միտնին տակ հիւրը նուիրական կը համարի... Իմ ազգս աշխարհի հնազոյն եւ ազնուազոյն աղաւթէն մին է... Իր պատիւը, հոգին մաքուր պահած է: Եթէ դուք ձեր պատմութիւնը լաւ սերտած ըլլայիք...

— Ինչ է, ինձի քարոզ կու տա՞ս, — գոչեց Մարտինելլի:

— Քաւ լիցի... Մեծն Հոռմը քանի մը զօրավար ուղարկեց ընկճելու Հայաստանը... Ի վերջոյ Մեծն Պոպէտուր ուղարկուեցաւ... Բայց էակաւորը այդ չէ, այլ այն՝ որ Աստուծոյ առաջ մեծն ու փոքրը հաւատար են...

— Դուն ինձ այն ըտէ, քու շահածդ ի՞նչքան է, որ ամուսնանալու ես ելեր, հէ՞... Քու շահածդ քեզ տղի պահելու հաղիւ կը բաւէ... Իմ տան ծառան քեզմէ աւելի կը ստանայ... Հիմա դուն եկեր ես աղջկանս ձեռքը խնդրելու...

- Մամա՛, Աստծոյ սիրոյն, օգնէ ինծի, - ըսաւ Մարիա:
- Բոպերատ, մտածէ աղջկանդ մասին:
- Ի հարկէ կը մտածեմ, հապա որո՞ւ համար է, որ կ'ըսեմ այս բո-
լորը... Այդ տղուն շահածը աղջկանդ արդուզարդին չի բաւեր, ես յիմար
եմ, որ տասը աղջիկ տամ, ես աղջիկս փողոցէն հաւաքեցի...
- Ձեր աղջկան յարգը, ես ձեզմէ աւելի գիտեմ, - ըսաւ տղան:
- Կարեւորը այդ չէ... Այլ այն, որ դուն տարբեր մակարդակի կը
պատկանիս... Ես անյայտ մարդու աղջիկ չեմ տար... Նորէն կը կրկնեմ,
ծաղումդ ծանօթ չէ...
- Անպիտան, - դուքն է Լեւոն, - թելապէս թէ ծաղումս յայտնի չէ...
Իմ արիւնս քու արիւնէդ մաքուր է...
- Լէոնէ, կ'աղաչեմ, մի զրգուեր հայրս...
- Հայրդ ըլլայ կամ ոչ, իրաւունք չունի ազդուութիւն անտրդելու...
Ի վերջոյ գինք չէ որ կը սիրեմ... Եթէ կը սիրեն զիս, իմ խօսքիս աչքն
եմ եւ քեզի հետ պիտի ըլլամ... Իրեն պէտք չունիմ... Մանօթանալուս
ալ կը ցաւիմ...
- Մօ, իմ դոնապանն քեզմէ աւելի կը վատկէ, դուն ինչի՞դ ապա-
ւինելով ամուսնանալու ես ելեր...
- Ամուսնութիւնը դրամի հետ ի՞նչ կապ ունի:
- Վա՛յ, հապա ինչի՞ հետ կապ ունի:
- Երբ երկու էակներ իրար կը սիրեն...
- Կը սիրեն, կը սիրեն... Սէրը օդ է, ոչ կը հապտուի, ոչ կ'ուռ-
ուի... Սիրել, սիրել որ կը կրկնես, իմ աղջիկս ըսած է, որ քեզ կը սի-
րէ...
- Ի հարկ է: Հարցուր:
- Ձեմ հաւատար, թող իմ առջեւ ըսէ... Մարիա՛, դուն կը սիրե՞ս
այս... այս... արարածը...
- Այո՛:
- Այո ըսաւ... Անկարելի է, անհնար է, impossible... Մեղք քեզի
կերցուցած հացիս...
- Այդ ինչ խօսք է, - ըսաւ Տիկ. Մարտինելի:
- Կարճ կապենք: Քեզի տալիք աղջիկ չունիմ: Պատասխանս ոչ է,
ո՛չ, ո՛չ, ո՛չ...
- Բարա՛, բարա՛, չես գիտեր ինչ կ'ըսես... Գթա ինծի, - ըսաւ աղ-
ջիկը եւ գլուխը ինկաւ հօր կուրծքին եւ սկսաւ հեծկտալ:
Մարտինելիի սիրտը փռկեցաւ, բայց զսոցն ինքզինքը...
- Հաւաքէ ինքզինքդ... Ամէնի... Դադարեցուր լացը...
- Մեղք եմ, մեղք եմ, բարա՛... Ձաւակդ եմ... Ձեմ կրնար ապրիլ,
ալ չեմ կրնար...
- Եկուր դաւակո, մի լար, ալ չեմ կրնար դիմանալ, - ըսաւ մայրը
եւ գրկեց աղջիկը:
- Տար գինք, թող հանդարտի: Զղերը հաւաքէ:
- Տիկ. Մարտինելի գրեթէ թշնամական նայեցաւ ամուսնոյն եւ իտա-
լերէն լեզուով ըսաւ.
- Ամօթ... Այսքան տարի է ամուսնացած ենք, տակաւին քեզ չեմ
ճանցեր... Աններելի է... Բնաւ պիտի չներեմ... Եկուր դաւակո...
- Մարտինելի դարձաւ Լեւոնին:

– Ամբողջ յանցանքը քուզի է... Յանցանքը քուզի է, որ աղջկանս երեսին ժպիտ չմնաց... Նայէ ինչպէս տփույն է...

– Միակ յանցաւորը դուն ես... Ինչ տեսող հայրս ես դո՛ւ...:

– Լռէ՛, յիմա՛ր... Դուն ինծի դա՞ս կու տաս հիմա... Փնա՛, դնա՛, այլապէս դռնապանս կը կանչեմ եւ քեզ...

– Բարա՞...:

– Իմ զաւակս չես դուն... Իմ զաւակս ի՞նչպէս կրնար պատիւս աղարակել այսպէս... Այս անպիտան...:

– Այլ բաւական է, վերջնորդ... – Հրամայեց կիներ:

– Մեղք որ տարիքով մեծ ես... Ամօթ քեզի... Մարդ կարծեցի...

– Լակո՛տ, – զոռաց Մարտինելիի եւ քալեց Լեւոնի վրայ:

Կիներ մէջերին նետուեցաւ:

– Այլ զացէ՛ք, կ'աղաչեմ:

– Կարողէ՛, ոտքդ այս չեմէն ներս չդնես... կը կոտորեմ... Մոհամ-մէ՛տ... (ծառան ներս մտաւ) Տար այս պարոնը դուրս... Աղջիկս շուեն-բուն կու տամ, քեզի չեմ տար... Աղտոտ հա՛յ...:

– Թո՛ւրք, – պոռաց Լեւոն, աչքերը սեւցան, վագրի նման ցատկեց Մարտինելիի վրայ:

– Աղտոտ հայ բա՛ր... Ա՛ռ, ա՛ռ... Քեզ կը սպաննեմ... Ոչ ոք կըր-նայ ազգս անարգել... Հերոսական, նահատակ ազգս... Ա՛ռ, առ... Թո՛ւրք, Թո՛ւրք, Թո՛ւրք...:

Անմէն ելած էր, վերաւոր դահլանի մը կը նմանէր: Իր բովանդակ դառնութիւնը, վրէժը Թուրքէն, մոլեգններ էին:

Մարտինելիի քիթէն արեան երիզ մը կը վազէր:

Տիկ. Մարտինելիի, որ արիւն չէր կրնար տեսնել, չի՛չ միայն նուազէր. «Այլատեցէ՛ք Բուկրտոն, ազատեցէ՛ք Բուկրտոն» կը մրմնջէր: Տան ծառան, Մոհամմէտը, հուսկու եղբայրացի մը, ի դուր կը ջանար Լեւոնը ետ քաշել: Հայրը մոլեգնած էր, ահաւի՛ր մայնով կը դռուար ու կը հար-ուածէր: Մարտին նետուեցաւ մէջերին եւ երկու թեւերով պլլուեցաւ Լե-ւոնին:

– Հայրս է, խնայէ՛... Իմ սիրուս... Եթէ կը սիրես զիս... Պիտի մեռցնէ՛ք զիս...:

Աղիողորմ մայնով կը հեծկտար ու յուսահատ փարած էր Լեւոնին: Լեւոն դառնացաւ: Ինքզինք հուսեց, նույնպէս շուրջը, նույնպէս Մարտինի: Նայաւածքին մէջ դեռ կար դոհացում, զղջում, նուառու-թիւն... Կար դառնութիւն կիանքին հանդէպ եւ ցա՛ւ, ցա՛ւ: Նսեւ շուա-րում եւ հրածելտ:

Մէկէն դարձաւ, քալեց դէպի դուռը, կեցաւ պահ մը, սպա առանց գառնալու ելաւ դռնէն: Անցած էր ասեղի ծակէն:

Մառան, այժմ առիւծ կտրած, ետեւէն պոռաց, յոխորտաց ու սպառ-նաց: Դուռը փակուեցաւ:

Մարտին տեսաւ դրան փակուելը, զգաց որ այլեւս պիտի չբացուի:

– Լէոնէ, սէրս:

Փլաւ գետին անկենդան:

(Շար.)

Բ. Կ.



ՊԱՏԱՍԽԱՆ

— Ա՛տ ինչ հարցում էր, բարեկամ. վայրկեան մը դուռն քու մանկութիւնդ միտքդ բեր... նայինք ո՞րքան ետ կըրնաւ երթալ: Անշուշտ առաջին տարին երկն բաժն մը չիս յիշեր. ոչ ալ դպրոց դասած առաջին արէդ: Այդ չըմանին ըրած: Բազմադարձութիւններուդ մասին բաւական մեծնալէդ յետոյ միայն պատմած են քեզի, դէմքերնուն վրայ հոկայ ժպիտներով, եւ չես կրցած հաւատալ թէ այդ բոլորը ընողը դո՛ւն ես եղած: Թե՛րեւս առաջին պատկերը որ միտքդ կու գայ այն է, թէ ի՞նչպէս օր մը ուսուցչուհիին համբերութիւնը այնքան շարժաւ դարձանք իր, որ ականջը տեղէն խախտելու չափ քաշելէն ու ոլորելէն ետք, հաստ մըն ալ ետեւիդ փակցնելով դասարանէն դուրս եետեց քեզ, հը՛, ի՞նչ ըրած էիր արդեօք... Հա՛պա այդ հրաշայ ժապաւէնը, որ ա՛լ աւելի կը տղեղցնէր՝ կարծես իբր պատիժ քո՞վդ դըրուած այդ շար աղջիկը: Կը յիշե՞ս նաեւ այդ օրը, որ նոյն ուսուցչուհին դասարանին ուղղեց աւանդական հարցումը. «Թ՛ր մէկը կը նստիւնորէ՞ք ըլլալ. ազատ բայց անօթի դա՞յլ մը, թէ՛ վրին անուր անցունած քայց կուշտ չուն մը»: Դուն օդ նետուցար (երկրորդ թէ՛ երրորդ դասարան էիր) եւ կարծելով որ մեծ հերոսութիւն մըն է ըրածդ, ամբողջ ուժովդ գոչալ՝ պոռացիր, երբ դասարանին մէջ՝ զչուն, չուն փսփուէ մը կը դառնար: Կը յիշե՞ս ուսուցչուհիին դէմքը այդ վայրկեանին. մէկ աչքը պզտիկցաւ, միւս յոնքը կիտուցաւ, եւ կարծես հեղնական ժպիտով մը, որ քիչ մը զարմա-

նայի թուեցաւ քեզի, զա՛տ աղէկ, շա՛տ աղէկ, տեղդ նստէ՛, բաւ կտրուկ:

«Պատերազմները կը յիշե՞ս: Նոյն դասարանի տղաքդ, բոլորդ մէկ եղած, կը յարձակէիք աղջիկներուն վրայ. եւ լաւ մը կը Եհեմէիք զանոնք, քանի մը հատը կուլային, քանի մը հատը ճշտով կը փախէին, եւ վերջապէս միայն մէկ հոգի կը մնար, որմէ բոլորդ ալ կը վախնայիք. անպիտան աղջիկը այնքան զօրաւոր էր որ, մէկ մեռնով մէկուն կը հարուածէր, միւսով ուրիշ մը կը տապալէր, երբեմն նոյնիսկ երրորդ մըն ալ ոտքին տակը առած կ'ըլլար: Սակայն վերջապէս առանձինը չէր դիմանար, եւ մարմիններու բլուրի մը տակ կը կորուսէր խեղճը...»

Յատակօրէն կը յիշես նաեւ այս շրթնանին յաջորդող քանի մը տարիները, երբ այնչա կտրուած էին մեր եւ աղջիկներուն միջեւ եղած կապերը. կը խնդաւ հա՛...: Նոյնիսկ եթէ յանկարծ սիրտդ ուզէր, չէիր համարձակեր անոնցմէ մէկուն քան մը ըսել, կամ հետեւին խաղալ. դուն ալ քու կարգիդ, չէիր ուշադարձութիւն մը Եհեմէիք, եթէ օր մը աղջիկդ հետ տեսնուէր: Ձարմանալի է, չէ՞, մարդ ակամայ կը ժպտի երբ այս քաղաքը կը վերստին:

Դպրոցական պատիտները: Ի՞նչ պատգամութիւններ, ի՞նչ կարգադրութիւններ, թէ ինչ կոթիներ կամ պատերազմներ տեղի պիտի ունենան լիւններուն ու անտառներուն մէջ. թէ ով որո՞ւ խումբին մէջ պիտի ըլլայ, որո՞նք պիտի ըլլան գողերը, եւ որո՞նք՝ զինուորները

(միշտ ալ Հակառակորդները աւելի ուժեղ կը թուէին, չէ՞)։ Վերջապէս օրը կու գար. ինքնաշարժը ճամբայ ելած պահուն, անպատճառ պէտք էր «Հայր Մեր» երգուէր, եւ դուն, ետեւի շարքը նստող միւս ընկերներուդ հետ, չէիք աւազակներ, ուրեմն միմիայն լուռ ծածոնութիւններ ընելով կը բաւականանայիք... Ձեռն գարձանար որ ամբողջ օրը բրածներէդ շատ բան չես յիշեր։ Սակայն պտուղի գողութիւնները կը յիշես, չէ՞։ Շատ լաւ գիտէիր թէ ինչ պիտի ըլլար պատիժը եթէ բռնուէիք. բայց ո՞վ այդ մասին երկրորդ անգամ կը մըտածէր, երբ կազմակերպողը, կրակ ու բոց տղայ մը, յարձակումէն առաջ բերինք ֆուրերը վազցնելով կը յայտարարէր թէ, զգողութեան տարանքը համով կ'ըլլայ... եւ կը յիշե՞ս, հազիւ գրպանդդ լեցուցած, կը սկսէիր մնացեալը բերանդ նետել, հետունէն կը լսուէր անխուս՝ գափելի ձայնը — ախ այդ մատնիչները — «Պարոն, պարոն, աւ, ան, եւ միւսը եւ միւսը պարոն, սալոր կը գողնան եւ կ'ուտեն կոր, պարոն, եւ երբ որ ըսի էրենց որ չգողնան պարոն, անպակաս ալ անկեցին «քերթէն-քելլէն» աչիկ պարոն... շարքի շարուիլ, հարցաքննութիւն, գրպաններու խուզարկում... միտքդ են, չէ՞։ Եւ երբ դաւադանը կ'իջնէր ակիդ, արդէն որոշած կ'ըլլայիր թէ ինչ նոր միջոցներ պիտի առաջարկես տղոց, մատնիչութիւններու առաջըդ առնելու համար։

Օր մըն ալ, կորուսած տետրակներու, արիւնոտ ծունկերու, մեղանոտ չափկներու եւ զմեկիով կտրուած մատնեղու պատճառած մահազուրկութիւններուն քով նոր մըն ալ աւելցաւ, որ չուտով փոխարինեց զանոնք։ Պարզապէս աղ-լիկներէն մէկը, սանկ, տեսակ մը նայեցաւ քեզի եւ դուն չկրցար զինչ կայ ապուշի պէս երեսս կը նայես ըսել իրեն։

Այսպէս, ամէն օր նայուածքներ, ժպտաներ, դոյն փոխներ, մինչեւ որ այլեւս գիշերները չէիր կրնար քնանալ։ Առաջին ոչիւր Սակայն արդէն վերջին դատարաններն էիք եւ չուտով դպրոցէն ելաք եւ իրար կորսնցուցիք։ Հիմա, ո՞ւր է արդեօք. մեռած է, ո՞ղջ է, լուս կ'ըլլար գիտնայիր եւ մէյ մը հանդիպէիր եթէ կարելի ըլլար. «Աւաջի՛ն» սէրը...

Կը յիշե՞ս ինքզինքդ ինչպէս մեծի հովիւ կու տայիր արդէն։ Պաղաքը այլեւս բացուած էր առջեւդ. ամէն օր ընկերներուդ հետ պտուղի էիր։ Այս շրջանին ծանօթացար նաեւ կեանքի գողտնիքներուն. սկիզբը զարմացար, յետոյ կամաց-կամաց համոզուելու սկսար, մինչեւ որ օր մը անձամբ փաստեցիր անոնց իրողութիւնը։ Ա՛հ այդ օրը — կը ժողնա՞նա՞ս բնաւ...։ Կատուի պէս վախնալով բայց վճռական, ճամբայ ելար. եւ երբ թշնամիին իսկ օգնութեամբ պատերազմէն յաղթական դուրս եկար, ընկերներուդ հարցական նայուածքներուն գիտաց կեցար վայրկեան մը, եւ մէկ ապահովեց միւսը տարածուող ժպտով մը, զոր չկրցար զգուշ, զգէ՛ չէր...։ Ըսիր։

Այլ առի՛կ ետք նոր շրջան մը սկսաւ. աւելի լուրջ, աւելի մտածող, գիշերները աւելի ուշ քնացող, աւելի ուտող, աւելի խմող, վերջապէս ամէն ինչ աւելիով ընող մէկը դարձար։ Ըսածներուդ կարեւորութիւնն առւաղներուն, թիւը անգամ աւելցաւ, հետեւաբար նաեւ վտապահութիւնդ՝ անձիդ վրայ։

Նոր շրջան մը սկսար — երիտասարդութիւն։

Է, այս բոլորը կը յիշես, չէ՞. անշուշտ. եւ հիմա ելեր ինծի կը հարցնես թէ ի՞մ մանկութիւնս ու պատանեկութիւնս ի՞նչպէս եղած են...

ԱՐԹՕ ԴԱԻԻԹԵԱՆ

ԼՈՍԱՆՑ

ԲԱՆԵՐԸ ԿԸ ՄԵՌՆԻՆ

Աղղիական արժանապատիւներով ու ռոճ գրուած Յարութիւն Բերքեանի այս գրութիւնը մեզի էր թուի թէ էր ՅԷ - Գաճի-Յանքեանի զՅարականք զեզին աղղեցութիւնը:

Աղղեցութիւնները երբեքստաղ գրողներու մօտ բնական եւ անխուսափելի դանկով հանդերձ, կը թելադրենք մեր նորերուն անդուհիւժ մը յաղթանակել աղղեցութիւնները եւ փնտել իրենց խոսքերուն սեփական ուղին:

Ինքնատպութիւնը գրականութեան անհրաժեշտ պայմաններէն է:

Երկու յուշարկուարներ փոփոսցին ետեւի նստարանէն, եւ ինք կորսնցուց մտածումին թելը: Իրականութեան պալով անդրադարձաւ յանկարծ, որ երազներ էր երկար, այդպէս հոն ուղիք, երբեքստաղ քանակային շրթունքներէն թափթփող տարածք բառերուն դէմ: Թորանին լոյսերը կը շողային կիսամութին մէջ, եւ պաղ քրտինք մը ողողած էր քունքերը: Նայեցաւ դէմի սեղանին եւ ըսաւ ինքնիրեն, թէ մայրը մեռած է ահա ու կը պառկի այդ դաղաղին մէջ: Նոր օղոցուած տախտակին հոսքը մինչեւ թոքերը կ'իջնէր: Մայրը մեռած էր: Բառերը կրկնեց մտովի, հաս-հաս, չըթնէրը դէմքին շարժելով: Բան չհասկցաւ: Իր ներկայութիւնը գրեթէ անիմաստ էր հոն, կը զգար արդէն սկիզբէն ի վեր: Արեւի երկը մը, պատուհանէն ինկած, կ'երկարէր նստարաններուն վրայ, կ'անցնէր ոտքին քովէն: Ուղեց կոխկոտել զայն, ոտքը երկարեց, լոյսի երկը լոյսաց կոշիկին վրայ, եւ իր մորթը զգաց զաղջ յոյանքը անոր: Գուրբը արեւ կար անշուշտ: Մինչ մատուռին ստուերները կ'անէին իր շուրջ. քիչ առաջուան մշուշը նորէն կը բարձրանար, կը լեցուէր աշտերուն մէջ: Պատկերներ կ'ըլլային բոլորը, զինք շրջապատողները. անոնց դէմքը, շարժումները կը տարբադառնուէին անորոշին մէջ, եւ աւելորդ բաներու պէս կ'ընէին իր վրայ, իրենց հե-

ռատութենէն: Անհանգիստ կը զգար հոն ըլլալուն: Իր մարմինին զանգուածը, միամիտ ու անամթ, կանգնած երկու նստարանի միջեւ, չփոթանար կ'ընէր զինք: Մահաւանդ երբ սեւ երկը մը պատուէր աշտերուն առջեւ լեցուած մշուշը եւ հասնէր իրեն, կամ անօգուտ հեծկոտութեւ մը զար խանդարելու իր լըռութիւնը: Այդ բոլորներուն յիմարտէն կը փոփոսէր շարժիլ. կենալ բարձր տեղ մը, սա դիմացի բնմին վրայ, եւ ըսել միաներուն ինչ որ չէին գիտեր: Կը փոփոսէր, ամբողջ մատուռը լեցնող թելի շարժումով մը, զբիւլի դուրս գանձեք բոլորը, այդ պատկերները, իր անտարբերութենէն հալածակալ: Եւ կը բաւէր շարժելին խաղալիկներու պէս, խորէն իրենց զիրենք: Մէկիկ-մէկիկ պիտի մարտնչէին այն առեւ լոյսերը խորանին: Պիտի մնար ինք առանձին՝ միակ իրականութեան հետ: Ժողով փառք մարմինին հետ: Պիտի մնար երկար, սուղուէր անոր տեսիլքին մէջ, մինչեւ - նոզկանք մը տեսնէրը սեղմեց հոն - ա'ւ հաւատար, ընդունէր թէ մայրը մեռած էր: Սաւաղին, բութ հեղաւորը նորէն պիտի գար, կու գար ամէն պատրանքէ ետք: Ան պիտի ողողէր այս անգամ, պիտի խեղդէր իր բոլոր բիթերը: Ա'ւ լիացուէր զինք: Մահը պատրանք չէր. կարելի էր ապրիլ անով:

«

Տկաք հեծկառուք մը հսկէն, եւ ինքզինք դարձեալ հոն գտաւ, երկու նըստարանի միջեւ, սեղանին դէմ: Զգաց նորէն՝ ճնշող ներկայութիւններ իր հետեւ, աւելորդ նայուածքներ. քրտնած, կղպուած դէմքեր: Արեւի դաղը երկղը դեռ ոտքին վրայ էր, եւ քահանան չէր վերջացուցեր տարտամ բառերը: Դուրսը արեւ էր անշուշտ, եւ լուսնիւն: Կարելի չէր փախչիլ՝ բաւերու, դադարներու եւ ճառագայթ մը արեւի տարօրինակ այդ բանտէն: Մինչ հսկէն նոյն հեծկառուքը կը կրկնուէր, եւ անոր ցընցումները կու դային ու կ'անցնէին իր մէջէն: Կը ճանչնար զայն: Այդ հեծկառուքը, այդ ժայնը որ մը ի՛րը եղած էին: Դարձաւ. ան էր, երկու քայլ անդին կեցած: Դեռին կը նայէր: Ան էր, ժայնը արդէն այնպէս կը նմանէր դէմքին. մեղմ, թաց, թրթռուն: «Եւ ըսել որ գիտցեր եմ սիրել», անցաւ միտքէն: Դադը բան մը պտտեցաւ շրջապատին խորքէ: Քիչ մը դուրս, Քիչ մը արտաքին՝ լիզիւղի դարձրացաւ կոկորդին. միայն: Կը բաւէր. անօգուտ էր արդէն: Պէտք էր փախչիլ այդ խեղճ դուրսէն ու: Նայել յուզումէն թրթռացող այդ մարմինին ինչպէս աւելորդ առարկայի մը: Բայց կարելի չէր մոռնալ սիրած էր զայն, եւ հիմա կը մնար բանտարկեալը՝ ալ ի՛րը չեղող յիշատակներու: Կրնար զարմանալ միայն. չառ տգէտ էր եղած: Որովհետեւ ոչինչ մնած էր դեռ կեանքին մէջ տան ատեն. դեռ չէր խոցուած բացարձակներ փնտռող իր խեղճ հպարտութիւնը: Յետոյ մահերը եկեր էին, ինք գտեր էր մեծ հակասութիւնը, եւ Խորհրդ մոռցեր էր: Պարզ էր: Բայց միւսը չէր մոռցեր դեռ. ոտքը համար ալ հոն էր ահա հիմա, իրմէ երկու քայլ անդին. իր ժողով դադարին դէմ:

Կրկին նայեցաւ անոր: Թարթիչները կը օտուերին կարճաժամ կոպերը. անոնց ազուրի թրթռացումը դեռ կ'երեւէր լիւստի պրկնումին մէջ: Գեղեցիկ էր ան, հակառակ դէմքը այրող արցունքին. մարմինին գլխերը շնորհալի էին, կեանքով

բով բարախուն՝ սեւին ծանրութեանը տակ: «Տասներու տարեկան, շարունակեց յուսահատ անտարբերութեամբ. ինք ալ տասներու տարեկան է եւ դեռ չէ մոռցեր. դեռ պիտի լալ՝ ուրիշ չէր իրզնայ, ոչ ալ կը նախանձէր: Գեղեցիկ էր, բայց այնքան փութուն, այնքան խոցելի գեղեցկութեամբ մը. կարելի չէր... կարելի չէր հուստալ անոր. կարելի չէր սիրել. զայն: Նորէն զգաց դանդաղութիւնը սնուցում, ցածքած իր դուրսին. այդ պահուն ան իր վրայ դարձուց աչքերը: Նոյն ակնարկը. հարցումի, աղաչանքի նոյն արտայայտութիւնը, նոյն հրաւերը: «Ի՞նչ կը սպասէ դեռ ինձմէ», հարց տուաւ ինքնին, իր յուսահատ անտարբերութեամբ ակնանկերը՝ սեղմած: Մինչ ազդող նարածքը նորէն կը խոնաւանար, կ'ողորմէր արցունքով: Աղջկան ուսերը, մազմիկը ամբողջ՝ կը ցնցուէին լուսն հեղեղանքով, եւ ժայնը, թրթռուն ու խեղդուած, կը փոփաւար:

« Գիշ. մը չե՞ր... լար... մամայիդ համար: »

Անիմատ էր այս բոլորը, մղձաւանջի պէս ցնորական: Կարելի էր զբոլալ միայն, յուսահատի զբոլումով: Ինչ կը լուէր. կը մնար հոն, ապիկար ու չիտթ, զարապ ակնարկը յառած անոր սեւ պղծաթիկ ձեւնոցին, դաստակի ուժգոյն մարմին: Կը լուէր: Մինչ այնքան պարզ էր. բացառալից էր. կարելի չէր լալ ու ապրել: Կարելի չէր յուզումով թրթռալ ու չփշուել: Այնքան հակասական էր, այնքան պարզ: Իր մայրը. պատկերացուց զայն, սպիտակած, տգեղցած այդ կինը. խեղճ գեղեցկութիւնը անոր, որ բոլոր մայրերունն է: Ան գիտցեր էր լալ, եւ ահա մաշեր էր՝ անողոք մաշումով թողցնելին: Հիւանդութիւնը կեդրեր էր զայն կտոր-կտոր. ինչ որ մնացեր էր՝ ահա կը պտուկէր հոն, դէմք. ալլելու անծանօթ, աւելորդ: Եւ հիմա պէտք էր լալ անոր համար: Մայրը մեռած էր, եւ պէտք էր լալ անոր համար: Փոփի ողջկտն մատնելը թաշկինակը՝ կը սեղմէին շղաճաբուն, սեւ ձեւնոցին տակէն: « Թեպէ որ ճիշտապէս՝ մարմինը կը

ապառէր արցունքին մէջ։ Այնքան խոցելի էր ան. ճիշդ մօրը պէս, արգէ՛ն մօրը պէս։ Թերեւս բոլոր կիները կը նմանէին անոր, քիչ մը միտ եւ արցունք, արցունք մանաւանդ. կարծես հիւթը իրենց մարմինին։

Այսպէս, մայրն ալ մեռած էր ուրեմն, վերջինը։ Իսկ ինք կը մնար հոն, նոյնքան պարապ, անորոշ։ Կը սպասէր։ Եւ կը թուէր իրեն թէ մայրը ահա կը մտնէր սկիզբէն քի վեր, եւ սկիզբէն քի վեր ինք կը սպասէր այդպէս, ուրիշներու կողքին, ուրիշներու վիշտով չըջապատուած։ Կը սպասէր այդ տարօրինակ բանտին մէջ, մահուան ու արցունքներու միջեւ տարուբեր։ Յետոյ կը մոռնար։

և

Ձայները իջան յանկարծ։ Լուսթին։ Վերջացած էր։ Իր ներքը պոտոյ խուռ մղոմներով տարուած, քայլերը քաշքշուկայ քուրս, դապաղակիրներուն եւ քահանային ետեւէն։ Մարդ մը կը քայլէր իր քովէն, թեւք քոնած։ Բարեկամ մըն էր։ Դրան մէջ կէսօրուայ ճերմակ լոյսը բերեց իրենց։ Պահ մը փակեց կողերը, մընայց անշուշտ. յետոյ քայլեց, յուղարկաւ արեւմտահասանքին հետ, հողէ արահետներէն. խնդում կար։ Միւսը ձգեց էր քի թեւք, կարելի չէր միտսին քալել աղքատն ճակ. ճամբաներու վրայ, Ետեւ ջինները կը հպէին քրեւն, կը բախէին երբեմն, կը քաղուէին մէկդի. Ետեւ չէին մօտենար։ Մայրը մեռած էր։ Արեւը տհաւոր էր. Կիւրար. ալիք-ալիք անոր լոյսը դաշտին վրայ, խաչերու եւ սիւներու անտառին կուրցնող ճերմակին վրայ։ Դաշտը կ'այլէր։ Յոգնութիւնը բոլոր զգայարաններէն իր մէջ կը խուսէր։ Ծննդայ մը կը թրթռար օդի բոցերուն մէջ. անհասկացանող բոյր մը կը բարձրանար խոտերէն։ Կրունկները կը ցաւէին եւ արեւը կը ճնշէր մերկ գլխուն։ Ճեղքած հո՛ւ, մտածեց. կ'ուզէր նստիլ հողին վրայ, բայց կարելի չէր։ Միւսները կը քալէին։ Դապաղը կը քալէր։ Հողը մուկ սրճագոյն էր հոն, ուր կեցան. գրեթէ սեւ։ Փոքր կանոնաւոր

փորուած էր։ Պէտք էր բարձրանալ եզերքի թումբին վրայ, եւ սպասել. մինչեւ մայրը վերջապէս մեռնէր. մինչեւ քահանային վերջին բառերը վերջանային։ Փոքր ամբողջութեամբ կ'երեւէր եզերքի թումբին վրայէն։ Կեցած էին հոն ուրիշներ ալ։ Միւսները ետեւն էին, աւելի ցած. ետեւը տեղ մը՝ անշուշտ զինք սիւրող մատներ դեռ կը պրկուէին թաշկնաւորին շուրջը։ Իսկ ինք չէր լար, թումբին վրայ կեցած։ Ահա այս մէկը եղբայրն էր. իր մեծ եղբայրը։ Պիտի շուրջէր նայիլ անոր. յայտնի էր, ան լացեր էր մօրը համար։ Հիմա կը հազար ճառը լացող հաղով մը, ինք դեռ կը տեսնէր պատկերը ոսմէկ այդ աղուն, մինչ ան նոր կը հասնէր օւրիշ քաղաքէ, քանի մը ժամ առաջ։ Սեւ բանկոն մը կը կախուէր անոր կողքին քի վար։ Ետպիկը քակուած էր, գէ՛մքը՝ սեւ։ Այդպէս եկեր էր ան, եւ ինք զգացեր էր, ամէն անգամուան պէս, զիրենք բաժնող անլրկութիւն։ Այնքան տարբեր էր ան իրմէ։ Վա՛ն չի գիտեր, լուր էր ինքնին, ամէն անոր հանդիպելու, ոչինչ օւնի մօտեանէք։ Միւսներն ալ շատ բան չէին գիտեր կարծես բոլոր անոնք, որոնք չէին մտածեր։ Ինք էր տարբերը, ինք՝ որ գիտէր։ «Որքան պարզ է իրենց ուրախութիւնը եւ արցունքը», շարունակեց. չըթուէր ներքը կծկուեցան։ Ուշից մոռնալ։ Բայց չէր կրնար շտեմնել եղբոր պատկերը. իմացեր էր ան մօր մահը, նետեր էր իր կաշի կարող դանակը սեղանին, հաներ էր արհեստաւորի գովնոցը, եւ եկեր՝ քիչ մը անոր վրայ լուսւ։ Այդ անբաւ, գրեթէ անասնային վիշտին յաճախ հանդիպած էր ինք. անոր գէ՛մ միշտ ալ խուռ ու զաղտնի բան մը թրթռացեր էր իր մէջ։ Տգէտ սարսափն էր ան՝ կեանքի անծանօթ բաներուն։ Տարերային ցաւ մը, առանց լոյսի, մտածումի։

Հիմա, եղբայրը կը հազար նորէն. հողի կոշտեր կը գլորէին անոր ոտքերուն տակէն, փոսին մէջ, Հողը թաց էր, անհանգստացնող բոյրով բեռնաւոր։ Արեւը կը մնար անշուշտ, տաքէն ճերմկած երկինքի կեդրոնին. Եղբիւրներ կա-

յին եւ փոփառւերնրու ծով մը՝ դաշտին վրայ։ Ինք յոգնած էր արեւէն, հողի բուրով ծանր՝ հողերու այդ կեանքէն։ Յոգնած էր ամբողջ կեանք մը դաշտի մը առջեւ կենալով, մտածելով լալու մասին, սիրելու մասին, մտածելու մասին։ Յոգնութեան պահն էր, եւ փափաքեցաւ ըլլալ պարզ, ըլլալ ազէտ, եւ լալու՝ խառնուիլ մեծ պանդառածին, ինչպէս մեռնողները կ'իջնեն վաթ, կը միահան հողին։


Ծանր, ծանր շարժումով մը եղբայրը ծոռէր էր դեմին. հող կը նետէր գերեզմանի փոսին մէջ։ Մեքենաբար նոյնը ըրաւ, մտածելով միաժամանակ որ մարդ հող չի նետեր մօրը վրայ։ Բայց մայրը մեռած էր։ Անոր խեղճ հիւանդութիւնը, փառմը՝ իր նետած բուռ մը հողին տակն էին ալ։ Մատենի բոլոր հողի հատիկներ կային։ Եղունակներուն ծայրերը սեւ էին անոնցմով։ Եւ հողը կը բուրէր։ Անոր բիրտ հոտը, ջրախեղ պէս դաղջ, կը բարձրանար արեւին մէջ, անտեսանելի ալիքներով. ապրող շունչի նման կը թափանցէր իր մարմինին։ Եւ իբ մէջ բան մը կը բեղմնաւորուէր։ Ուրիշներուն տակի դաղաղը կ'անհետանար ալ. հողը կը գրկէր դայն։ Փոսը կը լեցունէր, խոտերուն մէջ քաջուած վերքի մը պէս, հողով եւ ծաղիկներով։ Մաշիկներ, փոսին մէջ տապալած պտակներ կը ծածկէին հողը. անոնց բոյրը կը խառնուէր շագիներուն, կ'եփէր դաշտի հնոցին մէջ։ Օդը ալիքալիք կը շողողար, սպիտակ քարերու մակերեսին։ Միւսները

կը սկսէին հեռանալ կամաց-կամաց. վերադառնալ պէտք էր։ Բարեկամը բռնէր էր թիւը, թող տուէր էր։ Կը վերադառնային։ Ինք կը սպասէր։ Դեռ անծածոթ, կամ արդէն շատոնց մոռցուած զգայնութիւններու ալիք մը կը բարձրանար իր մէջ։ Կը սպասէր շփոթ, բայց արդէն զբոսէր գինովցած՝ ծանր բոյրերով եւ ջերմութիւնով։ Պարզ բան մըն էր հորիզոնէ հորիզոն դաշտը ծածկող այդ արտփումը. գեղեցիկ էր. իրմէ անգին, իր կեանքէն անդին անցնող գեղեցիկ մը։ Խեղճուի շեշտով կրկնեց բառը։ Եւ դարձաւ իր մայրին, որ յանկարծ բարձր լսուեցաւ ու ինկաւ յետոյ, պարագի մը մէջ կարծես։ Նախնական, աննպատակ յուզում մըն էր դուքսէն իրեն եկող այդ հոսանքը. մերկ ու առանձին նախամարդու տաղանպանք մը։ Կը զգար, անորոշ կերպով, որ հարցումի պէս բան մըն էր ինք, այդպէս բուրը զգայարանները բացած՝ հեռաւոր արեւի մը տաք կանչին, պարզ բայց անմատչելի քանակարի մը գոյներուն, հողի մը հսկայ մարմինին, անոր հոտերուն եւ մզողութեան։ Յուսահատ հարցում մը։

Կը մնար հոն։ Արեւը, եղունակները գետ սեւ էին հողով։ Մայրը պտուկած էր ուրիշներուն քով, փոսին մէջ։ Մեռած էր։ Ծուրը նոյն լայն արտփումը կը շարունակուէր դաշտին վերեւ։ Հաստատեց որ կարելի չէր փախչիլ այդ բուրքէն. եւ անդին միւսները իրեն կը սպասէին թե՛

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՐՔՃԵԱՆ

Պէյրուք



ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

3

Արեւմտահայ գրականութիւնը մեր օրերուն աժան թուղթէ դասագիրքերու մէջ կը քաշկռտուի, տափակ, կիսա-կուշտ վարժապետներու խեղճ ամսական մը կը ճարէ ու 15 տարեկանին հաղիւ հազ հասնող սերունդին կը ծախուի, պատառ պատառ ու կէս գին: Ատկէ ետք, 25-ի մայթերուն, ծայր կու տայ իր անճանաչելի ուրուականին սրտակեղէք յաճախանքը, ամէն Ապրիլ 24-ի, լորձունքոտ, կակուղ եւ ուռած նախադասութիւններու փաթթում:

Ո՞վ է յանցաւորը: Ոչ ոք: Հեզուկ դանդաւաններու մակերեսին, հարցը զուրկ է շահեկանութենէ, ինքնախումբ, շուրաւ մտաւորականութեան համար, ամուլ է ան կրկին, որովհետեւ գրականութիւն մը որեւէ նախախալարի կամ նախահալիւ պէտք չունի հետեւելու: Ուրեմն, ո՛չ ոք, ոչ անոնք՝ որ գոնէ վաղուան Գրականութեան մը տաքնապը տպրեցան կարճ շրջան մը, ոչ ալ մե՛նք, որ տարբեր աստուածներու բարեւ կու տանք ու գրականութիւն ըլլալէ առաջ հայ կը փորձենք ըլլալ:

Սակայն կայ անշուշտ բան մը որ կը վերապրի, ժամանակէ խարակներուն կառչած, յամառ ու ջղային երկարամը-

զումով մը հոն՝ ուր մեր բռնաբարուած խանգաղատութենէն շէտ մը կ'իջնայ անցեալի մարդոց ու երկերուն վրայ, անոնց յարութիւն տալու յոյսով, ոչ թէ անոնց սիրոյն՝ այլ յանուն մե՛ր իսկ մը-տաւորական կեանքին: Ի վերջոյ, եթէ մէկ կողմէ կը յամենանք մերժել օտար մշակութիւններու ազդեցութիւնները յանուն ազգապահպանում կոչուած անանկացած բանաձեւի մը ու, միւս կողմէ՝ կը յամառինք տնտեսել մեզ կանխող դարուն վերլուծումը ու վերազնաւորումը, ապա ուրեմն ի՞նչ է նախանիւթը, որմէ պիտի ստեղծուի իմացական մթնոլորտը ու հոգեկան արժէքներու մեայուն ներկայութիւնը՝ առանց որոնց որեւէ գրականութիւն քնաշրջիկ դպիրներու փոխառացութիւն է լոկ:

Հարեանցի ակնարկ մը երեւան կը հանէ Պոլսեցիներուն բացառիկ մէկ յատկանիւը, որուն հաւանաբար իրենք իսկ գիտակից չէին: Արուեստական աչք զը-րականութեան մայր զսպանակը անոր մշակներուն վաւերականութիւնն է, իրաւութիւնը (փոխ առնելով այս բառը Սլաւանէն), անարուեստական ու անկեղծ նկարագիրն է, որով երիտասարդ ժողովուրդ մը կը կնքէ իր ապրումներն ու

կերտումները: Այս յատկանիշը կրնայ մեր ահողոգ օրերուն կորսնցուցած ըլլալ իր կուսութիւնը ու պատիւը ու զրեայ ծիծաղեցնել մեն ու անգուժ քննադատ մը: Մենք հոս կը փորձենք պարզապէս մեկնաբանել ու մեք ջիղերով հասկնալ, մզելով քննադատութիւնը՝ ըսեն մատնագէտներուն: Վա՛յ այն օրուան, երբ այդ քննադատը որ հաւանաբար օտար մըն է, սկսի մեզ լուրջի թռնել ու քննել մեր դրականութիւնը ու յանկարծ դուրսէ վերցնէ նայելու օրացոյցին թէ արդեօք ո՞ր դարուն մէջ կը գտնուի: Բայց այդ սպառնալիքը դեռ հետո է ու կըրնանք հանդիստ մը քննալ պատանեկան միութեան ակումբին մէջ: Եթէ այս ճիշդ է, ետեւի պատշգամբն անսուսուն ալ ճիշդ է — այսինքն՝ մարդ Հայ պէտք է ըլլայ, որ կը նշանակէ անկարելի արարումներու կարօտով խանձուած էակ մը՝ ըմբռնելու ամբողջ հմայքը այդ տիպարներուն, տեսնելու անոնց նկարագրի աննախատեսելի, փերուն ու բուռն դիժը, ինչպէս կ'ըլլան սէրէ բռնկած ամէկուս ու տղեղ աղջնակներ, Ծայրայեղ, միամիտ ու յամառ դիժը, ինքնուս ու աղքատ գըրող մը յիշեցնող: Մեն են բոլորը իրենց կիսկատար կենսադուրբենէն, տարեգրքերու եւ թերթերու մէջ ցան ու ցիւր, բայց երբ փորձենք կտորները իրար փակեցնել՝ յանկարծ այնպիսի մանրամասնութիւններու կը վերածուին, որ մարդ կը կորսնցնէ իր չափանիշը — Խ. Միսաքեան իր վանդակներով, Ա. Հայկունի ու իր խաղի թուղթերը, Եղիան ու իր անտարազելի ներմանան, Բ. Պէրպէրեանն ու զրարարը. Պարոնեան իր գինովի քալուածքով, Ջրաքանի աւետարանը, Գ. Մալխասի մոլուցքը, Ե. Ստեանն ու իր թուրք տնունը եւ այլն: Ու տակուին հակառակ իրենց մեծաբանակ հայրենասիրութեան ու մշակութի հանդէպ քիչ մը չուայլ ու անքնախնդիր խանդավառութեան, Պոլսահայ մատուցականութեան համար, ժողովուրդ ու արուեստ վերացական իրողութիւններ մնացին, տափուկ, անուշ խոհանար, մինչ աշխարհի կեանքն իր տաղանայնորով, Պատմութիւն

նը՝ լրագրական լուրէ անդին չանցան, ճիշդութիւն խնդիրը ըլլալով միակ բացառութիւնը: Թուրքերուն տուած անտապանքն քիչ կը պահուէր ջիղերու հետ շողութեան դարակներուն մէջ ու շատ քիչ անգամ դրականութեան լոյսին կը հանուէր:

Այս կուսակցութեամբ, հետաքրքրութիւնէ զուրկ չէ հարեւանցի ակնարկ մը նետել Թրքահայ իրապաշտութեան վրայ: Բարբերու նկարագրութիւն, ազգադրական դրականութիւն, ժողովրդային վէպ, պատմութեամբ ու երգիծանք մեր մէջ կը նկատուին իրապաշտ մտայնութեան արտայայտութիւններ: Իրականութեան մէջ, ոչինչ այնքան տարած կը թուի Թրքահայոց մէջ, որքան այդ մտայնութիւնը ու ոչինչ այնքան յստակ եւրոպայի մէջ որքան իրապաշտ էսքէրփէր:

Շատ բան կարելի է ըսել Թրքահայ այդ զարդոյցին մասին: Զօհրապի ու Արփիարիանի համբաւները, ամուր բազմած վարժապետներու իմացական խարխուղ բազկաթոռներուն՝ դիւրութեամբ կարելի է տապալել: Բայց հոս միջին մտաւորականին հետ գործ ունինք, ան՝ որուն համար Հիւկօ, Զօլա ու Քօփէ շատ ալ տարրերութիւն չունէին իրարմէ, քանի որ երեքն ալ նոյն կոյր պաշտամունքին առարկայ դարձած էին (1): Կարելի չէ յստակ դադափար կազմել թէ անոնց իմացական խանդավառութիւնը ո՞ր չա-

(1) Երբ մեռաւ Հիւկօ, Պէրպէրեան վարժարանը մէկ օր փակ մնաց, իրր սուգի նշան: Քօփէ երբ 1897-ին հիւանդանոցէն կ'ելլէ, Պօլսոյ թերթերը զմեծ ուրախութիւնք կը յայտնեն: Մասին իր առաջին էջին վրայ անոր պատկերը կը գնէ (Մատիւ, 1897 թիւ 247): Երբ Զօլա կը մեռնի, Մանգուսէ Էֆֆար բացառիկ թիւ մը կը նուիրէ անոր (Մանգուսէ, 1902, թիւ, 458): Որու կ'աշխատակցին Եղիան, Ա. Ալվազեան, Թէոդիկ, Շամսադեան, Մարեան, Լիւնգէ, Գարամանեան, Գ. Սալիւնց, Քասթմ, Հազարապետեան, Տ. Արփիարեան, Ե. Արմէն ու Թ. Տէր Թաւրեան:

ժողով գիտակից գատումի արդիւնք էր, որ յափով հաւաքական ու վարակիչ ռէֆլէքսներու արտայայտութիւնս Մեր մեծ Փրանսագէտ-մտաւորականները - Ն.Բիւզանդացի, Մ. Նուպարեան, Գր. Մալխաս, Գ. Կոստանդեան, Ս. Ոսկան, Ռ. Պէրպէրեան, Լալլան - զուտ գրական կալուածէն դուրս իրագործած են իրենց գաղտնի ու յայտնի ճակատագիրը: Կը մնան միջակները, բարեբախտաբար: Ա. Անտոնեան, հակառակ իր շատ մը խոցելի կողմերուն, անկեղծ է երբ կը յայտնէ իր տեսակէտը: «Մեզմէ շատերու համար, Ֆրանսան յովանքիւ չըմանէն չէ ելած դեռ: Կը ճանչանք Լամարթիւնը, Հիւկոն: Հոն ալ մնացած ենք: Ձեռք կըցած լաւ հասկնալ նաեւ Ջօլան (2): Բիւզանդ. Քէչեան, հրապարակագրի տափակութեամբ, կը գրէ: «Ջօլան շատախօս թերթագիր մըն է... անբարոյական(3): Եղիան, որ ամէն բանի մէջ բացատրութիւն է ու լաւ Փրանսագէտ մը նաեւ, շատ աւելի նորը կը մտածէ ու «չէ յանձնարարէր» Ջօլա թարգմանել, ալ Պոլսէ, Փոփէ, Օքթալ Միւսպօ, Տօսէ ու Ժօրժ Օհնէ (4): Ջօլա բարոյական նկատումներով էր անշուշտ, որ Միշլեան Գովհաննէսեան կոչուած քննադատ - քանադակ - հրապարակագիրը, արտայայտուելով Թէօֆիլ Կօթիէի «Հոգեփոխալը» վէպի մասին, կը գրէ: «Լիպի, սուտ, միատակարար, անօգուտ ու յոռի գործ մըն է (5):» Կարծիք մը, որ

այնքան չիլ է որ քննադատը կը դատէ եւ ոչ թէ հեղինակը: Նոյնն է պարագան երբ Գ. Օտեան իր մէկ նամակով կը չընդհանրէ գրող մը որ Լուքսեմբուրգը կ'ուսումնասիրէ փոխանակ «Լիպի» Սառա Պիլմայրի մը կեանքը սուտնասիրելու (6):

Ինչպէ՞ս հասկնալ, ճաշակներու ու շափանիչերու այս խոտնիճաղանճին մէջ: Չէ՞նք թէ արեւը գրական դատումը, ուր էր իրապաշտութեան եւրէթիքի լուրջ հակացողութիւնը: Եթէ Ջօհնապ վաւերական իրապաշտ մըն է, ինչպէ՞ս բացատրել իր 32 տարեկանին ու կարծիքը - «Հիւկոնի վրայ պիտի սքանչանաք, Լամարթիի վրայ պիտի զմայլնաք, Քօփէն պիտի սիրենք (7):» Մեղի կը թուի թէ իրապաշտութիւնը, բո՛ւնը, իտրթ է հայ գրական ու մտնական դարձած զգայարածքին, ոչ միայն Ջարթօնի ու յաջորդող սերունդներու մօտ, ալ մեր սփրոնն ալ: Այս հարցին լուսադոյն բառնաձեւումը 65 տարի առաջ արդէն բրա՛նքի մեր գրականութեան հոգեմեղմնն, անտեսուած ու զրկել կորսուած Արփիարեանը: Երբ կըրթի ու պայծառի յորձանուած մէջ իր կըցած էր յատակ վեր լռածումի ենթարկել կացութիւնը: Վե՛րջն ժողովուրդի համար, կը գրէ ան, «անցեալ, ներկայ ու ապագայ մը կայ, Հայուն համար, ներկայ չկայ, ան առկէ կը խորշի (դրազէտներու համար է խօսքը Վ. Պ.): Պատճառ - Հայը գեղեցկասէր է, բայց իրականութիւնը ազնիւ է: Հայը կը սիրէ ապագան - աչքերը կը յառէ հեռուն, գեղեցկափայլ հորիզոնի մը վրայ, հոն իր հրեականութեան ըստեղծած բուսական երեւոյթէն կը հրճուի, իր արուած ցաւերը կը մոռնայ եւ իրականութեան հրճուածքէն: Հանգստաւէտ երազանք եւ անցեալի մէջ: Անիկ աւերակներուն թափառող Հայուն սիրտը աքաղաղութեան հրճուածքով կ'ողողուի

(2) Մալխաս, 1899, էջ 343:

(3) Բիւզանդիս, 1902, թիւ 1820:

Նոյն կարծիքը կը պաշտպանէ Խաչիկ, Կիւրորդական քննադատ մը, Հարոյ (արգիւթ 930-ական թուականներուն «Հայաստանի հովանի» մէջ գրող Նշան ձիւնանեան է) որ երբ Ջօլայի թերթը (Խաչիկը պաշտպան թերթի մը մէջ լոյս էր առնէ որպէս թերթ, կը գրէ. «Ինչո՞ւ ազգային անբարոյական գործ մը կը տպուի» (Բիւզանդիս, 1903, թիւ 1998):

(4) Բիւզանդիս, 1897, թիւ 80:

(5) Մալխաս, 1897, էջ 4:

(6) Ամէնամ Ջարնոյցը Թէոդիկ, 1911, էջ 27:

(7) Մալխաս, 1899, էջ 237:

(8) Իսկ ևս իրենց հետևում է այսօր...

Այս քաղաքի թերակազմակերպված հանգիստն ու անհանգիստը, այդ մասնաճյուղի մասին կը շնչեր ժողովուրդի սիրտը ու զբոսիչի հոգին վեր միջոցառումները, յանձնարարական անհանգիստը նրա թանկան արժեքներէ բարձր արժեքներու հանդէպ՝ քիչ մը պահտոնակայն բաց անկեղծ սիրտ մը փառաբան կը հըրձանքնէ մեզի: Ու այդ է հիմնականը — ոչ թէ մակարդակին որակը, որ մասնին կարողութեան հարց է, այլ մակարդակի մը պարզ գոյութիւնն իսկ, որ վերջին հաշուով զբաղան կոչումին հանդէպ բարձրական զբաղան արարքի մը վկայութիւնն է:

Այսպէս է որ ապրումի ուժը շինեց մարդերը, բայց խանգարեց մասնաճյուղ գործողութիւնը: Թրքական միջնակ մասնաճյուղի մասին, օրինակ, երբեք չէ պիտոյնք թէ ի՞նչ կ'ընէր ինք, ո՞րք կ'առաջնորդէր իր ու հայ մշակոյթին ճակատագիրը: Մարդ այն տաղաւորութիւնը կ'առնէ թէ Պոլսականքը այնքան զարեւոտած ու շուքած էին իրենց զբաղանքներուն սոսկ դոյութեամբ, այնքան սուղի գնումն անձ մը, հրաշքի պէս բան մըն էր իրենց համար որ կը գոհանային այդքանով ու վերջանէր: Բայց որովհետեւ ուղղամիտ մարդեր էին, անվարձ պարգապէս պարզ մարդ ըլլալու — հոգեբանական վիճակ մը՝ որ բարդացած ալ էր, հաւանաբար, արեւելեանէն ժողովուրդն ու ազգային խառնուածքին մաս կազմած այդ յանցանքի զգացումով — կարծեցիկ թէ ինքնագոգոհութեան կեցուածք մը, եթէ ոչ քննական՝ դէժ իմացական պարկեշտութեան առա-

քննութիւնը ունէր: Այս է հաւանաբար պատճառը այն ժխտական դատումին, որ այդ մասնաճյուղի մասին ըրաւ իր իսկ հանրային ու մշակութային գործունէութեան մասին, 1860-էն 1920 մէկ կըրտոր (9): Եղած են դեռ ուրիշներ, մասնաճյուղի մասին վերնախաւէն իսկ, որոնք հակապոպուլարեան Ժայռայեղ

(9) Պարզ դաժաբար մը տալու համար, յիշեց թանկ մը ցան ու ցիւր կարծիքներ:

— Հակառակ եղած անգին ճիշդն՝ օրագիր, զարոյց հայրն՝ սխիւ զուր հանած ենք ու զոսքէ բայլ մը տալ չենք զայս (Բաճաւըր, 1651, թիւ 2):

— Ազգային յառաջդիմութեան մը կայ բայց կողմ ի կողմ է ան: Ժամանակը եւ օրերն ու օրերն են որ մեզ կը մղեն: Անկախ է մեր ընթացքը (Մեզալ, 1859, էջ 285):

— Այսօր... ազգային յառաջդիմութեան դիտակէց ենք: Եւ մենք մարդ կը դնենք, կը ցանկայ, անկախ օրին մէկ կը ցնդեն... արդիւնքը դեռ անտես չունենք: Վարձարանները, մէկ քանի բաշտութեամբ, օգործելի են (Ժամանակ, 1896, թիւ 79):

— Սուր լուսաւորութիւնը զոր բերին մեզ, մեր հաւատքը զգրդեց, կենսքը մեղկացուց, միտքը շփոթեց: Աշխարհիկ քաղաքացիներ, շատ կայ ժիւղստականք, ժողովուրդներու միջնորդներ եղանք: (Ար. Մամուլ, 1874, թիւ 1):

— Հայ դրականութիւնը զարգացման ընթացքի մէջ չէ: Յուսանա՞լ զորոնք կը քաշուին հրապարակէն, նորերը չեն գար: (Մամուլ, 1896, էջ 560):

— Մեր մէջ չկայ ընթերցող: Գրողն իսկ չի կարդար: Նորեկները, մէկ քանի վէպեր հազիւ կարդացած՝ նորագէտ մը կը սկսին կամ քերթելու մը: Մասնաճյուղի մասին կամ լրագիր կամ վէպ կը կարդան (Հայրենիք, 1893, թիւ 419):

— Մեր մէջ վերլուծական, ուսումնասիրական լուրջ ուշադրանքի պակաս կայ: Մօլլ ենք մեր հին արժեքները ուսումնասիրելու մէջ: Միջնակ զորոնք կը խառնուին իրենց չնայեցած բաներուն: Ձենք արտադրել: Արտադրող մարդու համար, որեւէ ժամանակ արդէն չէ: Անկախ մէջ ենք (Բիւզաղի, 1898, թիւ 656):

— Մեր ներկայ զբաղանքներն են զարգ, քա-

(8) Նոր կեանք, 1899, էջ 259:

Այս նախ Երեւանի մասին կը պարտենք մարդու հոգեւորն ու տալը, որ 15 տարի վերջ միայն պիտի հասնային: Հայ Ազգ. բնակիչ ընկերութեանը Գրական խորհուրդը քաղաքականութեան առաջնորդը պէտք է համարել (Նոր կեանք, 1900, էջ 306):

դիրքերէ՝ աւելի անդին գացած են։ Կ'ականարկենք այն ոգիին, որ կ'ըմբոստանայ այդ անանձնական ենթակայականութեամբ շնչահեղձ ընող, հաւաքական յուզականութեամբ ու յանցանքի մութ զգացումով խեղդող հայկականութեան ոգի որ վերջը, Սփիւռքի մէջ, այնքան յստակ ձեւ պիտի առնէր ու այնքան սուղի նստէր մեզի։ Անգոյն, ամէն գեղեցկութենէ՝ զուրկ միջավայր մըն է հաս (կ'ականարկէ Պոլսոյ Վ. Օ.)... միայն փայտակարի ու զրականութեան մէջ երգիծանքի, քննադատութեան կըրօնայ ծնունդ տալը կը գրէր Զ. Մսայեան, որ վերջը այնքան ձախ հակեցաւ։ «Բանաստեղծութեան մէջ չենք հանդիպիր գրեթէ բնորոշող, մասնաւոր նկարագիր որ յայտնող տողի մը. ճարտար ամպերու, տարտամ ծաղիկներու, աստարտ արշիւկներու. մասին է (10)»։

Հաւանաբար ներսէն, զայն ապրողի

բող, քարոզ է։ Գիրք գրելը հեռութեան կարգ տնայտ է (Աւրիանդակ, 1904, թիւ 1863)։

— Գրական տարին ի Պոլս... Ի՞նչ կատակերգութիւն... գրական տարի՝ ունի տեղի։ Հաւատեալութեան վարդի ըստ (Շիրակ, 1905, էջ 302)։

— Վեց ամիս անցեր է յեղափոխութենէն ու ասկաւի իրեն թրջահայ մտաւորականութեան արտայայտութիւն՝ տեսանք միայն օրագրական տեղագրական, տեղայն, հոգեմղար շատախօսութիւն։ Եւրոպ, ասերակ իմացականութիւններու բազմութիւն մըն է այսօր։ Բայց պէտք է վհատիլ (Ազդակ, 1906, էջ 38)։

— Պոլսահայ գրականութիւնը երբեք տաքտե ողբալի չըլտն մը չէ բոլորած օրքան այս պահուն Անտարշ, անկայուն, տարտամ... բոլոր գրողներն ալ սպորմէի են (Ազատամարտ, 1911, էջ 557)։

բացառիկ անկրնէն դիտուած, այս գրականութիւնը իրապէս անհամոզիչ էր ու տկար։ Բայց եթէ զայն բազդատենք իր օրուայ թրջական գրականութեան ու նսեւ Արեւելահայ գրականութեան՝ ան անհամեմատօրէն մեծ է, իրր գրական արժէքի հասկացողութիւն ու իրագործում։ Գծախտարար իրենց լայն փողկապներուն, ծանր հայհոյանքներուն ու լրջութեան ետին, իտէալիստ, երազային մշտն մը կը ծփար ուր կ'ապաստանէին երբ ստիպուէին մտածել կամ դատել։ Այս է պատճառը անկասկած, որ անկարող իտէալը երեւակայութենէն իրականութեան վերածելու, անկարող նսեւ ամբողջութեամբ մէկը կամ միւսը բնակիլի դարձնելու։ Պոլսեցիք յանցաւոր ըլլալու զգացումով լեցուած էին։ Այս հոգեվիճակէն ոչպէ ինքնաքննադատում ու ըստ տորադնահատում՝ քայլ մը կայ միայն։ Հոս սակայն կ'ուզենք պարզապէս շեշտել թէ մարդիկ այս անբաւարարութիւնը չէին փորձեր ծածկել։ Քաջութիւնը ունէին համեստ ըլլալու ու հակառակ անապարանքին ու տենդին, որ վարական էր այդ շրջանի մեր իմացական կեանքը, մարդիկ կը ցան աչքը յստակ պահել։ Եթէ նոյնիսկ չհակացան իրենց գլխուն եկամբ ու ի վիճակի չէին կեանքէն այնքան մը հեռանալու, որ կարողանային արուեստի զգայարանքը պարզացնել, զէթ զնահատել՝ պոնէ ունեցան քանի մը մարդիկ — Յ. Հաճեան, Ե. Թօլայեան, Ալփայեան, Բ. Սամիկեան, Փաք Սայապայեան, Վ. Փափաղեան, Յ. Ալփիար, Ե. Օտեան եւայլն — որոնց սրամիտ, հեղնող գրականութիւնը, Յ. Սիւմեանի, Գ. Այվազեանի ու Պարոնեանի ծանր երգի, ծանրին կողքին, իր տեղը ունի մեր գրականութեան պատմութեան մէջ։

(Շարունակելի)

Վ. ՕՇԼԻԱՆ

(10) Մազիկ, 1906, թիւ 10։

ԱՐԳԻ ԽՈՐՀՐԳԱՎԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բեղուն արձակագիրներից է ՋԱՄ- ՋԱՆԴԻ ԴԱՐԻՍԻԱՆԸ (ծնունդ 1912 թ. Արեւմտեան Հայաստանում)։ Նախապատերազմեան տարիներին անունով էր միայն յայտնի, իսկ այսօր՝ միջեանց յետեւից Հրապարակ եկող իր գործերով։ Գրել է պատմական գեներ, վէպեր, պիէսներ։ Մասնաւոր սէր ունի իր Հայազատ Ապարանի ժողովրդական բանահիւսութեան հանդէպ։ Մի ժամանակ շատ քշեմադատուէց նրա «Մայիս» վէպը՝ «խորհրդային իրականութիւնը խեղաթիւրուած ներկայացնելու» համար։ Նոյն ձեւով քննադատուէց վերջերս նրա «Գըլխապտոյա» պիէսը։ Նրա գլուխ-գործոցն է «Մայիս-Նովա» երկհատոր վէպը։ Այդպիսի երկերը հետաւորեալ շին գրում։ Եւ հաւանաբար Դարեանը երկու ու քստնալան պրպտումներից յետոյ է ձեռնամուկ եղել «Մայիս-Նովա» վէպը գրելուն։ Պատմական թէ ժամանակակից երկերում Դարեանը պահում է իր գրելաձեւը։ Ունի սուր դիտողականութիւն, բայց կենցաղային մանրամասնութիւններ նկարագրելիս երբեմն ընկճում է մի տեսակ պուշեանական շռայլութեան դիրքը։ Թեքելու էլ այդ կէտը Դարեանի «աքիլլէան գարլապարն» է, քանի որ ճապարկում է երկի ճարտարապետական յստակութիւնը։ Բայց մի այլ նկատառումով էլ կարելի է դա համարել նրա Դարայատուկ առանելութիւնը, արժանիքը։ Ամէն տեղ, սակայն, երեւում է հեղինակի երեւալայութեան ուժը, մտաւոր հետաքրքրութիւնների լայն ճաբղոնը, քննական միտքը եւ կենդանի մարդուն արժէք տալու անգիլում յամառութիւնը։ Դարեանը այժմ իր ստեղծագործական ծագկման շրջանում է ապրում։

Համեմատաբար սակաւածանօթ գրողներից է ԴԱՐԻՍԻԱՆ ԲԵՍԸ (Սարինեան, ծնունդ 1910 թ. Շուշի քաղաքում)։ Մինչեւ հիմա մօտ մի տասնեակ գրքեր են լոյս տեսել Բեսի հեղինակութեամբ։ Բայց նա աւելի շատ յայտնի է գարձել իր արձակ բանաստեղծութիւններով եւ նորավէպերով։ Միջակ ծաւալի երկերը Բեսի նախաւիրած բնագաւառն են։ Մինչեւ հիմա էլ նա գրեթէ նոյն ուղղութեամբ է ընթանում։

ՍԱՐԴԻՍ ՊԱՅԱՋԱՍԸ (ծնունդ 1909 թ. այժմեան Լենինականում) աշխատել է Թբիլիսում, Լենինականում, իսկ այժմ էլ՝ Երեւանում։ Համեմատաբար քիչ է գրել («Մանր մարդիկ» - 1931, «Կաղնուտի սիրահարները» - 1948, «Մենք կաղնուտից ենք» - 1956)։ Գրել է նաեւ պիէսներ, շարժականի սցենարներ։ Մի ժամանակ յաջողութիւն ունեցան նրա պատմական գեները «մանր մարդկանց» կեանքից։ Բայց ըստ երեւոյթին Պայազատը մնաց նոյն մակարդակի վրայ եւ առաջ չլարժուէց, իսկ այժմ գրադարում է գերազանցապէս Հրատարակչա-խմբագրական գործերով։

Է.

Վերելում ասուեց, որ 30-ական թրւականներին բանաստեղծական սերունդը դժբախտ եւ ճղակոտոր սերունդ էր։ Դասնանք այդ սերնդի «մնացորդացիներ», քանի որ այժմ նրան պատկանողները եւս մասնակցում են գրական կեանքին։

ՅԱԶԻԿ ԴԱՇՏԵՆՅԱՆ (ծնունդ 1910 թ. Սասունի Ուլի-Բունաշէն գաւառակի

Դաշտադէմ գիւղում) Եղեռնից հրաշքով մոզապուրծ եղած, որբանոցում մեծացած եւ տպադրական ասպարէզ մտած տաղանդաւորներից է։ Առաջին քայլերը վկայում էին, որ լաւ բանաստեղծ պիտի դառնար։ Գրել է «Երգերի գիրք» (1932 թ.), «Փարնանային երգեր» (1934), «Բոց» (1936)։ Ինքն իր մասին գրում է. «Տարիներով լուռ եմ՝ երբեմն յուզուած ու տխուր, չեմ շտապում ամէն տեղ ու չեմ բախում ամէն դուռ։ Այդ «խռովները» նկատելի էր արդէն 1936 թուից սկսած։ Պատերազմից յետոյ երեւանի Բկաւ Երա «Տիգրան Մեծ» դրաման (1947) ու «Գրգուպէս Վարդգան» վէպը (մի քանի հատմանով)։ Դաշտանցը անգլիերէն թարգմանել է Շեքսպիրի բազմաթիւ երկեր։ Գրել է «Բայրոնը եւ հայերը» ուսումնասիրութիւնը։ Հայրենի ժողովրդական իրականութիւնը Դաշտանցի ստեղծագործութեան ատանդային նիւթն է։ Թէեւ այսօր նրա հեղինակութեամբ նոր երկեր պատճանակող՝ դրժեր չեն տպւում, բայց ծրր յիշում ենք «Բոց» ժողովածուն, դժուար է հայտուել Դաշտանց-բանաստեղծի կարուստի հետ։ Կան Դաշտանցին սոսկ համեմատելու համար, որոնք ըստ երեւոյթին չեն խորացել դաշտանցեան աշխարհի մէջ։

ԿԱԶԻԿ ՀԻՎԱՅԵԱՆԻ (ծնւած 1912 թ. Արտաշատի նորաշէն գիւղում) գրչին են պատկանում «Մկանների լիրիկան», «Եւփորներ» (1931), «Զուարթ երգեր» (1938) ժողովածուները։ Շատ է գրել մանուկների համար, Մինչեւ հիմա էլ գրադուռ է թարգմանութիւններով։ Բայց՝ վերջին տարիներս՝ յայտնութիւն դարձաւ իր արձակ երկերով։ Մամուլում միմեանց յաջորդեցին նրա ինքնատիպ ստեղծագործութիւնները։ «Մարտի Մարտ» (1961) վէպում հրաշանը բուլղոյին։ Նոր՝ ձեռով տուեց խորհրդահայ «Գիւղի»՝ Յրեանմայ տարեգրութիւնը։ Վէպի իրենից ասանապատիկ աւելի ծառայ ունեցող վէպերի կէտ ունի։ Այդպիսի էւս հրաշանը մնում է հիմնական

նում բանաստեղծ, բայց վարպետ գրչի մասին պատկերում է իրականութիւնը, ներառւած վաւերական գծերով։ Այժմ հրաշանը պատրաստուած է «Ռոմանտիկները» վէպը ուսանողների կեանքից եւ առհասարակ աշխի ընկնելու շափ գործունեայ է դարձել։

ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻՆ (Խաչիկեան, ծնւած 1910 թ. Վայոց Ձորի Փաշալու գիւղում) համեմատաբար քիչ է գրել, ընդամենը մի քանի գիրք («Երգու երգ» - 1930, «Ռազմի երգեր» - 1938, «Դէպի արեւմուտ» - 1943, «Երգերի գիրք» - 1949)։ Սկզբից եւեթ ՎահուՆու բանաստեղծութիւնները աչքի են ընկել իրենց յղկումով, օրինակելի լեզուով։ ՎահուՆին աշխատում է մամուլում եւ ասհասարակ յոյտնի է իր լեզուական նախանձախնդրութեամբ, պահանջկոտութեամբ, ճաշակով, - հանդիսանալով հայոց լեզուի վերածնանդ պահակներից մէկը։ (Այդ ասպարէզում նրան կարելի է նշելիս հաւասար գծի վրայ դնել հայաստանի լեզուաբաններ Գրիգորէ Սեւակի ու Վարպ Առաքելեանի, իսկ Մփաւաքում, համեմատութեան եւ պատկերացրելու համար, Բ. Թաշեանի հետ)։ Այդ եւ այլ հրատապ հարցերի մասին սովորաբար հանդէս է գալիս մամուլում՝ իր կծու եւ գիպուկ դիտողութիւններով։ ՎահուՆին նշանաւոր է նաեւ գրագողութիւններ յայտնաբերելով։ Պատարել է բաղմաթիւ թարգմանութիւններ. դրանցից նշենք ռուսական «Ասք Իգորի ճակատարտի մասին» աւանդավէպը եւ Բոկկաչիոյի «Դեկամերոնը»։ ՎահուՆին գրադուռ է նաեւ երգիծաբանութեամբ։

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆԸ (ծնւած 1899 թ. Վանում) իր կարողութիւնները լիովին չի դրսևորել։ Սովորական բանաստեղծութիւններից ու պոէմներից բացի, գրել է «Մոկաց Միլոտ» (1930) շոփաժայերկը, «Մասնայ Ցուն» դիւցազնավէպը։ «Հազարան Բլուր» հեքիաթավոր մը։ Վերջերս հանդէս եկաւ «Եւփոր Միհրան» վիպակով եւ այլ արձակ էջերով։

Գրաբարից աշխարհաբար է թարգմանել նարեկացու Վրատեան ողբերգութեանը զործր: Այժմ շարունակում է դրել:

Պատերազմից յետոյ Բաքուից Երեւան տեղափոխուեց նաեւ ԳՐԱՇԻՆ (Աւոտ Գրիգորեան, ծնուած 1911 թ. Ղաթարաղում): Գրաշու մասին կարծիքները տրամադծօրէն տարբերում են իրարից: Ոմանք նրան ոչնչից-ոչինչ են համարում, իսկ ուրիշները հրկինք են բարձրացնում: Այդ հակոտնեայ կարծիքները ցոյց են տալիս, որ Գրաշու ստեղծագործութիւնները հնչւոյ չէ ընդհանուր յայտարարի բերելը: Գրաշու հեղինակութեամբ տպուել են բանաստեղծութիւնների բազմաթիւ ժողովածուներ, որոնք մեծ մասամբ իրենց մակարդակով մէկը միւսից դրեթէ չեն տարբերում, թէեւ ամէնից շատ են թարգմանուել ուսուերէն ու տարածուել Հայաստանից դուրս եւ երգերի վերածուել Հայաստանում: Բնութիւն երգերը առաւ եւ Գրաշու գրքերում: Բայց աչքի են ընկնում նաեւ «Համաշխարհային Թեմաները»: Գրաշու բանաստեղծութիւնների հիմնական պակասութիւնը մեծի, լեզուի, ոճի նախնականութիւնն է եւ բանաստեղծական շարժման բացակայութիւնը: Գրերիւնում են ինքնապատկ նկարագրութիւններ, մերկ հաւաստիացումները հւայն: Սովորաբար ամենահասարակ բուն անգամ իսկական բանաստեղծի մեղքի հպումից կախարդական ուժ է մեղք բերում: Գրաշու մօտ հակառակն է տեղի ունենում. ամենաբնորոք բառերը անտեղի գործածուելով շնչահեղձ են լինում: Այս ասելով հանգերմ, դիտենք, որ որոշ կարգի ընթերցողներ Գրաշուն շարունակում են իրենցը համարել: Դա եւս հաշուի առնուելիք փաստ է:

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ (ծնուած 1909 թ. Տարօնում) իր ժամանակ հռչակ մեղք բերեց ՎԱՆԻԻ երգով: Փորձել է նաեւ տրձակ դրել, բայց փաստօրէն բանաստեղծ է: Հայրենական ու աշխատանքային թեմաները նրա ուշագրութեան կենտ-

րոնումն են գտնուում սկզբից մինչեւ հիմա:

1930-ական թուականներին եւս դրական ասպարէզ մտել նաեւ ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻՆ, ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ (ծընուած 1914 թ.) եւ ՅԱԿԱՆ ՇՈՂՆՆԸ: Աւելի կամ պակաս չափով նրանք իրենց լուման եւ մտքի խորհրդահայ բանաստեղծութեան մէջ: Բայց կարելի է այս անգամ կանգ չառնել նրանց ստեղծագործութեան վրայ, քանի որ միւս վերոյիշեալների համեմատութեամբ այնքան էլ լայն տարածում չունեն այդ հեղինակները եւ մասնաւոր ինքնատիպութեամբ առայժմ չեն փայլում, թէեւ ոմանք առատօրէն դրում են գրական մամուլում:

Ը.

Արդի խորհրդահայ գրականութեան անձնակազմի հիմնական կորիզը յետպատերազմեան սերունդն է: Ճիշդ է, այդ գրողներից շատերը արդէն հրապարակի վրայ էին դնուել 30-ական թուականներին կէսից, բայց նրանց տաղանդը ամբողջ փայլով դրսեւորուեց մասնաւորապէս պատերազմից յետոյ, մասնաւոր վերջին տասնամեակում: Այդ սերունդի միջից աչքի են ընկնում բանաստեղծները: Ուստի եւ բանաստեղծութիւնը գերակշիռ դիրք ունի: Արժէ հէնց գրանից էլ սկսել ուսումնասիրութեան այս մասը:

ՅՈՎՀԱՆՆԵՒ ՇԻՐԱՋԸ (Կարապետեան, ծնուած 1914 թ. այժմեան Լենինականում) կամուրջ է հանդիսանում նախապատերազմեան եւ յետպատերազմեան սերունդների միջեւ՝ իր գրական տարիքով եւ ստեղծագործութեան ուղով: Շիրազի յայտնաբերումը Ալազանի կատարած օգտակար գործերից մէկն է: 1935 թուին Շիրազը հրաչեք պէս երեւաց իր «Գարնանամուտ» ու «Միամանթ» եւ «Պաշտպան» գրքով: Գրքով, այնուհետեւ միմեանց յետիւց նորանոր երկեր ստեղծելով: Այժմ նա բաւական յայտնի

է Հայաստանում եւ մանաւանդ Հայկական Միութեան, թէեւ Հակառակ իր կամքի՝ այլեւս լայն հնարաւորութիւններ չունի ապագրուելու, գտնուելով մի տեսակ շնորհազրկուած վիճակում։ Երբազր ամէնից շատ իրաւունք ունի առելու, թէ՛ ճիշտ բանաստեղծ եմ եւ ուրիշ ոչինչ։ Նրա կարճ ու երկարաշունչ երկերում միեւնոյն փխիւտփայլ քնարերգու Շիրազն է։ Ներկայումս Միութեան թերթերում յաճախ են երեւում Երբազի գերհայրենասիրական բանաստեղծութիւնները։ Երբազի ստալինեան ժամանակաշրջանի երկերին ծանօթ մարդկանց կարող է թուալ, թէ Երբազը այժմ հակասում է իրեն, պատեհապաշտական որդաւորութիւններ փորձելով։ Բայց ոչ։ Երբազը չի հակասում իրեն եւ միշտ էլ նոյն Երբազն է եղել։ Արտաքին հակառակահոսքեան տակ կայ մի արատաւոր ստեղծագործական ամբողջականութիւն, որը, ինչպէս ասուում է, «Տատանում է, բայց չի ընկճւում»։ Քանի որ այստեղ հնարաւոր չէ Երբազի ստեղծագործութիւնը աւելի լայնօրէն բնութագրել, մէջբերենք նրա դէպ մի բանաստեղծութիւնը, տեսնելու համար, թէ ինչպիսին է բանաստեղծ Երբազի ինքնապատկերացումը։

Խիզ՞նս համգիստ է այնպէս,
Խիզ՞նս մանկան քնի պէս,
Որ չեմ քանգել իմ կեանքում
Նս ոչ մի կեանք, ոչ մի քայն...

Ով խիզ՞նս, աշխարհը մեղարձով լինի,
Առանց քեզ՝ ով խիզ՞նս, կը փոխուի քայնի։
Առանց քեզ՝ այն չեմ, իմ կաշուս եմ ինձ,
Առանց քեզ՝ կ'ընկնեմ ես մարդ- քայն-
ձուռքից,

Ով խիզ՞նս՝ գթաւքեան իմաստուն իմ քայն,
Պախիր աշխարհում սիրտս միշտ մաքուր,
Ով խիզ՞նս, իմ սիրտը ստիպում է քո

պերճ, -
Արցունքի ծովեր՝ քո սափարի մէջ,
Որ ես լացել եմ աշխարհի համար,
Մի ծաղկի համար,
Մի վերքի համար,
Մի կորէպուս տանջանքի համար...

Նոյնիսկ վերջին տողի «կորէպուս» պտրագայական բառն էլ իր տեղն է գործածուել։

Այժմեան բանաստեղծական համատեղութեան ամենափայլուն դէմքեր կարելի է համարել ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆԸ եւ ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆԻՆԸ, այն տարբերութեամբ, որ առաջինի երկերում գերիշխում է իմացական տարրը, իսկ երկրորդի երկերում՝ դպացական տարրը։ Սեւակն իր յողուածներէց մէկուն դրում է, թէ ինքը չի հաւատում բանաստեղծութեան «մտքի» ու «սրտի» բաժանելու ժամանակավրէջ տեսակէտին։ Այդ տառածի մէջ անվիճելի ճշմարտութիւն կայ, բայց նաեւ կարական ժխտում, ինչ որ թերի տեսակէտ է։ Հարցը հանգամանօրէն քննելու դէպքում հելտութեամբ կարելի է փարատել այդ թիրիմացութիւնը։ Առայժմ պայմանականօրէն ընդունենք վերին յիշատակած «իմացական» եւ «դպացական» տարբերի գերակշռութեան սկզբունքները։

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ (Ղազարեան, ծնւում 1924 թ.) հրապարակի վրայ ունի հետեւեալ գրքերը. «Անճանեբը հրաժայում են» (1948), «Անճաշտ մտերմութիւն» (1953), «Միտոյ ճանապարհը», «Նորից քեզ հետ», «Անուշի գանգակատուն»։ Սեւակը գրել է տարբեր ծաւալի չափանոյ երկեր, մեծ մասամբ երկարաշունչ։ Պարբերաբար հանդէս է գալիս անպայման ինքնատիպ յողուածներով (դրանցից յիշենք դէպ Կոմիտասի եւ Սայաթ Նովայի մասին գրածները)։ Վերջերս գրեց «Սայաթ Նովա» չարժանեղարային ոցենարը, որը եւ նկարահանման ենթարկուեց։ Իր հայրենասիրական բանաստեղծութիւնների շնորհիւ յայտնի դարձաւ նաեւ Հայկական Միութեան, Ահաասարակ Սեւակը գրեթէ աննախընթաց երեւոյթ է մեր բանաստեղծութեան պատմութեան մէջ։ Յայտնի է, որ երբ իմացական տեսակէտից առանձնապէս օժտուած գրողները փորձում են բանաստեղծութիւն գրել, գրեթէ անպայման ձախողւում են։ Սեւակը ոչ

միայն փորձել, այլևս լիովին յաջողել է՝ Ինչի մասին եւ ինչպէս էլ որ Սեւակը գրելու լինի՝ նա ամէնից առաջ բանաստեղծ է և այդպիսին պիտի մնայ մեր գրականութեան մէջ, նրա վերլուծական ոգին ուժեղ է, բայց իրերն ու երեւոյթները նրա ստեղծագործական հնոցում անպայման չեն տարրալուծուած, չեն ջախջախուած, այլ պահուած են իրենց հոսանքում եւ առաձգական ապրող ամբողջականութիւնը ու հետեւապէս մոռումքանստեղծական մարմնաւորման պատճառաբանողութիւնը Սեւակի համար բնորոշը մտքով երեւոյթների բուն էութիւնը, խորքը թափանցելու ճիշդն է, առօրեայ կամ ընկալեալ մակերեսային տպաւորութիւնները յաղթահարելու աներեւ ճշդութեամբ: Մտքի այդ տիեզերադնայի համար կեանքի բանաստեղծական իւրացման հորիզոններն անսահման են: Լայն ընդգրկումները, անպակաս շունչը եւ ներքնատեսութեան արտասովոր կարողութիւնը դեռ շատ ու շատ ուրախութիւններ կարող են պատճառել Սեւակին: Այդքան մեծ պատրաստութեամբ մամբայ ընկած բանաստեղծի երկերում, անշուշտ, կան նաեւ աչքի ընկնող թերացումներ, առաջին հերթին լեզուա-տեսական բազմաթիւ խրթին անհարթութիւններ, սահուն գրեւորման խուսափելու չպատճառաբանուած ելոյթներ, նարեկացիական՝ աշուրուայ տեսակետից անտեղի կուտակումներ, մտքի անարդիւն խաղեր, մեկ ու բազմաթիւութեան ներկայութիւն անհրաժեշտութեան պարագաներ: Բայց սրանք մտքով հարուստի կամաւոր անփութութեան հետեւանքով առաջ եկած պակասութիւններ են եւ ընդամենը յաղթահարելի:

Ստեղծագործական խառնուածքով Սեւակին ազգակից է Գ. ԻՄԻՆԸ, իսկ կիսով չափ էլ ՀՐԱՅԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ, ԻՄԻՆԸ (Կառլէն Մարտիան, ծնունդ 1918 թ. Աշտարակում) էր «Նախաշափղ» (1940)՝ ժողովածուից մինչեւ հիմա երկար ճանապարհ է կտրել, բայց ժբշտ էլ այս կամ այն առիթով քննադատական հարաւորներ կրել: Էմիլին

համար, գիտեալ սկզբնական ժամանակներից ի վեր ամէն կարգի մարդկանց ու զօրատուածներին: Հետ հաւասարէ-հաւասար, «Դու-ով խօսելու գրական եղանակից եւ շրջապատողներին միշտ մեծազարի իրաւաներ տալու սովորութիւնից բացի, և բնորոշ է նաեւ անընդհատ որոնումը եւ նա ուրիշներից աւելի յաճախ է վերամշակում իր արդէն տրուած բանաստեղծութիւնները: Այդ առթիւ հոյնպէս քննադատել են՝ նոյնիսկ նորողուող «Նոնորարի» հարց առաջ ջախջիւղ: Բայց դատաւոր պարզապէս խիստ անհրաժեշտ է ինքնիշխանութեան էութեան մէջ է: Էմիլին իւրաքանչիւր զգացական դատողութեամբ է մօտենում երեւոյթներին եւ շտապում է վերջնական կարակացութիւններ անել, իսկ երբ կեանքին զուգահեռ միտքը անում է եւ ապուշ եղբայրակացութիւնը մոռում՝ Էմիլին կարծես իր մէջ չփոթութեան է մտանում: Եւ այդպէս անընդհատ: Այսօր նա զանաւում է իր «Երկու ճամբայ» (1962) ժողովածուի մակարդակի վրայ, բայց նրա որոնման ընթացքը ոչ մի կանխիկ երաշխեք չի ճանաչում: Էմիլին գրել է շարժական կարգային փոստանկարներից սցենարներ, կատարել թարգմանութիւններ, մի ժամանակ սիրահարուած էր Կորէային եւ առհասարակ ղեկին աշխարհին ու բաւական ճամբորդից այնտեղ «խաղաղութեան» դժոյժ: Էմիլին եռանդուն եւ մի քիչ էլ «կուտարար» բանաստեղծ է, վիճարանող: Ահա մի փոքրիկ նմոյշ նրա «Ջրոյց փարթեցու հետ» նշանաւոր բանաստեղծութիւնից, որը այսպէս է սկզբանում.

«Կա՛ց, ո՛ւմ դուռն եւ դու ում առաջ փակում՝
Սուտ ելլաւ տալով անաւար մեր
դարի,
Հանգի՛ստ, քեզանից եւ չե՛մ սարսափում,
Յիսաւո՛ւմ՝ յեղի եւ մի՛ խանգարի,
Այսպէ՛ս.

Թէ լոյս եւ ազում քարոզի,
Ինչո՞ւ եւ դիմէ՞ք քաջքնում մթում...»
Ինչպիսի:

ՀՐԱՉԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԻԱՆԸ (ծըն-
ուած 1919 թ. Կոտայքի Եսահաճ աշտ
Մայակովսկի գիւղում) իր բարեկամե-
րի կողմից համարուած է քանդակա-
քոյց բանաստեղծ: Արդեօք այդպէ՞ս է.
հետուից-հետու գիւղում է հաստատել:
Բայց երբ յիշում ենք, որ Յովհաննիսեանը
15 տարեկանում առաջին անգամ
ենց պատանի ստեղծագործողների հո-
մայտախմբումն էր մտնում, որ հետագայում
թեմայի վրա իր տարեկիցների
չարքում արժանաւորապէս անկէնց հը-
նչակաւորն էր, եւ տեսնում ենք, որ մի-
շուհի, հիմա քննարկելով մի քանի ժողովու-
ծու է լոյս աշխարհ հանել (գիտ կեանքի
երգը - 1948, «Եղեկոյրդ հանդիպում» -
1951, «Հրաշալի աղբյուր» - 1959), -
սկսում ենք մեր հերթին եւս լրջորէն տա-
րակուել: Յովհաննիսեանը քնարերգու
է, բայց նրա բանաստեղծական տպաւո-
րութիւնները սովորաբար զտուած եւ
մշակուած վիճակում են երեւում, հոգե-
կան թորման խողովակներից անցնելուց
յետոյ, ուստի եւ ձեռք բերում իմացա-
կան վաւերականութիւն: Հում զգացում-
ներ եւ մտքեր հապճեպորէն թղթին յանձ-
նելը բնորոշ չէ Յովհաննիսեանի համար:
Նա թէեւ իր գրական կեանքի սկզբնա-
կան շրջանում աչքի էր ընկնում խանդա-
վառ զգացումների յորդառատութեամբ,
այժմ գուցէ, մեղմ ու խոհական, եր-
բմեմ էլ մի քիչ երազային ու անհասկե-
նալի: Կամայ-ակամայ «կլորացուած»
տեղեր լատ կան: Առայժմ Հրաշալի Յով-
հաննիսեանը, որքան գիտենք, մեծաշուշ
երկեր չի գրել, հաւատարիմ է փոքր յա-
փերին:

Բոլորովին այլ, հրաբխային խոռ-
նուածք ունի ՎԱՀԱՅԻՆ ԴԱՅԻՍԻԱՆԸ
(ծնուած 1922 թ. Կիրատամերձ Արաբ-
կիր քաղաքում): Ոչ մի գրողի անուն
այնքան չի համապատասխանում իր ըն-
տեղծագործական խառնուածքին, որ-
քան Դաւթեանի անունը. երբ ասում ենք
«Վահագնեան շունչ», անմիջապէս պատ-
կերացնում ենք՝ գերկնէր երկին եւ եր-
կիրը - շարժում, պայքար, երկունք եւ
այդպէս ըստուհալ: Դաւթեանի գրքերն

են. «Առաջին սերը» (1947), «Ախարհի
առաւօտը» (1950), «Ճանապարհ սրտի
միջով» (1953), «Եւստրատի լեռներում»
(1957), «Թոնդրակիցներ» (1961): Դաւ-
թեանը ուղղակի սրտով է գրում: Նա ե-
րևոյթները չի նկարագրում եւ համե-
մատում, դրանք չի մշակում: Եւ խոր-
հրդանշական պայմանական միաւորնե-
րի վերածում, այլ նորմանում է նրանց
հետ, ներքուստ ճշգրտալիւսումնա-
նում, խո-
րատուում ապրումների տիպիքի ա-
նկալ ծովում ամբողջ իր հոգեմտութեան
ու նկարագրելով, դառնում տիպերական
անտես հոսանքների մի կենդանի հաղոր-
դիչ, մի զգայաւոր խոսակցիչ, բայց
եւ մնալով կուռ ամբողջութիւն, կենտ-
րոնական գործոն տարր: Նրա ստեղծա-
գործական պատասխան լայն է, ընդգը-
կում է հոգեկան շարժման կորագծի բո-
լոր մակարդակները, ամպրոպային հը-
զօրութիւնից մինչեւ նրբահիւս ու ման-
րիմ մեղմութիւնը: Նա կարող է երբեմն
սխալ եւ անվաւեր, կիսափ մտքեր ար-
տայայտել ու օրինակելի պատգամախօս
չլինել, բայց անկարող է գիտակցօրէն
կեղծել, միշտ անմիջական է եւ բոլոր
դէպքերում էլ կարող է համարուել բա-
նաստեղծական ընկալման ստույգ միա-
յութիւն: Չնայած յորդառու կրքի ա-
ռատութեան՝ Դաւթեանի ստեղծագոր-
ծութիւնը ինքնակորոյս կուրուքեամբ չի
տառապում, այլ փայլում է բարոյական
զտարին եւ գիտակից նպատակադրում-
ների պայծառութեամբ: Հերոսականու-
թիւնը օրգանապէս անհրաժեշտ շարժիչ
ուժ է Դաւթեանի հեռագնաց թռիչքի
համար, ուստի նա ալ ու ձախ է ընկ-
նում՝ հերոսավայել թեմաներ ընտրե-
լու, բայց հանդիպում է զանազան տու-
րութեանն աքսորականների եւ կուրա-
նների միջով է, նա իր երկերը երբեմն
համեմատում է Ջէյթունով եւ Սասունով,
բայց դրանով հարցը չի լուծւում: Դաւ-
թեանը կարիք ունի իր ստեղծագործա-
կան թափին վայել հերոսական թեմանե-
րի: Բուռն եռանդով լի բանաստեղծը,
եթէ նորինսկ ուղեւայ, չի կարող ամուլ
անգործութեան մատուել: Վահագն

Գաւթեանը զբաղւում է նաեւ թարգմանութիւններով. արդէն բաւական շատ թարգմանել է ուսուցիչներից, որոշ կը տորներ հունգարացի Շանդոր Պեանֆիլից եւ շոտլանդացի Ռոբերտ Բէօրնից, աշխատում է Բայրոնի երկերի վրայ: Բայց նրա ստեղծագործական տարերքին յարմար հեղինակները, թուում է, աւելի բազմաթիւ են միջերկրականեան աւազանում, որոնց երեւի դեռեւս չի անդրադարձել:

Ստեղծագործական նոր խառնուածքն ունի նաեւ ՀԱՄԹ ՍԱՀԵԱՆԸ (Հմայեակ Գրիգորեան, ծնուած 1915 թ. Զանգեզուրի լոր գիւղում), այն տարբերութեամբ, որ առաւելագէտ կենտրոնացած է փոքր, խտացուած ու հիւթալի եւ կոկիկ բանաստեղծութիւնների վրայ ու տակաւին որեւէ երկարաչունջ երկ չի գրել, թերեւ էլ երբեք չգրի, քանի որ դա կը նշանակի դուրս գալ իր ոլորտից: Սահեանի գրքերն են. «Որոտանի եղբրքն» (1946), «Առաջատար», «Միաժանը տափաստանում», «Բարձունքի վրայ», «Հայաստանը երգերի մէջ» եւ այլն: Սահեանի երկերը աչքի են ընկնում զգացական առաւելագոյն յազնցուածութեամբ, խօսքի շեշտակիութեամբ, արթուն անկեղծութեամբ, չափի զգացումով եւ թանձրացեալ մթնոլորտով:

Առաջնակարգ բանաստեղծների համաստեղծութեան մասին խօսելուց յետոյ (Կապուտիկեանի եւ Մարո Մարգարեանի մասին կը խօսուի մի այլ առիթով), արժէ յիշատակել նաեւ այն բանաստեղծներին, որոնք թէեւ առաջին շարքերում չեն, բայց եւ արհամարհելի չեն: Նըրանք առայժմ չնշտուած անհատականութիւն չունեն, կամ այդպէս է թւում, բայց աւելի կամ պակաս եռանդով մասնակցում են իրենց սերնդի գործունէութեանը: Այս անգամ անուններն ու որոշ գրքեր յիշատակելը բաւական համարենք: Այդ բանաստեղծներն են. — ՄԻԲԱՏԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (ծնուած 1919 թ.) — «Հարսնաբար» (1946), «Գարնանային», «Էկոնային աղբիւր», «Պատիւ»: ՍԱՂԱԹԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (ծնուած 1921

թ.) — «Իմ մայնով» (1947), «Ապրիլ», «Հայրենի գիւղ», «Թէ ինչ է շինում առուն»: ԱՐՇԱԼՈՅ ՍԱՐՈՅԵԱՆ (ծնուած 1923 թ.) — «Զինուորի խոհեր» (1947), «Ճանապարհներ», «Պաղարկութեան երթը», «Սարն է վեր»: ՎԱՀԱԳՆ ԿԱՐԵՆՑ (ծնուած 1924 թ.) — «Լիրիկա», (1954), «Աղբիւր», «Արաւետաբույս», «Քաղաքի Գրիգորեան» (ծնուած 1926 թ.) — «Հայրենի աղբիւր» (1961), «Գարնան ծաղիկներ», «Շրջանկութեան ճանապարհներ»: Աւելի քիչ են յայտնի ԱՐԱՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆԸ, ՇՄԱՌՈՐ ԹՐՈՍԵԱՆԸ, ԱՅՈՏ ԼՈՒՍԵՆՑԸ, ԻՅԿ ԱՐՏԱՇԷՍ ՊՅՈՍԵԱՆԸ իր սեփական ըստեղծագործութիւններից աւելի նշանաւոր է որակեալ թարգմանութիւններով, մանաւանդ ուսու բանաստեղծ Տոնադորովսկուց:

Թ.

Յիշեալ սերնդի արձանագիրներից առաջին տեղն է բռնում, անպայմանորէն, ՍԵՐՈ ՌԱԶԱԿԵԱՆԸ (ծնուած 1916 թ. Գորիսում): Նա թէեւ ապակերտաբեր գրերն սկսել է 1933 թուականից, թէեւ նրա «Վահրամ Որոտանցի» պիէսը բեմադրուել է դեռեւս 1940 թուին, — բայց ամբողջովին 50-ական թուականների գրող է: Յայտնի են նրա «Մեր գնդի մարդիկ» (1950), «Հողը» վեպերը, «Կարմիր շուշաններ», «Քարանձառի բլրակները» գրքերը եւ, վերջապէս «Մեր խիթար Սպարապետը»: Այժմ պարտաւորում է «Փառարանը»: Պանդազեանը գրում է նաեւ բազմատեսակ ակնարկներ: Հայրենի հողը ու նրա ժառանգական իրաւատէր աշխատուոր մարդը՝ Պանդազեանի ստեղծագործութեան առանցքային թեման է, ընդամենն աշխատանքը մարդուց անջատ չի ըմբռնում, այլ դժբանք արժէքաւորում են միասնաբար: Պանդազեանը իր յօդուածներում եւ գեղարուեստական երկերում առանձին խորշանք է տածում բախտախնդէր ճնշի

ազատանքի» եւ ամէն կարգի պորտա-
բոյծները նկատմամբ: Հայրենիքն իր
անցեալով, ներկայով եւ ապագայով
դառնում է խանդավառի ուշադրութեան
կենտրոնում: Խանդավառի գրիչը բե-
ղուն է, իսկ դրական հետաքրքրութիւն-
ները թէեւ որոշակի, բայց փաստօրէն
անընդարկելի: Նկատելի է նաեւ նրա հո-
գատար վերաբերմունքը դրական նոր
սերնդի հանդէպ:

Խանդավառի հետքերով է ընթա-
նում նաեւ ՍՈՒՐԻՆ ԱՅՎԱԶԵԱՆԸ (ծնե-
աւած 1915 թ. Խնձորենկում), սակայն
նուազ յաջողութիւններով: Գրել է «Յո-
րաժողովրդ» (1951), «Լեռնային», «Ան-
շէջ կրակների կղզին» եւ այս «Տո՛ւր
ձեռքդ, կեանք» գրքերը: Այվազեանի
թերութիւնը իրաւամբ համարում է ան-
կարելի մանրամասնութիւնների մէջ
խրուելու: Նրա սէրը, կենցաղային ու
հասարակական մանրութիւնների տակ դը-
րական առանցքային յղացումը տկամայ
թաղելու տեսական սովորութիւնը: Այ-
վազեանը երբ փոքր ձեւից մեծին է անց-
նում՝ կարծես դժուարանում է ծայրը
ծայրին հասցնել: Բայց եւ այնպէս նա
դեռեւս ամէլիք ունեցող արժանազանի-
րից է եւ ճանապարհի դժուար տեղը ար-
դէն անցել է:

Ինքնատիպ գրող է ՎԻԳԻՆ ԽԵՉՈՒՄ-
ԵԱՆԸ (ծնունդ 1918 թ. Երեւանում):
Հայնօթէն յայտնի է նրա «Ջուարթնոցը»
(1945): Ժամանակակից գործարանային
կեանքից վերցրած «Մեզ մօտ հարա-
ւում» (1955) մէջը՝ դրական հասարա-
կայնութեան կողմից տնայաջող համար-
ուեց: Խեչումեանը տակաւին չգերա-
զանցուած մասնագէտ է միջնադարեան
կեանքին վերաբերող գեղարուեստական
պատմութիւններ գրելու մէջ, ինչպէս եւ
հմուտ է ժողովրդական հոգեւոր կենցա-
ղի ու մտայնութեան արդի հարցեր շո-
ւափելու: 1959 թուին լոյս տեսաւ նրա
«Գիրք պանդխտութեան» պատմութեան
ների ժողովածուն, իսկ աւելի ուշ՝ «Ներ-
կեր եւ երանգներ» գիրքը: Խեչումեան
քանակով այնքան էլ չատ չի գրում,
բայց նրա ամէն մի գործ ինքնուրոյն եւ

ինքնատիպ է, յաճախ էլ վիճարանու-
թիւնների առիթ:

ԽԱԺԱԿ ԳԻՒԼՆԱՉԱՐԵԱՆԸ (ծնունդ
1918 թ. Երեւանում) գրող է եւ դրակա-
նագէտ (գրել է գրքեր մանկական գրա-
կանութեան եւ Վ. Անանեանի մասին):
Բաղմաթիւ գրքերի հեղինակ՝ մանուկ-
ների, մանաւանդ պատանիների, ինչպէս
եւ տարեցների համար: Յիշենք մի քո-
նիւր. «Գալտի աչքերը եւ հիւրերը»
(1951), «Էլաւ ճանապարհորդներ», «Օրե-
րի ճանապարհորդներ» եւ «Քաղաքի առաւո-
տը», «Կէսօր», ու «Շաբաթը» եւս-
գրութիւնը: Պատանեկան կեանքի, ժո-
ղովրդական կենցաղի թրաղել պատմիչ է,
ախտոյժ եւ հիւթեղ յեղուով: Ունի պատ-
մբանքներ պատմադասկան գերութեան
օրերի մասին: Յուսատու գրողներից է:

Պատանիների եւ տարեցների համար
է գրում նաեւ ՇԱՀԷՆ ԹԱԹԻԿԵԱՆԸ
(ծնունդ 1924 թ. Թբիլիսում): Նրա
գրքերն են. «Քաղաքական օրը» (1950),
«Լեռնային», «Մարդիկ», «Նրա ճանա-
պարհը» եւսահատոր մէջը եւսայն: Ա-
ռայտ թաթիկեանի ոճը չի բերեցա՞նք
լիովին, բայց նրա ստեղծագործական
ուղղութիւնը, խառնուածքը, նախասի-
րութիւնները եւ կարողութիւնները միան-
գամայն ակնյայտ են: Նա այն քիչերից է,
որոնք լուրջ կարեւորութիւն են տալիս
երկրի հերոսների վարժունքի հոգեբա-
նական պատճառարանութեանը: Պարո-
դանում է մօտաւորապէս դտնել միա-
ժամանակ հոգեբանական ու զաղափա-
րական հարցեր շօշափելու զեղարուես-
տական քանալին: Երիտասարդական հո-
գեբանութիւնը շատ սրտամօտ է թաթիկ-
եանին ու թերեւս այդպէս էլ երկար ժա-
մանակ շարունակուի, քանզի դժուար է
երեւակայել, թէ մի օր թաթիկեանը կա-
րող է ինքնակամօրէն հրաժարուել երե-
տասարդական ապրումների խոփայտ
ոլորտից եւ հրապուրուել ծերունական
ճաշակի գատողութիւններով:

Գազակերպուող գրողներից է ՄԻ-
ԳԱՅԷԼ ՇԱԹԻՐԻԱՆԸ (ծնունդ 1918 թ.
Թբիլիսում): Գրել է. «Պատմութեան

ներ» (1950), «Զինուորներ», «Գարունը նորից է դալիս»: Ընդհանրապէս պատմաբանները եւ վիպիկները Շարժականության ոգեկոթերի հեղինակ: Վերջերս մամուլում բաւական ժխտական խոսակցութիւններ յարուցեց նրա «Արեւը եւ ծնեք» վիպակը: Շաթիրեանը համեմատաբար քիչ է տպւում, առայժմ անփական հետաքրքրութիւնների տեւական ուղղութիւն կարծես թէ չունի, բայց վիպելու շնորհը անվիճելի է: Միշտ էլ կարելի է տնական զործերի սպասել: Միանգամից աչքի ընկած արժանագրերից են ԲԱՂԻՇ ՅՈՒՍԷՖԻԱՆԸ եւ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԻԱՆԸ, այնքան նոր, որ նոյնիսկ նուագադրոյն կենսագրական տուեաներ չկան նրանց մասին: ԹՈՒՎՍԷՖԻԱՆԸ (ծնունդ Սեւանայ լճամերձ Ալուշալու գիւղում) 1958 թուին ապել տուեց «Սեւան» պատմականների ժողովածուն, իսկ 1962 թուին՝ «Սերմնացանները չվերադարձան» վէպը: Մամուլում յաճախ հանդէս է գալիս ակնարկներով եւ յօդուածներով: Պատերազմական կեանքից դուրս իր վէպում Յովսէփեանը ի յայտ բերեց արձակագրի փայլուն կարողութիւններ: Առայժմ քիչ է գրել, բայց բոլոր դուրսածներն էլ լեցուն հասկերի պէս ծանր են կշռում: Տարակոյս չկայ, որ ընթերցողները

միայն մէկ պահանջ կարող են ունենալ Բաղիշ Յովսէփեանից. գրե՛լ, գրե՛լ եւ դարձեա՛լ գրել, անուշտ, տպագրուելու պայմանով: ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԻԱՆԻ առաջին գիրքը («Երգեր» - 1957) բանաստեղծութիւնների ժողովածու էր, բայց նա մամուլում տպուած ուրիշ երկերով, մանաւանդ «Յեանքը կրակի տակ» ժողովածուով ապացուցեց, որ նաեւ արձակագիր է, առաջնակարգ արձակագիր, բանաստեղծ արձակագիր, լատի մասին ի՞նչ կարելի է ասել, երբ արդէն լաւագոյնն է սպասում՝ մարտահրաւիր կարգաւով: Սարգսեանը գրում է խանդով, գիտակից յափշտակութեամբ: Նրա առջեւ դեռ երկար ժամանակ կայ. մեռւմ է միայն առաւել իմաստաւորել մնացեալ ուղին:

ԹՎՅԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆԸ (ծնունդ 1921 թ. Էջմիածնում) գրել է «Ռուբինեան Եղբայրներ» (1954) եւ «Ռուսա որդի Արգիշտի» գրքերը ու ժամանակ առ ժամանակ երևում է գրական մամուլում: ԲՈՂԻՇ ՎԵՐԴԵԱՆԸ գրել է «Քեզ համար, Լենինգրադ» (1951), «Ժնչպէս է դալիս երջանկութիւնը» եւ «Լեռների որդին» գրքերը:

(Շար.)

Լ. ՄԿՐՏՅԱՆ

ԱՐՈՒ 'ԱԼԱ ԱԼ - ՄԱ՝ԱՐՐԻ

ԱՐԱՐ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԸ

ՄԱՐԳԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԸ .—

Մինչդեռ Արուլ 'Ալան ընդունելով Գերադոյն մի էակի զոյութիւնը, ուրիշ ամէն ինչ համարում է լոկ խաբէութիւն՝ նա իր քարոյական հասկացողութիւնների մէջ, որոնցով սահմանորոշում է իր եւ իր նմանների (այն է՝ գիտակցօրէն պարկեշտ մարտկոթեան) կենցաղը՝ նա հետեւում է շօշափելի, կոնկրէտ չափանիշների: Մարդկութիւնը պիտի լինի արդար եւ բարոյապէս՝ անխոցելի: Ուրիշ որեւէ չափանիշ նրա համար զոյութիւն չունի: Ուխտագնացութիւնը, մահճողականների գերազոյն նպատակը, ՀԱՋՁԸ, — նրա ծաղրի առարկան է, նա այդ համարում է անտիապաշտութիւն, հեթանոս օրերից մնացած մի հնամենի սովորութիւն եւ զեռ աւելին՝ այդ ուխտագնացութիւնը նրա համար պատկերացումն է տգիտութեան, քարոյական սնանկութեան (նիկոլսոն էջ 191-193):

Եթէ Արուլ 'Ալան, հակառակ իրաւամբ, մերժում է խմել եւ հարբել, դա ոչ թէ զրկանք է յանուն Մարգարէի պատուիրանների, այլ հետեւանքն է այն համոզման, որ վայրկեանական հաճոյքի վայելքը պիտի բթացնի նրա մեծագոյն պէնքը, բանականութիւնը: Խմելքը թշնամին է բանականութեան եւ դրա համար է որ նա չի խմում:

Արուլ 'Ալայի համար մահը՝ անկատարի անխուսափելի մի հարուածն է. հետեւաբար մարդ պիտի չլինենայ մահուանից: Մարդը պիտի համակերպուի մահուան մտքի հետ բոլոր այդ համակերպութիւնը պիտի ստորաբարձր ընոյթ չունենայ այլ պիտի հպարտ լինի եւ արհամարհական, դա իր մէջ պիտի պարփակի մարդկային սգու ազատութեան տենչի ամբողջ մեծութիւնը:

Ես չեմ վախենում: Թող մահն մօտեմայ:

Ով անցնի սեմից մահուան՝ առաւել դեռ հպարտ է մա:

Ում քր գտել է մահը, մա այլեւս պէտք չէ կասկածի,

Ոչ էլ վախենայ: Ես չեմ վախենում:

Թող մահն մօտեմայ:

Ինչո՞ւ վախենալ մահուանից, երբ դա վերջակէտն է մեր բոլոր տառապանքների, ցաւերի, հիւանդութիւնների, անկարողեան:

Աստուած իմ, արդեօք ես հ"րբ կը քաղմեմ աշխարհը այս սին:

Արդէն յոգնել եմ երկար ապրելուց:

Ո՞րն է իմ աստղը: Ո՞ւր է տարաբախտ ու չարագուշակ

Իմ ճակատագրի այդ աստղն անգնիմ:

Կեանքը մի ցաւ է, մի հիւանդութիւն, անճար, անդարման,

Եւ մահն է միակ դարմանը ճրար, երազած մի միմը

Յաւիտեանակամ:

Մահը համարում է նա փոխարժէք այն բոլոր տառապանքների, որոնց մենք պիտի հանդուրժենք, կեանքի այս մտածին «խնջոյթին» կարճ մի պահ դառնութիւն համար: Այստեղ եւս հեզեանքն ու դառնութիւնը խառնուում են միմեանց:

Հրաւիրուած ես, ասեմք, կեանքի մեծ խնջոյթին
Սւ պատրաստ ես դրա փոխարժէքը վճարել
Արցունքներով, տառապանքով կամ խնթութեամբ
Սւ կամ մահուամբ: Մի՞թէ մահը չ'արժէ աւել:

Նոյն արհամարհական մօտեցումն է որդեգրում նաեւ Խայեամը մահուան հանդէպ, երբ գրում է.

Մէկ անգամից աւելի քանի որ մահ չէ գալու,
Մենքիք տպա մէկ անգամ, անհարութիւնն էլ ինչո՞ւ:
Մի բուս կաշի աւ ռսկօր, մի քիչ արիւն եւ ապաւ,
Ինչո՞ւ այդքան տառապանք — մի բան չ'արժէ դա բնաւ:

(Թրգմ. Յ. Մ.)

Եթէ մենք ուզէինք Աբուլ 'Ալայի կենցաղային բարոյագիտութիւնը չորս տողի մէջ ամփոփել, գուցէ չգտնէինք Խայեամի հետեւեալ քառանկից աւելի լուս, ամփոփ եւ արտայայտիչ մի օրինակ.

Եթէ ցանկանաս հասնել սրբութեան մի աստիճանի,
Քեզանից գրկանք ռեւէ մարդաւ մի քաղնիք հասնի:
Մի վախիք մահից եւ մի մտածիր ապաւստի մասին,
Քանզի անպայման կը հասնեն դըքամի՝ հասնելու ժամին:

(Թրգմ. Յ. Մ.)

Մահը Աբու 'Ալայի համար ճակատագրի վերջին եւ գերագոյն ծաղրն է, «զանազի ծիծաղը»:

Գազանի մի ձեռք քաղնուել է այս խաւարում,
Որ պատառի կեանքիդ փողը անլուր քեզից.
Ոնրագործ չէ՛: Այլ դա ցոյցն է մի նոր օրուայ,
Որ կը շարայ, ինչպէս ծիծաղը՝ դանակից:

Օրերը անցնում են անուշիք, գիշերը կլանում է ցերեկուայ լոյսը եւ այդ խայտաբղէտ երկօրեակները լափում են մէկ կեանքը անտարբեր եւ յամառ միօրեակութեամբ.

Խաւարի մէջ կըլանում է
Արշալոյսի աչքը բացար.
Գազանները այս երկօրեակ
Լափում են կեանքն մեր ամէն օր:

Կեանքը նա նմանեցնում է ժայռածուռ մի ծովեզրի, որի վրայ փրշրբում են մարդկային ալիքները, կատաղի եւ անօգնական մոլուցքով.

Փանգնել ենք ծովի ժայռածուռ ափին,
Ուր պիճները երգում են անաւ.

Ձարկում եմ, հշում ձայնով մոլեգիմ
Բառեր կրկնում, խօսքեր հնօրեայ:
«Մեծք, որ մեր երգով պատրաստ եմք սմում»
«Ծնում եմք ափիմ կախարհում լոյսի»
«Լիզում եմք հիմա ափն այս ժայռածուտ»
«Որպէս կայանը մեր վերջին յայտի»:

Այս յոռետես յուսալքումը վերջապէս նրան առաջնորդում է դէպի Մանիրայան այն հասկացողութիւնը, որ մարդկութեան դոյութիւնը ինքն ինքստիւնքեան մի շարիք է, որը պիտի վերացնել ջնջելով մարդկային գոյութիւնը եւ այդպիսով վերագտնել տիեզերքի հաւասարակշռութիւնը, որի մէջ գերազանց էական է ինքը ՄԱՐԴԸ, ձերբազատուած ճակատագրից եւ նախախնամութիւնից: Մարդիկ, եթէ բնական լինէին, երբեք չէին բազմանայ եւ պատճառ չէին դառնայ նոր ծնունդների, որոնց սահմանում է միայն բազմապատկել աշխարհի տառապանքը: Հետեւելով իր իսկ փիլիսոփայութեան, Աբուլ Ալան իր դաժմանի վրայ փորձելու տուեց այն հասկնալու, որը մարմնացումն է նրա յոռետես յուսալքման:

Այդ բոլոր դառնութեամբ հանդերձ, Աբուլ Ալան չի կարողանում չտեսնել արարչազորութեան գեղեցկութիւնը, տիեզերքի անբացատրելի ներգլխանկութիւնը եւ գալիս է այն եզրակացութեան, որ ՄԱՐԴԸ է որ ապականում է այդ գեղեցկութիւնը: Այդ միտքը նա արտայայտում է շատ գեղեցիկ մի այլաբանութեամբ.

Վարդի բուսր քաժակի մէջ աղբում էին հանգարտ ու հեզ
Նրկու ճարպտ, Բխիկ որդեր, մահիճի մէջ նրբաբեհեզ:
Մ'էկը դարձաւ միւսին ասաց. «Որքան հանգիստ իշխանական,
Կեանք է շնորհել Արարիչը մեզ փառկաւում եւ պատուական»:
Միւսը դարձաւ ու դժգոհեա՝ իր ճարպկաւոր եղբորն ասաց.
«Ի՞նչ կեանք է սա, քանտ է դաժամ տիեզերքում լայնատարած»:
« - Ամուշ է ի՞նձ քանտ այս տաճակ» - ասաց միւսը - Եւ ես կ'երգեմ»
«Փառքը հիմա այս իմ բանտի, որը դիպտ է ու եղեմ»:

Եւ ձայնեցին որդերը կուշտ՝ փառքի մի երգ լիաքաղաք
Ու երգեցին օրեր ամբողջ իրենց քախտը այդ երկնառաք:
Ու քնդում էր միմյնեւ երգը այդ որդերի սրտանմանիկ՝
ԳԵՂԵՍԿՈՒԹԵԱՆ իր փԱՌՔԻ ՄԷՋ ԼՈՒՌ ԷՐ ՎԱՐԴԸ ԵՒ - ԳԵՂԵՍԿԻԿ:

Մարդկային ցեղի համար նրա արդահատանքը անսահման է:

Երբ մի կայր տեսնես, մի խղճա՛ մրան,
Եւ վստահ եղիր, որ բալուս մեմք,
Տեսնող աչքերով, բերեքով լուսեղ՝
Մուքում խաթախեղ լուկ կայրեր եմք հեզգ:

Մարդը, հակառակ իր կարծեցեալ մեծութեան, չի կարողացել եւ երբեք չէ կարողանալու ձերբազատուել իր կենդանական սկզբունքից, որը նրան մեխում է հողի վաղ խորնքին, որքան էլ որ բարձր լինի նրա գաղափարը:

Ես նայում եմ մարդուն ինչպէս կը մայէի բարձր ծառին,
Որ գրում է սեւ մատներով քառեր՝ կարմիր հարիզումին,
Մինչդեռ արմատը այդ ծառի մխրճունի է գաղջ հոգի մէջ
Եւ ճըքա բունը հաստաբետ շուրթ է հպել խոտի շուրթին:

*Նոյնքան հեղեականօրէն է նայում նա «Աստուածային այն էակին», որը իր
հոգու զարթոյցին կը կոչուի խանձել ու ոչնչացնել չի կարողանում նոյնիսկ
օրուայ փոքր ու ճղճիմ իր հոգսերը:*

Տէրը ստեղծեց իր սրբազան Բացի համար
Խորժքը մարդու և Աստուածային մի կրակարան և
Միմէ այդ այդ բացը անկարող է խանձել մայմիսկ
Թիթեռներին՝ որ մեր հագստին են աննշան:

*Մարդկային աշխարհի, բարոյագութիւնի նկարագրի եւ արիւնառուչ
քննադատութեան խառնուրդը նա ցոյց է տալիս Հեռեւեալ Հաստուածը:*

Հասում մարդիկ մեծուկներ են հեղգ աւ թռթռով,
Նրանց անմեղ օրօրացն է թամբը ազտի:
Եթէ խօսես՝ չեն հասկնալ: Իսկ թէ խօսեն՝
Խօսքը ճրանց բարբառնէ է օտարաւոր:

ԱՐԳԱՆԱՏԱՆԻ ԴԵՊԻ ՄԱՐԴԻ --

Արտը՝ Այան հակադաս մի արդարացում է զգում զէպի բոլոր կեն-
դանի էակները, որոնք ակամայ զոհերն են անողոք ճակատագրի: Այդ խո-
րը խղճահարութիւնը զգալի է նոյնիսկ նրա ամենադառն երգիծանքի մէջ:
Նա խղճում է բոլոր գրկուածներին, թշուառներին, ծերունիներին, թոյլե-
րին, սարկներին: Նրա համար բոլոր ազգերը եւ բոլոր կրօնները հաւա-
սար են եւ նա կատարեալ արդարութիւն եւ հաւասարութիւն է պահանջում:
Նրա համար ընտրեալ մի ցեղ զոյուրիւն չունի, ինչպէս զոյուրիւն չունի
ընտրեալ մի կրօն կամ վարդապետութիւն: Նրա համար Մարգը, լինի դա
ճորտ թէ իշխան, հաւասար իրաւունքներէ տէր է:

Տես այս գաւաթը որը փշրուեց մարտիկ ռաբի տակ:
Ամէն մի գաւաթ կարող են փշրել շարժմամբ քմահաճ.
Բայց մարտիկ, յիշի՛ր, ասքում է քեզնով, դիրքին քա կամքի,
Միմիզեա նրա մէջ մեծ խոնարհում եմք Արարչի առաջ:

*Նա միաժամանակ ջատագով է խաղաղութեան. պատերազմը եւ ա-
րիւնյաղութիւնը նա համարում է մարդկային բնածին ինքնապանծացման
եւ զոհիկ ուժի արգասիք: Պատերազմը գերազույն ապացոյցն է մարդկա-
յին գոյութեան հոգու եւ ներմտութեան:*

Ով զօրավար, կիրքըդ գապիր,
Ինչի՞նչ է պէտք գահ ու մախիթ,
Հակառակորդ ծաղրում է քեզ,
Դէմքը քրջած արեամբ կարմիր:

կամ՝

Տես, փեշը վարդի մեղձուկ է հավից,
Սախակը վարդով զարձել խնդագին.
Նստիր վարդի տակ, որ շատ վարդ այսպես
Բուսնել է գետնից ու քափել գետին:

(Թրգմ. Յ. Մ.)

Դրա փոխարեն, համարեա նոյն շնչով, բայց փխրոփայական աւելի խորութեամբ (ծնունդը եւ ժաշը կապելով իրար) եւ բանաստեղծական սպակաւ ներութեամբ, հետեւեալն է ասում Աբուլ Ալան.

Խօսիր միայն այգեբացի սիւֆի հետ այն
Որ էշում է քերթիկները վարդի խելառ.
Նա գրկել է սուկէ խինդը ամծին սերմի
Ու վարդեմու վերջին հառաչը ցաւագար:

Ինչպէս գիտենք, խախտելով կուժին ու բրուտին նուիրուած քառասկներէ մէ ամբողջ շարք է գրել, որոնք յայտնի են «ՔՈՒՋԷ-ՆԻՍՄԷ» (Սափորադիրք) անունն տակ: Հետաքրքիր է նկատել, որ նոյն ոգով գրել է նոյնպէս Աբուլ Ալան, ղեռ խախտելից առաջ.

Մի օր գիտեմ, այս քրտուր հող կը դառնայ,
Ուրիշ բըրուտ, ճըրա հաղից կուժ կը շինի.
Հարբածները կուժի գինին կը դառարկեն
Ու կը զարկեն դատարկ կուժը մի այլ փարի:

Եւ վերջապէս խախտական կարելի է կոչել հետեւեալ հատուածը, ուր Աբուլ Ալան, հակառակ իր համոզումներէ, դուցէ ահնդ եւ երջանիկ մէ բուպէի, յորդորել է ուրախութեամբ ոնց կացնել անցաւոր այս կեանքը:

Տես այս շէքրքը, որը անցնում է քաղաքի միջով.
Դա սեւ ու մերմակ օրերիդ յամառ շէքրքն է անա,
Ու դու փոխարէն ճըրամ հետեւես ռզր ու կսկիծով՝
Մնծալայ ու ծափով, անհոգ ընթացիր հոսանքով ճըրա:

❦

Մանթանալով Աբուլ Ալա աւ-Մաարրիի ստեղծագործութեան եւ դրա մէջ արտայայտուած նրա մտքերի ու փխրոփայութեան հետ, չենք կարող զսպել մեր հիացմունքը եւ միաժամանակ զարմանք դէպի նրա ազատամիտ, հակա-անտիրապաշտական, մարդասիրական եւ համամարդկային զգացումները, որոնք ակամայից մեզ ստիպում են նրան համեմատել Իրանի 11-րդ դարու կրօնական-ազատագրական մեծագոյն շարժումների հետ, որոնք լայն արձագանգ են գտել պարսիկ արձակ եւ չափածոյ դրամականութեան մէջ: Նրա հանճարի ամենամօտ զուգահեռը մենք գտնում ենք, բանաստեղծական տիպարում: Աւելի սեղմ եւ ընդարձակ համեմատութիւն այս երկու արեւելեան հանճարների մէջ երեւան կը հանի ինչպէս նրանց միօրինակ, նոյնպէս եւ ազգային խառնուածքով տարբերուող բնութագծերը, որոնց ուսումնասիրութիւնը խկապէս հետաքրքիր մէ դրուագ կարող է կազմել արար եւ պարսիկ գրականութիւնների համեմատական բանասիրութեան ընդաւառում:

2. ՄԻՐՉԱՅԵԱՆ

(Շար. 3 եւ վերջ)

digitised by A.R.A.R.®

ՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐԻՁՆԵՐ

(ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Սփիւսի գրադներն, Նոյն Գաղաթիւն, գրական զանգուած սեռերու մէջ, պատաստեալ փաստակի մը կողքին, շնորհաւոր եւ միջնիւ վերջ վառ մնացած եկեղեցիքսիւն ցոյց տուած է մը-կարչութեան մասին:

Ընդարձակ աշխատասիրութեան մը յատկացիքը եզրոյ այս ամսից գրութիւնը մեզի տրամադրած է Համառոտ, որ ուղղաց-եալ մտաւարականի տարիներու մտերիմը եղած է:

Նկարչութեան Արուեստի սկզբնաւո-րութիւնը դարերու մութին մէջ կորսե-լած է, չենք գիտեր երբ եւ սակից սկը-սած է. բայց կարելի է զուշակել որ նախ սկսաւ դժագրութեամբ. գծերով մարդիկ ուղեցին բաներ մը ըսել ու բացատրել, կենդանի մը ձեւը ցոյց տալու փորձով:

Նախ գծերով բացատրեցին իրենց միտքը, ապա այդ գծերուն մէջ դունս-ւոր հող քսեցին բնութեան քիչ մը աւե-լի մօտեցնելու եւ գիրքմբռնելի ընելու:

Նմանցնելու եւ տեսնուած ձեւ մը բացատրելու եւ ուրիշներուն ալ ցոյց տալու ընդունակութիւնը եւ բաղձանքը հիմը կը դնեն նկարչական խրուստին:

Նախ սկսան իրենք գիրքնք բացատ-րելու համար նմանցնել բնութեան սրելէ մէկ բանին, երբ սկսան հաճոյք ալ տու-նել այդ նմանութենէն՝ Արուեստը սկը-սաւ:

Կը կարծուի որ 30.000 տարի առաջ մարդիկ արդէն սկսած էին գծերով աւ գոյններով ձեւեր եւ մտքեր բացատրելու փորձեր ընել:

Ամենահին պատկերազարդարուած ձեւագիրը եգիպտացիներու Պուֆ օֆ տը տէքե-ն է, Գրիստոսէ 1500 տարի ա-ռաջ հասար մը, որ դրուած եւ նկարա-զարդարուած է Պապիրոսի վրայ, կը գտնուի բրիտանական թանգարանին մէջ մէջ, Անգլիա:

Եգիպտացիները մարդկային մարմնի գոյնները ներկայացուցած ատեն իրենց այդ մարդոց մուկ-կարմիր գոյն մը կու տային, կիներուն աւելի բաց գոյն, եր-բեմբ բաց դեղին. ուրիշ երկրներու ժո-ղովուրդներու գոյնները կը տարբերէին, ինչպէս՝ պատերազմական գերիներուն դեղին գոյն, նոյն գոյնը նաեւ կու տու-նին հիւսիսային ժողովուրդներու. Ե-թովպիացիները ներկայացուած են մը-տազոյն (տաքալ պրաւն) եւ Խափչիկնե-րը՝ սեւ: Եգիպտացիները գոյնը կը գոր-ծածէին ջրաներկի նման:

Յունական եւ հռոմէական նկարչու-թենէն քիչ բան հասած է մեզի, ինչ որ կայ ցոյց կու տայ որ գծի եւ գոյնի գոր-ծածութիւնը կար, բայց իբր տրուեալ չհասաւ այն բարձրութեան ինչ որ է ի-րենց քանդակագործութիւնը:

515-ին Քրիստոսէ առաջ Հերոդոտոս կը յիշէ պատերազմական եւ պատմական մեծ նկարներու գոյութիւնը Սամոս կըղ-դիին մէջ:

ՊԱՌԻՆԻՈՏՈՍ ԹԱՍՈՍՅԻ 480 թուին Քրիստոսէ առաջ, յիշուած առաջին նը-կարէն է, յաւանական նկարչութեան վար-պետ մը: Իր գծապատկերները աչքա-ռու են ներութեամբ եւ շնորհազեղու-թեամբ, եւ ինքնայատուկ գեղեցկութիւն մը ունին իր ձեւին մէջ:

ԱՊԱՂԼՈՏՈՐՈՍ ԱԹԵՆԱՅԻ Հին յու-նական նկարչութեան մէջ կը նկատուի առաջինը որ լոյսի եւ գոյնի հետ շուքն ալ գործածած է իր նկարներուն մէջ. առ նկատած էր որ աչքը միայն լոյսը չէ որ կը տեսնէ այլ շուքն ալ:

Ապել 430-ին Քրիստոսէ առաջ, մեծ վարպետի համբաւ հասած, պատ-մական եւ կրօնական նկարներու հետ կը նկարէր դիմանկարներ եւս. Մեծն Ալեք-սանտրի մասնաւոր նկարչի: Կը պատ-մելի, Ալեքսանտր երբ Ապելի նկա-րած իր գիմանկարը կը տեսնէ, այսպէս կ'ըսէ. «Երկու Ալեքսանտրեր կան. մէկը Տիէրբի ապրող անպարտելի վառակը եւ միւսը՝ Ապելի անփոփոխելի նկա-րը»: Կ'ըսուի այս նկարին համար Ալեք-սանտր Ապելի ծառած է 50.000 սթեր-լինկ:

Քրիստոնէութեան սկզբնաւորութեան, այս մեղմամտ ժամանակաշրջանին, նկարչիները արհամարհեցին մարդկային ձեւը. անոնք մարդկային մարմինը նը-կատեցին մեղաւոր եւ անարժան ներկա-յացնելու իրենց երկնային սրբութեան զաղափարը. անոնց համար միայն հոգին մաքուր էր:

Ժամանակ մը վերջ երբ ուղեցին կը-րօնը նկարող բացատրել, այդ ալ, իր նախնական շրջանին անկենդան ձեւի մը մէջ էր. երկարաձուռած ձեւեր, նեղ ու երկար քթեր, նեղ ու ձուլածու գէմքեր, երկար աչքեր, փոքր կզակ, եւ բոլորն

ալ անկենդան գիրքերով. ոչինչ կենդա-նութիւն յիշեցնող, բոլորին վրայ դա-ռաւոր մահուան մը յուզումը:

Այս տիպեր եւ վշտայի ժամանակա-շրջանին՝ միայն մանրանկարներու ու-մանց մէջ քիչ մը կեանքի զգացում ար-թնցնող արժանիք ցուցադրուած է:

Բիւզանդական նկարչիները միայն հարթ մակերես կը տեսնէին, եւ իրենց նկարները միայն մակերես ցոյց կու տա-յին, ունէին միայն բարձրութիւն եւ լայ-նութիւն, խորութիւնը կը պակսէր անոնց գործերուն մէջ:

Տպագրութենէն առաջ, պարզ եւ ան-զրազէտ ժողովուրդին քրիստոնէական կրօնը եւ պատմութիւնը սորվեցնելու մի-ջոց ընտրած էին նկարչութիւնը, եկեղե-ցիներու պատերուն վրայ կրօնական դրոշմապատկեր նկարելով. այս մտածելա-կերպը նոր ասպարէզ բացաւ նկարչու-թեան, եւ արուեստի զարգացման պատ-ճառ դարձաւ:

Նկարչութեան պատմութիւնը կը սկսի Իտալիայէն. Իտալական արուեստը ծնունդ է յաւանական եւ բիւզանդական քաղաքակրթութեան. հին յունական գե-ղարուեստական հոգին Իտալիայ վերա-ծնունդին պատճառ եղաւ:

ԲԱՐԿԱՐԳՈՆ (1216-1293), իր նկարնե-րը ներկայ մտքով կարելի չէ արուեստի գործ կոչել, ան արտադրեց բիւզանդա-կան հոգիով. իր ժամանակի ամէնէն հռչակաւոր եւ երեւելի նկարչի: Որ նաեւ եղաւ Իտալիայ առաջին նկարչի:

ՏԻԻՔՉԻՈՅ (1255-1319) Անոր արուես-տը դարձաւկէս մը եղաւ բիւզանդական. կարելի է ըսել ան առաջինը եղաւ, բիւ-զանդական ընդունուած սովորութիւն ե-ղող նկարներու ոսկեզօծ եւ միօրինակ յատակի տեղ, բնական տեսարաններ նը-կարող: Կեանքը կը սկսի երեւել իր նը-կարներուն մէջ:

ՃԻՈԹԹՅ (1276-1336) Առաջին՝ նկա-րչիը եղաւ որ բիւզանդական արուեստէն

լեզուները եւ նկարչութիւնը ազատեց անոր ազդեցութենէն. իր արուեստին մէջ կենսեւ դրաւ, իր «Տիրամայրը» ասէն բանէ առաջ մայրական է եւ կը ժպտի իր զաւկին:

Ան յազարմեց նկարչութեան արուեստը իր գործերով, եւ իր ազդեցութիւնը թողուց իր հետեւորդներուն վրայ որ կը տեսէ մինչեւ այսօր:

Հիոթթօն եղաւ նոր արուեստի մը հայրը, մշտնադիմելի նկարչութեան նոր զարթոյնբուն հիմնադիրը եւ զաւրեւ վերածնունդի առաջին նկարիչը:

Իր մէջ զօրաւոր են երեւակայութիւնը եւ ինքնապաշտօնը. իր արուեստը էութեամբ կը տարբերի իրմէ առաջ եղածէն. իրմով կը օկսի նկարչութեան մէջ կենսեւ եւ շարժում:

Հիոթթօն ասելի աշակերտը եղած է բնութեան քան տեսէ վարպետի:

Իր նկարներու կազմի պարզութիւնը պատճառ է պինդ ներկայ արուեստի առաջին վարպետը անուանուելու:

Հիոթթօ աի Պոնթոն ծնած է 1276-ին, Վեսթմինսթեր քաղաքի Պուլլէ դիւղակին մէջ, Յուրանսէն 14 մղոն դէպի հիւսիս:

Իտալացի մեծ բանաստեղծ Տանթէն իր նամակներէն մէկուն մէջ կ'ըսէ. «Մանօթացայ երկու նկարիչներու, երկուքն ալ անպարզաւոր եւ վսեմ, Հիոթթոյին, որուն անունը նորերուն մէջ շատ մեծ է եւ Սիմոնէ Սիենային»:

ՍԻՄՈՆԷ ՄԱՐԹԻՆԻ (1284-1244) Ինքնաշատուկ ցուցադրող մը զողոր վայելչութեան, գծերու վաւերակ զեղեցկութիւն եւ գոյներու ներդաշնակութիւն. իր գործերուն վրայ կը տեսնուի դիտարուեալ աշխատ խնամք, իրեն նպատակ ունենալով ներկայացնել վսեմ անշուքանութիւն մը ազնիւ եւ զեղեցիկ, իմաստի, խորհուրդի, գծի եւ գոյնի մէջ: Նշանակելի պատկերացնող մը եղաւ կանացի հաճելի եւ պայծառ զեղեցկութիւններու:

ՎԱՆ ԷԹԳ (1390-1441) Հիւսիսային Եւրոպայի մէջ երկու հզօրներ Հիւսիս եւ Ժ. Վան էյք այս թուականին հիմը կը դնէին Ֆլաման Արուեստի զարթոյնը:

Վան էյքի կը վերադուրի առաջին անգամ իւղաներկի դիւտը եւ գործածութիւնը նկարչութեան մէջ: Ան իրապաշտ էր եւ վարպետ դիմանկարիչ մը: Իր ներկարներէն մէկը Վերնոյֆինի եւ իր կինը որ հիմա կը գտնուի Լոնտոնի Նապիոնալ Կայքի մէջ, գլուխ գործոց մը, գերազանցած իրմէ առաջ գտնուած բոլոր նկարչութիւնը, նկարուած փայտի վրայ եւ իւղաներկով:

Վան էյքի արուեստի ազդեցութիւնը մեծ եղաւ Իտալիոյ եւ Սպանիոյ եւ վերջը՝ Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ նկարչութեան վրայ:

ՄԱՍՍԳՁԻՈ (Թոմաս Կիտօ) 1402-1420.— Այս նկարիչին համար կարելի է ըսել որ առաջինը եղաւ լրիւ եւ շուքի օրէնքները իրենց նախնական մեղով գործածող. եւ նկարչութեան տուաւ կերպարային կազմութիւն. աշխատեցաւ բնութիւնը իր իսկութեամբ նկարել, եւ ըզգայիօրէն երեւցան իր գործերուն մէջ միջոցի մթնոլորտը եւ հեռաւորութեան աստիճանը:

Միօրէնսի նկարչութեան ծաղկումին մէջ իր զերը շատ մեծ եղաւ. վերածնունդի վարպետներու համբայ բացաւ. ինք անոնց առաջինը եղաւ ու իրմէ վերջ եւ կողները դրեթէ քոլորն ալ իր ուղղութիւնը շարունակեցին. շատ ճշգրտութեամբ մարդկային մարմինը եւ բնութիւնը ու առարկաները շարժում եւ կենսեւ արտացոլող գծերով ներկայացուց: Հեռանալով եկեղեցիի կողմէ նկարչութեան վրայ դրուած օրէնքներէն եւ կանոններէն ան ազատ ու անկաշկանդ մեծ յաջողութեամբ նկարեց իրական կենսեւ: Իր որմնանկարներէն, իրմէ վերջ եկող նկարիչները օգտակար դասեր առին. Միքէլ Անճելոյի եւ Բաֆայիի նման հաճախ

ներ ունեցած օգուտ քաղած են անոնցմէ:

19 տարեկանին արդէն ընդունուած վարպետ նակրիչ էր: Կ'ըսուի, նկարչութեան հետ կապ ունեցող նախնիքն մը տարուած կը թունաւորեն գինք: Կը մեռնի Հոռմի մէջ 27 տարեկանին:

Լիպպի Ֆրա Ֆրիպպո. 1406-1469.— Ենած Ֆլորէնս, մասվաճառի մը զաւակը. մանկութենէն որք կը մնայ. 15 տարեքին կը մտնէ վանք, ուր ի յայտ կու գայ իր մէջ տէր եւ ընդունակութիւն նըկարչութեան. իրեն ուղեցոյց եղած է Մոսաքլիոյի գործերը. մեծ գունազէտ մը եւ վարպետ դժադրիչ. իր նկարները ցոյց կու տան զոյնի փափկութիւն եւ ներդաշնակութիւն, լոյսի եւ շուքի վարպետ մը. առաջին նկարիչը եղաւ որ իր մօտ գտնուողները իր նկարներուն օրինակ գործածեց. իր նկարները նուրբ են ու փեղեցիկ:

1450-ին երբ 50 տարեկան էր, Փրատո կ'երթայ Սան Մարկարիոյ կուսանոցի եւ կեղեցիին համար Տիրամայր մը նկարելու. նորընծայ կոյսերէն մէկը 17 տարեկան զեղեցկազէմ Լիւքէզիա Պիւզի իր նկարին համար օրինակ կը գործածէ, կը սիրահարի կոյսին, միասին կը փախն ու կ'ամուսնանան, մեծ զայթակողութիւն մը թողելով ժողովուրդի, կրօնաւորներու եւ վանական շրջանայան մէջ. անկէ վերջ աւելի կ'անքը կը հետաքրքրէր գինք քան հոգին, որը կը ցոլանար իր արուեստին վրայ. իր տիրամայրերը աչքառու են իւրենց նուրբ, ազնիւ եւ հաճելի գեղեցկութիւններով:

Իր գոյները, տեսնելու եւ նկարելու ձեւը միշտ ապրող ու նոր մնացած են, իր ազդեցութիւնը եկեղեցական նկարչներու վրայ մեծ եղաւ:

Գլխաւոր գործերն են՝ Փրատոյի մայր եկեղեցիի որմնանկարները՝ Սուրբ Սիմֆանի եւ Յովհաննէս Մկրտչի կենսաւորումները: Իր տիրամայրերը ցրուած են աշխարհի չորս կողմերը. անոնցմէ յիշատակելի է Գորոմէյըն օֆ տը Վերնիմ, որ կը գտնուի Ֆլորանսի Ակադեմիային մէջ:

Ճիովալանի Պելլիոնի (1428-1516) վեհապետի նկարչութիւնը ծնունդ առաւ եւ զարգացաւ Պելլիոնի ընտանիքին մէջ: Այդ ընտանիքի փոքր զաւակը, Ճիովաննի, նըկարչութեան արուեստին մէջ եղաւ մեծ վարպետ մը, ազնիւ ու ծանրաբարոյ մէկը. իր նկարաչիքը ցոյց իր արուեստին վրայ. նկարեց կրօնական նիւթեր, իր նկարները դիտողը կը ստանայ կրօնքի բարձր, մաքուր եւ ազնիւ զգացում մը: Վարպետ դժադրիչ եւ հմուտ գուռնադէտ:

Որեւէ արուեստանոց չէ արտադրած այնքան մեծ նկարչիներ ինչ որ տուած է Ճիովաննիի արուեստանոցը, Ճիովաննի եւ թիցիան իրմէ ուսած են ինչպէս եւ շատ շատեր: Վենետիկի մէջ, կրօնական նիւթերու նկարչութիւնը Ճիովաննիով հասաւ բարձրութեան աստիճանի մը եւ անոր մահով ալ կանգ առաւ: Իր գործերը ներշնչումի ազդեւր դարձան յաջորդող սերունդի վարպետ նկարչներուն:

Պոլիքսենի ՍԱՆՏՐՕ (1444-1510) եղաւ առաջինը որ նկարչութեան սահմանը ընդարձակեց. հոգեով հեղինական մը. ջրիտառնականի հետ սկսաւ նկարել հեթանոսական նիւթեր, ստեղծեց ինքնաշատուկ մեծ գեղեցկութիւն, նուրբ եւ քնքուշ, ուրոյն եւ ինքնատիպ արուեստ մը. ոչ մէկ բանով կը նմանէր իրմէ առաջ եղածին. գեղեցկութիւն մը ստեղծեց որ վերջը կոչուեցաւ իր անունով: Բանաստեղծօրէն մօտեցաւ նկարչութեան, իր գործերը աւելի զգայուն բանաստեղծի մը երեւակայական ստեղծագործութիւններն էին, որ փոխանակ բաներու՝ գոյնով եւ գիծով ներկայացուց. խորհրդապաշտ արուեստադէտ մը: Վերածնունդի վարպետն էր ու կարծես իր արժանի տեղը ունի:

Վենետիկի ծնունդը՝ Պոլիքսենիի դէլիաւոր գործերէն մին կարելի է նկատել, ուր իր արուեստի ինքնաշատուկ բոլոր տեսակի գեղեցկութիւնները ի յայտ կու գան:

ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԻԱՆ

(Շար. 1)


ԴԷՄՔԵՐ

Ի Ն Տ Ր Ա

Հայ դրականութեան լուստրացի մէկ մասը՝ ինչպէս ժամանակ մը Գոթենս-ւորը, ուրիշ ժամանակ մը Նարեկացին, ինչպէս մօտ օրերու մէջ ապրած ու ինքզինք ունենակի մը առաստաղէն կախած ու կեանքին վերջ տուած Նղիան:

Սեւ Մովսէս մօտ շատ ապրած այս մը-նայլ հոգին, Աստուծոյ և Հայ մեծահա-նաւ Յովհաննէսէ մը հոգ: ա՛յն Յովհան-նէսէն: որ Խրիմի ահաւոր ջուրերուն առջեւ որորդէն ու աղքատօրէն մեծցած, զոյններու եւ փոթորիկներու խառնուր-դով մը սնանեցաւ, մինչեւ վախճանը բազմավաստակ իր կեանքին: Այլապո-վըքի՛ Յովհաննէսէն՝ որ իր բովանդակ ներաշխարհը կահաւորեց տիեզերութեան մասլով, կոհակներու եղբարկան թիականալով մը, թիակապոյտով մը, թիաներմակ վեհութեամբ մը: Երանդ-ներ՝ հոս հոծօրէն հերոսական, հոն լայն, լուրջ, վսեմ: Տեղ մը մահազու, աեղ մը դաւաճան: Ա՛յն Յովհաննէսէն, վերջա-պէս, որ զոյններու բանաստեղծ մը, ա-ռաքեալի պէս բան մը եղաւ իր հանճա-րի արտեւաններուն վրայ կեցած, ինչ-պէս Հաստաղու ամպրոպի ու թանձրա-լուս խորութիւններու ամբողջական տեղ-վիւ մը եղած էր, մօտ երկու հազար տա-րի առաջ ա՛յլ Յովհաննէս մը, — Գրիս-տոսը Հասարակ ջուրի մէջ մկրտող դար-հաւելի Ամլորդին, որ մինչեւ մահ եր-կու ծայրայեղութիւններ նոյն ակաւսե-րով ծածկեց. — տասանկի պէս չոր մա-րախ եւ մեղր:

Մարդերու մէջ, քաղաքներ հրա-



պարկներու վրայ, մեծ ու փոքր յան-ցանքներու անկարագրելի խռովմա-ղանձի մը մէջտեղ, Ջաքարիական մեծ պապանձումին մեծամայն զաւակը կը պոռար մարգարէի իր խօսքը:

— «Ձայն բարբառոյ յանապատին: Գոհարազոյն արդանդի մը դժուա-րազոյն մարդը: Այս էր աշխարհին տե-սած առաջին Յովհաննէսը: Բազմութեան երուն անընդունակ ունկնդրութեան առ-ջեւ հոգիի մը տուած է ան: Իական խօսքին անհնար յատակութիւնը՝ պայ-ծառազոյն ճշմարտութեան մը մինչեւ ծայրը ապրելով հանդերձ: Եւ դեռ ցո-

փութեան ու խրատման յաւիտեական երկրոյ մը, պայծառափայլ ազնուեղի մը վրայ արիւնոտ կառափն է ան, որուն կեանքը մարդու սահմանէն դուրս անցած եւ Աստուծոյ սահմանին մէջ չմըտած կեանքը հղաւ: Եղաւ, Աստուծոյ անհունօրէն փոքր, հեռո՛ւ. եղաւ, մարդերէն անհունօրէն այստեանդերձ մեծ, հեռու: Կա՛յ աւելի տիեզերական ողբերգութիւն: «Մեռնողք իժի՛ց»:

Բարդ ծովու մը բարդ էութիւնը կը տանեերու վրայ: Հեղուկները, — տիեզերական խորհրդաւոր նախատարբ —, բարեկցած երբեմն ու անհուն՝ պիտի շարժին, պիտի քայլեն, պիտի սուրան նոյնիսկ, այդպէս, իրենց բովանդակ դայրամարձութեամբ: Պիտի քանդեն իրենց ճամբուն վրայ գրեթե եւ ինչի որ հանդիպին: Պիտի սանդնեն իրենց գրեթե, կործանեն ու կործանուին, ինչպէս դուրսը, նոյնպէս եւ նկարիչի խեղճ կտաւին վրայ: Կտաւը փոթորկած ծովը պիտի շարժէ, տարիներով, դարերով: Պիտի շարժէ անհուն անոր խելագարութիւնը, ընդարձակութիւնը, զայրո՛յթը. անոր դուռաւոր թանձր ուժը, գունաւոր թանձր հոգին:

Վրձիւնն բարձր աշխարհակալութիւններէն մէկն է ասիկա, գոյնեւոր տեսակ մը լուսաւոր գաղութարարութիւն, եւ, արուեստագէտին համար՝ իր անձին տեսական մէկ հայրանատեղծութիւնը, արուեստի տիեզերքին մէջ: Ու նաեւ ըսե՛կ մը, գոյնեւոր շքեղ լեզուով, թէ աշխարհը կը պատկանի միայն ու յաւիտեանօրէն տնոնց, որոնք կրնան վերստեղծել զոյն, վերանշաւորել հողի ու քառասի մէջ թաղուած անոր հոգին: Թէ արուեստագէտին վերջին եւ բուն հայրենիքը Արուեստն է եւ անով ստեղծուած ամէն ինչ՝ իր հոգիին ստացուածքը ընդլայնող նուիրական գաղութ:

Եւ արդ, Սեւ Մովսէս կը պատկանի ոչ թէ ուրեմն զինք եզերող աղապին եւ քաղաքական ուժերուն, որոնք ուսու, թուրք կամ Պալքանեան պետութիւն կը կոչուէին, այլ Յովհաննէս Այվազովսքիին, որ անգլիական զինուորի մը նախնիք

դայն ալիք առ ալիք: Կը պատկանի Խոսրոյին, որ այս անգամ արուեստի ուրիշ մշտադարձ ղէնքով մը, — զրիշով —, տիրապետեց անոր: Նկարակտաներու եւ նկարագրական տողերու զոյգ դաշինքով, այդ ծովը այս մարդոց ծովն է:

Այդ ծովը...

II

Բարդութիւն, սեւութիւն, շղթայադերձ մաղձ:

Աստուած այդ բազմաթիւն ծովուն տակի՛ լռան խնթ, տակի՛ լռան խօլ ու խելագար հեղուկները ասեղծեց ի հարկէ ոչինչէն, բայց ով դիտէ որչափ զայրացած, որչափ ինքնիրմէ ելած ոչնչութեանէ մը: Աստուածաշնչական սկզբնական յատուկ այդ մէկ պատառը, նման երկրի վրայ զանուղ լռան մը այլ պատառներու, Աստուած շուրջը որ լիովին լուսնայ կարծես: Չուզեց որ խելօքայ, հանդարտի: Ուզեց երեւի, որ պատժուի՝ ան ու կատարի շարունակ, կայր մթնութիւն մը պոռալով դէպի Պրոմէթէոսի ժառանգութեան աշխարհը, դէպի կովկասեան վիհերը ամէնէն աւելի: Ուզեց որ գոռայ, անհամար ալիքներու ճերմակ բրտութեամբ մը բոկոյն ինքզինք: Ու մաղձ ու ժողովութիւն ժայթքէ: Այդպէս, բարկութիւն գրգռող փոսի մը մէջ ինկած: Սպասեալով ու թքեղով մաղձերու այդ ստորին անհունէն մերթ դէպի Ռուսիա, մերթ դէպի Անատոլիա, մերթ Պալքանեաները դէպի:

Ու եթէ Յովհաննէս հայը ծովուն մութ կատաղութիւնը, սեւ բռնկում մը նկարեց, անոր վիթխարի, անասելի անհնազանդութիւնը՝ տարբեր բան չըբաւ ուրիշ Հայ մը, երբեմն հեռու այս անգամ Սեւ Մովսէսն Հարաւի կողմէն: Նորէն փրփուր, նորէն ժահր ու հակայական բացազանչութիւն:

Այվազովսքիին բուն ծովը տեսած, խորանկ ունկնդրութեամբ մը անոր ուժն ու հոգին ճանչցած, զայն կարծես իր ընդհանրութեան ու մասնաւորութիւններուն մէջ լիովին ներառած ուրիշ նկարիչ մըն էր Տիրան Արաքեան երիտասարդ

Պոլսեցիներն, որ սակայն աւելի գրեզնէն համ առաւ քան նկարելէն: Գրեց, անկրկնելի՛ էջերու մէջ, Սեւ Մովսէս մոնչոզ սւժը, լիւնաղէղ կուտակումը ջրերուն, եւ անոնց ահագնացողորդ փրկութիւնը, «ճերմակ կործանումը» պիտի ընէր ինք, խաբարակներու վրայ, անսահման աւազուտներու առջեւ: Ամէն հորդոնէ պոռագող, եկող, մօտեցող ու ետ դարձող վիշապակերպ հեղուկներու յաւիտենական տակնուվրայութիւն մը: Լեռներուն եւ երկինքին հետ լեղի, ապստամբ տրամախօսութիւն մը կարծես: Գաղափարներ մոռցմամբ աշխարհագրական եզերք մը, շատ յոճախ:

✽

— «Սեւ Մով...»

Ինտրայական է այս ձայնը: Ձուտ, խորունկ, ներաշխարհային: Կայ այդ թաւ ու թուշեայ քաղաքանշութեան մէջ երկնիզ, կարօտ, սէր: Զմայլաւար միսթիսիզմ, Կոստ, սէր՝ անակնկալ, ինքնաբոյս, պայծառ: Որ հողիին համար զաղտորէն ու երկար սպասուած նոր վայրերու քողը կը բանայ, կը ստեղծէ տեսողական նոր վիճակներ, կու տայ ենթակային, մինչ այդ իրեն իսկ անծանօթ, աշխարհը զգայու հոգեկան նոր ու բոլորովին այլ տիմամսիոն մը:

— «Սեւ Մով...»

Մեկին ներքին առատութիւնը, սեւ լին ծովութիւնը կայ այս միսթիք աղաղակին մէջ: Կայ հողի մը, այլալա՛ծ հողի մը մերձեցումը, աշխարհին ու անոր մօտաւորանէ խորհուրդներէն մէկուն: Իր ներքին մէկ բանտին դրան ճրոնչն է աւելի այս ձայնը: Եւ արդէն ինք, ներքին խորութիւններու մէջ բանտարկուած ինտրան եւ իր բանտին դրանները ծոյն ձայնը շունի՞ն այլեւս:

— «Սեւ Մով...»

Զիրար շեշտող եւ նոյն տունն դիտար անհոնորէն ընդլայնող երկու միավանկ բառեր են ասոնք, որոնք սակայն ամէնէն բազմապէս մէկ սպարումը կը շինեն, երբ ինտրայի մը հողին է որ զանոնք կը

բերէ քով քովի: Իրական կեանքն ու մեծ գրականութիւնը ունին երբեմն այդ կարն, մերթ միավանկ բառերէն, որոնք ստեղծումի խորհրդաւոր պահու մը, կը բազմապնակեն մեր հողին, զայն այդպէս, աներեւակային հեռունները տանելով: Ի՞նչ ու հատոր կ'արժեն երբեմն, արարչական այդ կարն բառերը: Հեռու խորունկներէ, հեռաւորագոյն սկիզբներէ կու գան ու կը մեկնին դէպի հեռու խորունկները, հեռաւորագոյն վախճանները կեանքին:

— «Սեւ Մով...»

Եւ ասեկա կ'ըլլայ «Ներաշխարհ» անունով հատորի մը խորք ու մթնոլորտ շինող կարեւոր գլուխներէն մէկը, ըլլալէ ետք մօտայլ հեղուկներու մօտայլ թանձրատան մը ամբողջ:

✽

Քանի մը հարուստ, իր անունին ու գրականութեան խորհրդանիշ դարձած բառերու մարդն է Իսահայիկ ռիթմաւորը, մինչեւ իր կապերուն եղբրական խլաղամբ աշխարհիկ ամէն բանի հետ: Մարդն է տեսարար խորհրդաստղ, տեսարար ներամիտի, տեսարար ինքնասեւեռ: Թնճուկ մըն է մտածումներու, ըզրպացումներու, սովորական ու անսովոր զգայութիւններու: Թնճուկ՝ ամբողջական տրամադրութիւններու, տարօրինակ իմաստներու, ամբողջական կապակցութիւններու: Ու կը տեսնենք իր դէմքը: Ու կը տեսնենք իր տուայտող ամբողջ հասակը, — մօտայլ ու խոհուն: Ու սակայն աւելի քան երբեք լուսաբաղձ: Որ կը պատի, իր ներքին վիճակներուն այդ թնճուկը ծանրորէն, հեւ ի հեւ քաշընտրով ուրիշ, այս անգամ բառերու թնճուկի մը անսահման ուստային մէջէն: Կա՞յ ընթերցող, որ կարգայ ներաշխարհը ու չմտահոգուի ինտրայի հաշուոյն, երբ ինտրա իր հող-իմացական ճամբորդութիւնը կը կատարէ, բառերու, գոյներու եւ դիմերու ահաւոր ամբողջութիւն մը ընդմէջէն: Կը քայլէ, ներքին վիճակներու խորացումով մը, ընդլայնումով մը, սեւ

չադիր նրբագծութեամբ մը ամէն բանի, ամէն խոհի, ամէն զգացումի եւ զդաշտութեան: Ձանտեսելով կարծես ոչ մէկ մանրամասնութիւն. նկարչական եւ իմաստի մեծ բաժին մը հանելով ամէն բանի, որ երկրորդական պիտի թուէր ուրիշ հեղինակի մը քով: Պարզ է, հասնելու համար իր սեփական ներաշխարհին դրսեւորման, հարկ տեսաւ չբաւարարուիլ ընդհանրական հայերէնով ու ստեղծեց յատ տեղ սեփական հայերէն մը, նոր ձեւի բառարարութիւն մը:

Ներաշխարհին ընթերցողը չի կրնար, նորէն, կանգ չառնել զրբին մէջ տեղ մը, հարց տալու համար ինքզինքին. — Ձ՞մբ պիտի երթայ մարդու մը սոփոական վիճակներէն ու սովորական լեզուէն երբեք չբաւարարող այս լուսաբաղձ մուսլիմ, մանաւանդ երբ կը բարդացնէ նախադասութիւններուն լարերին թուր: Երբ վիճակ, խոհ ու դիմ կը գումարէ շարունակ, առանց երբեք յաղենալու: Երբ կը յանդի իմաստի արապիստներու:

Ու կը տեսնենք կեանքին ու մահուան մեծ բաներուն հետ տրամախառնող ինտրան գետին իջած զորշ ամպի մը պէս, որ դէպի երկրին լուսաւոր տեղերը կը սահի, կը ծաւալի, ինչպէս պիտի ծաւալէին երկրին մակերեսին հասած ամպն ու մարտիտեղները աշնանամուտի օրերուն: Ու այդ զորշ ամպին, ու այդ գորշ մառախուղին մէջ, դուք դրէք նոճի, ու մահ, ու զերեզման: Խորութիւններու, ա՛յլ կարծես անդինական հեռուներէ եւ կող ցուրտ շունկներ:

Բառերու փշաթել, պատկերներու փշաթել, գոյներու փշաթել:

Տասն տասներկու մղձաւանջային բառ է ամբողջ ինտրան, իր ճերմակաբան հոգի ու ճեղհատանով: Վե՛ծապայծառ իմացականութեանց մը, Ռ. Պէրպլէրեանի նախկին սանը իր ստեղծագործութեան մէջ ծայրէն միւսը յաճախեցին տակն է լոյսը աղէտի մը պէս բերող այդ բառերուն: Ծխնի բառեր են առնեք, առանցքային պաշտօնով մը, եւ առնեք վրայ է որ կը դառնան հոգիի մը բարբ զոնները,

լուսափեղկերն ու աներեւոյթ կապուշեւոր: Այդ բառերն են, որ էջ կը հայթայթեն զրբին եւ զրբին մէջ ծաւալող նախադասութիւններու մասնաւոր կենցաղին: Կը հայթայթեն, կեդրոնական ջեռուցման դրութեամբ մը, տաք շունչ եւ հոգի: Բնապանցական ընտիր սնունդ մը եւ պարբերութիւններու խոհերն ու ըզգայութիւնները իրարու մէջ հիւսող խիտ բանուածք մը:

Կու գայ, այսպէս, այդ սակաւ բառերուն առջեւ իր հոգիին տարօրինակ հարստութիւնը դիզելու զրբի այս խորունկ աշխատանքը: Զի յոգնիր ոչ մութ դիզելին եւ ոչ ալ լոյս կուտակելին առնեց ոտքին տակ: Կը չըջապատէ գանձնեք ճաճանչներով ու զորշութեամբ իսկ ամէնէն աւելի՝ իրականութեան խաւարով:

Անողորմ այդ բառերուն հետու հոսութեան հասնելու, անոնց ակնբային խորութեան թափանցելու համար, պայման է չվախնալ տաք դնելէ խենթութեան մը շուրտ գետիններուն վրայ, ինչպէս ըրաւ ինք, ուրանալով միջեւ անգամ իր սէրն ու արուեստը, դառնալու. համար կիսամիտ ու կիսազգաց մէկը: Այն խեղճուկ, խոնարհ շարաթապահ, որ Ստամբուլի ազատա խաներուն անկիւնը մուրաքիկներուն ոտքը լուացող տարտամ վայրառնին է այլեւս:

Առաջին Զրաքեանը եւ ա՛յս մէկը... Մեծ բառերէն ետք, մարդկային այս աւերակը Պոլսոյ մէջ:

Իմաստութեան խենթ պրկումին վտանգանը՝ ազուշ փռչի՞ մը ի վերջոյ...

✽

Ճստագայթ մը զգացումներու եւ մտքի՝ Սկիւտարի այս մենամուտը, մենագարբ աւելի ճիշդ, — զարտուղի ինչպէս Եղիան, ու խորապէս սեւեռախոհ ինչպէս Նարեկացին —, որ ներքին երկնակամարներու վրայ տարիներով իր վերջին բարձրակէտը փնտռեց ու չգտաւ: Որ, երբ մօտ էր հասնելու հոգեկան ուժերու թեւրեւ բացառիկ զենթի մը, ինչպէս պատահած էր իրմէ առաջ ուրիշ զարտուղի

մեծերու, ինկաւ յիմարութեան, մտաւարական կամ աստուծոյ զբաղի ճախնախոսութի մը մէջ, հոն անհնիթ կերպով վերջացնելու զեղնեկազոյնին ու իմաստնաւորին ձգտող գոյութիւն մը:

Գծգոհեցաւ, իր աստուծոյ համարեալ բոլորին բարձրախոս ու շատախօս վկայութեամբը, յարաբերականէն, կարճատեւէն, սահմանաւոր բաներէն: Ու զրեց՝ իր մեծին, բացարձակին, Գերազոյն Ազոութեան ու անհուն արդարութեան փնտաւորելու: Որովհետեւ չգտաւ որեւէ տեղ, ու փնտաւորողին մեծ բան մը փնտաւորող, չգտնող ու յուսահատ աչքի մը տիտուր եւ անհետ փայտած ջրով: Զտրեց, երբեք՝ անհատը անվախճանորէն մանրող ընկերային կարգաւարքը: Ատեց աշխատանքը այդ կարգաւարքին մէջ որ այդ կարգաւարքին իսկ պատճառով անպարտաւոր կը մնար: Մարմինը քամող, հողին ընկնող եւ սակայն անհատին համար ամուլ աշխատանքը: Տողեր, էջեր կեդրոնացուց ընկերային այդ տիտուր ապուրջութիւնը ձողիկով: Տղուկի մը պէս իր սեփական վիշտերուն եւ բնականական խոհանրանքուն փակած այս առանձնամբ մարդը խարանիչ խօսքեր գտաւ զազաւորութեան ծուռ, ապուշ, վրնասակար ընթացքին դէմ:

Ուրկէ՞ ուր, կը զարմանաս, հասարակական բաներու սա շեշտ ախորժակը այս բոլորովին ներանձնական հուսալքածութեան մէջ: Ուրկէ՞ ուր՝ սիրոյ, մահուան եւ նոյնի սա խորունկ միտքերին քով, սա խորունկ ու նաեւ լայն թոյսթոյսականութիւնը: Նիցիէն, Քրիստոսն ու ընկերավարութիւնը նոյն պահուն նոյն ունեղնով շնչելու տարօրինակ այլ իմաստուն կերպով ուրկէ՞:

Միտք մըն է, արտին նուիրական ձեթերով վառող ճրագ միտք մը՝ Սկիւրաւարքի այս խոհամոլը, կեանքին մէջ հասարակ equation-ներէ վեր equation-ներ փնտաւորու տեսարար տրամադիր:

Այդպէս ալ, մետա՛քս առ մետա՛քս, նրբաթիւն առ նրբաթիւն, իր ներանձնական կեանքին ու մահուն սարսաղին ապրումներուն հսկայական խողովը հիւ-

սեց ան, տեղ մը ներաշխարհ եւ այլ տեղ մը Նաճնստան անունով:

Ինքնիր անձին հետ չափէն աւելի չփուլած, խոր ու վերջնական կապեր հաստատած մարդն է ան: Որովհետեւ պէս որ փակած է իր խեցիին մինչեւ մահ, այդ բնական ճակատագրականութեամբ փակած բլրայ կործեն իսկնային խեցեղ տարփաւորը իր ներաշխարհի հանգոյցներուն, որոնք, բոլորեցաւ արդէն, տասնէն տասներկու քառ եւ միայն: Այդ բացտրիկ բառերէն հոգ, որոնք բաղմապատկուեցան ստեղծագործական լուրջ կրկնելով մը ու բաշխուեցան երկու հատորներու մէջ, մեծ եւ զարտուղի իմացականութեան մը վկայութիւնը բերելով մեզի՝ — որը զոյութիւն մըն է ինտրան: Եղբրականորէն տկար, եղբրականորէն սպառնալիք մըն է ան, ու, դժբաղակ առաւօտէ մը հոգ, քեմալական Անատոլիոյ հետեւ ամայութիւններուն մէջ օրերով տեղէ տեղ քաշկուտած մը, խոշտանդուած մը: Անվախճանորէն ծեծ ուսող ոչ թէ մարդկային մարմին մը, այլ տողակ մը ունեցող յետին խեղճութիւն մը, ունեցող ունեցող յետին խեղճութիւն մը, ունեցող ունեցող յետին խեղճութիւն մը: Անատոլիոյ մը այլեւս: Անատոլիոյ մը անհոյս աստիկանին աղիւն, տիեզերք ու տիեզերական առեղծուածներ յնչած այդ մարմինը, հոն, տեղ մը, տասնիկ հեռաւորութեան մը դժոխքին մէջ, քանի մը քիւ ջրիստոնէութիւն է: Ծեծ կերած, արթացած ու ապուշացած քրիստոնէութիւն: Մարդ չէ ալ, պատառած լաթ մըն է աւելի, ողբերգական չկարեւալ դառնալուն մէջ իսկ աւելի՛ քան ողբերգական:

Մարդ մը — մտաւորական բարձրագոյն տեսակէն — անպէտք լաթի պէս բլրկուտած նետուած անշան կամուրջի մը տակ, անիծեալ օր մը, համաշխարհային սատիֆնիքս երկրին մէջ:

Ու յաւելեալ հոգի մը, ոչ իսկ տասնամեակ մը հոգ, մեր նահատակներու եղբրական լուսալէզէնին վրայ:

Տճ

Եւ հիմա, դրեթէ մերկ, մարմնով

ու հոգիով անհատուստ շարաթապաչի իր խաչելական մարտիրոսութենէն աշխարհ տարի ետք, ի՞նչ է ան: Աւետարանին ըստ զանչելի հարստութիւնը պարկ մը աժան կորկի պէս պատգնող փերեղակ քարոզիչ մը: Հայտնի պիտի չըլլա՞ր աստիկա, մեր լեզուն իր սիրած կնոջ չափ սիրող սակաւաթիւ անուններէն մէկուն: Ձմռանք, մեծ մտքի մը օդանաւային մեծ արկածն է այս մտաւորականին շարաթապաչութիւնը, զբաղէտի անոր ինքնուրացումը, երբ իր զբաղանքի մեծ համար Սկսւոյ կը պոռայ ան, ժայնորուն ամէնէն ցաւազինովը, մահուան շեշտերուն ամէնէն ցուրտ տեսակովը:

Ու նորէն, պատասխան պիտի ըլլար թէ պատասխանատուութենէ խուսափում, եթէ, կարճ կապելու համար, ճանչնալինք զինք քանի մը տարի խմատութիւն եւ լեզուի գորշութիւն ապրած եւ իր այդ լեզուի մթարանութիւնները գրական հրապարակին վրայ սուղ սուղ վաճառող տարօրինակ մէկը իրեն: Նախատինք մը պիտի չըլլա՞ր, նաեւ այս մէկը, հանդէպ մարդու մը, որուն միակ եւ ողբերգական ճիւղը եղաւ փախիլ հոգիին վրայ կուտակուած կեանքին մեծ մշտնեղբէն, յանուն երբեմն կաթիլ մը իսկ լոյսի: Հիմա, այսքան տարի անցնելէ ետք իսկ, ներքին է մտքի հետեւողական ծուլութեամբ մը անհանկուսի կոչել բարձրորէն հասկնալի գրապէս մը եւ երթալ, ինչպէս սովորութիւն է մեր մէջ, տարբարական ու տափալ գիւրտութիւններու ետեւէն:

Պէտք չէ՞ զանազանութիւն մը գրանէնք ալիւս գեղեցիկ դժուարին եւ կեղծ ու անմիտ անհասկնալի միջեւ:

Ձերազատուիլ ուզելով հոս, պահ մը գէթ, ուրիշներուն ճանաչման առթիւ մեր մէջ յաճախ ի յայտ եկած իմացական ծուլութենէն, հարց կու տամ ես ինձի: Ի՞նչ է Ներսիսեանի հեղինակը այսօր եւ իրրեւ ինչի պայծառ առաւօտաները կէսօր կ'ըլլան ու կը մթնան իր վերայ ամէն օր, հոն, թուրք աշխարհ կոչուած երկրին չոր, իմաստահալած մէկ անկիւնը, Սլիվան անունով պղտիկ, ան-

յիշելի կամուրջի մը տակ, ցորենի աղքատիկ արտի մը եղբերքը:

Ի՞նչ է ան, ի՞նչ է հայ զրախանութեան աշխարհարար մէկ մարդին այս լուսարարած մոայլը:

Անք մը՝ որ կը նայի, գրեթէ նոյն պահուն, երկու ուղղութեամբ: Պէտք չէ ներս եւ դէպի դուրս: Որ կը նկարէ, մէկ անդամէն, երկու պատ աշխարհներ: Ներսի եւ դուրսի: Անք մը՝ որ իր տեսած իրերը կը շարունակէ երկարագիծ իրենց մէկ անդին, իմաստներու եւ վիճակներու շարքի մը պատկերով: Մէկը, քաղաքի մեծ ընդունակութեամբ, բայց որ չի սիրեր անապարիւ, որ խորունկ համ մը կ'առնէ մանր քաղաքներէն, այլ մանաւանդ խուսափուկ բաներու առջեւ կենալէն: Դիտելէն, թափանցուելէն: Վերջու՝ ծեղիւն, համադրելէն, ընդհանրացնելէն: Չանազան հետաքրքրութիւններու վրայ հիմնով մարդ մը՝ որուն համար գիծերէն, ձեւերէն ու իմաստներէն վեր ու անդին, կայ տակաւին խորագոյն բան մը: Խորհուրդը՝ ամէն ինչ ծնող ու ամէն տարօրինակութիւն տեղ մը ներգանակող քաղաքականութիւն:

Հմայուած, ներքին ու արտաքին աշխարհի իրերէն ու գոյութիւններէն հիփոնոսացած աչքն է Ինսարան: Տեսողական արարքի մը հերոսական մէկ ճիւղը, արկածախնդրութիւնը կարծես: Խոր ու խորաւիշ բաններուն վերացումը ակնառան է ան, անոնց մեծ ու փոքր ձայներուն ունկնդիրը, ակննջալուր վիզան՝ ախեղբերին համապատասխան արտաբանութեան:

Այս բոլոր խանդավառ ու նոյն տես խռովի իրողութիւններուն մէջ սրբազան պարտեալն է ան՝

Հովիւն,

Որուն ինք եւ իր կէս-գիշերուայ լամբարը կ'աղօթեն կարծես, երկիւղածութիւններուն ամէնէն խորունկովը, աղօթքի կանչելով իրենց հետ սենեակի մը տարտամօրէն ծփացող վարադոյրները, գիւրգիւր, կաղամարը, շնագայլի փոստը,

Հովիւն,

Դարձեալ, որ իր «եռ»ը կը բերէ իրեն, մաքրութիւններու մէջ աճած, բիրեղացած կարծեալ։ Որ կը բերէ իրեն աշխարհ մը տակաւին ուրիշ բան, — սէր, անցեալ, թախիծ, տեղեր, ձայներ, ապագայ։

Պարտեալը Սեւ Ծովուն,

Որուն «կապարագոյն մբրիկին» մէջն անցաւ ինք։ Որ իր սակողութիւն հետ դորադոյն հաշիւը եղաւ, Իռենային հետ միասին։ Ձկնապառնակներէ ու պտուղներէ ալ ծովը, իր գոյութեան բոլոր բնականութիւնը։ Ինտրան իրեն գրականութիւն, արդիւնէն է Իռենային եւ Սեւ Ծովուն, անոնց մէջ գտած ըլլալով բուն լոյսը իր ներաշխարհին։

Պարտեալն է նոճիներուն,

Սեւ ու միաթիւք։ Սեւ ու երկինքն ի վեր սեւեռաթուր, մահաւալաց։

Որոնք «կապուտը կը կանչեն»։ Որոնք... «թախածալի ծայրերէն թռչող ուրիշները կարծես թէ պատահել են, որ կը փրթին անոնցմէ։ Իբրեւ թէ նոճիները որիներ կը հառաչէին»։

Պարտեալը ալքովին՝

Որ ահաւոր կեդրոնացում է Ինտրային համար, բնական ու բնականական շողարձակումներու։ Ջերմութեան, երազի։ Անդունդ առ անդունդ փախչելու ուրիշներէն։ Դեռ դիտել ինքզինք թէ ու՛, ինչ բան գտնելու համար։

Ալքովին,

Որուն գուռ գրացի են՝ սէրը, վիշտը, խենթութիւնն ու լոյսը։ «Որ անբաժանաբար աղօթք, անդրատեսչութիւն պիտի դառնայ, մարդուն մէջ մէկ կողմէն անատունը «բոստանելով», միւս կողմէն «խնկամբաւորելով հոն հրեշտակը»։ — «Թող խմեն»։

Ինտրայական թախիծին իմաստուն մէկ ձայն է այս երկար ճիւղը։ Զբոսաւ այս մարդը, թէ ալքով մարդը կը մղէ Աստուծոյ եւ մահուան, վառեցի շկայ բան մը, որ մարդը Աստուծոյ տանելով, չտանի նաեւ մահուան։

Ու դեռ կը յաղթէ, դիտապատ կ'ը-

նէ զինք, մանաւանդ սէրը, Իռենայինը ամէնէն աւելի։ Կրօնքի մը ընդարձակութիւնը, վեհութիւնն ու վերջնականութիւնը ունի իրեն համար սէրը, որմէ կը բխեն կարծես զինք պարտութեան մատնող միւս բոլոր բաները, որոնց թուումը ըրինք եւ որոնց վրայ պարտաւոր ենք աւելցնել

Լոյսը,

Որ երգուեցաւ Ինտրայի կողմէ ու ժերմ անլուր հաւաքումով մը, անվարձան եւ անասելի մաքրութեամբ մը, անհուն եւ վճիռ սինթոնի մը ստեղծելով, Քաղաքական գիշերներու պերճ երկնահամարէն սկսեալ մինչեւ Եօջուան, — խաչեցեալը լոյսերու Միախաչին։ Երկրորդ Շնորհալի մըն է, երբ լոյսը կ'երգէ քաղցրագին, լայն, անընթաց հոգեկեղծումով մը։

Որոնք թուրքիւնը՝

Որով կը կտակութիւն մեր գրականութեան թափանցումի ու վերլուծման մը նայուն էջեր, բարձրակառոյց իմացականութիւններուն կործանումին յոնգելով երբեմն։

Հպատակն է, ու կը դառնայ համակ կող ու համակ ապրում բան մը՝ հայկական կիրականամուտի եկեղեցական խոնկին ու խաղաղութեան առջեւ։ Հպատակը՝ մահը խորհրդանշող թուականը բոյսի մը՝ — ԲԱՆԳԻՆ։ Հպատակ մը սակայն՝ որ զինք յաղթահարած բոլոր բաներուն տէրն ու տիրակալը դարձաւ։

Իր Նեյալիսարինն առաջին բառը հովի է, որ մեծ ու գեղեցիկ հիւրի մը պէս կու գայ եւ կ'անցնի, բերելով իր հետ Սեւ Ծով, Իռենա, լոյս, նոճի, ալքով, եկեղեցի, անցեալ, խենթութիւն, բանգ, մահ ու սփիւքս։ Վերջին բառը Աստուծոն է սակայն, որ կայ եւ չ'անցնիր, ու թերեւ չի ձգեր, որ այս խոհուն ու խելացի մտաւորականին գիրքը, հովի մը պէս եկած ու անցած ըլլայ հայ գրականութեան մէջէն։

Ե. Գ.



« ԼՈՅՍԵՐԸ » (Կ. ՓՈԼՍՏԵԱՆ)

Փարիզ, 1964

Երեք վէպ, երկու հատոր զրոյց, բանաստեղծութեան հատոր մը եւ հրապարակ նոր ելածը, «Լոյսերը»: Այս եօթը հատորները կը կազմեն Կ. Փօլստեանի վաստակը:

Նոր այս գիրքը ոչ վէպ է, ոչ բանաստեղծութիւն, եւ ոչ ալ զրոյց: Կը պարունակէ սակայն Փօլստեանի գրական բոլոր հակումներուն տարրերը: Վիպական մթնոլորտի մը մէջ, բանաստեղծական արտայայտչութեան կատարումը զրոյցներ են «Լոյսերը», թիւով չորս հատ եւ իրենց մասնակի խորագիր՝ կը կրեն «Երազներու աշխարհը», «Անպատկան Արարատ», «Եթեւիքը» եւ «Հաշուեյարդար» անունները:

Առաջինի գործողութիւնը տեղի կ'ունենայ Թրանսպրաներուն մտաւորական քաղաքին՝ էքսի մէջ, երկրորդը կը պատմէ անպատկան Արարատ երկարող ճամբուն ապրումները, երրորդը կը նկարագրէ մեր դժոխքէն մաս մը, իսկ չորրորդը կը ներկայացնէ հեղինակին կենսագրականը շատ հետաքրքրական պատմումով մը:

Փօլստեան այս անգամ զրուցակից գտած է երրորդ դէմք մը, «Ան», աւելի ճիշդը «Ան» է, իր երկրորդ ետք, տառապանքները, յուզումները, սէրերը, երազները խաղցնող զրոյցին բուն ինքնութիւնը, որ կ'առաջնորդէ զինք քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, վիճակէ վիճակ եւ կը զրուցէ ու կը պարտադրէ ինքզինք Փօլստեանի ստեղծական անձին:

Փօլստեան ինքն ալ կը պատկանի այն սերունդին, որ տեսաւ անպատկան եւ այլեւս չկրցաւ մոռնալ անպատկան: Անպատկան մնաց իրենց արեւմտիկ եւ արեւելեան:

Բուն մէջ եւ ամենուրեք զգացող իր մըղձաւորային ներկայութիւնը ու անոնց էջերուն մէջ դարձաւ տրամութիւն, բողոք, դառն հեղինակ՝ մարդոց դէմ ու Աստուծոյ դէմ հաւասարապէս: Այս ապրումին սաստիկութիւնը աւելի կը զգացուի մանաւանդ մեծ քաղաքներու մէջ ինչպէս մարդոց մօտ: Այդ քաղաքներուն մէջ թաւալած ազատ կեանքը եւ անյող՝ զոգը կ'օթոյնները՝ տեսարար յիշեցուցին այդ մարդոց իրենց անիրաււած ժողովուրդին ու անոր կործանած մշակութային գանձերուն ողորդութիւնը: Բարեբախտաբար այս տուած օրումն քսանչորս ժամը չգրաւեց իրենցմէ եւ հոս ու հոն վառուեցան սփոխարար լոյսեր, կենդանի մնացած ու կենդանացնող ուժեր, ոչինչ, ըմբոստութեան դրուագները, ապրիլու յաղթանակը վերջապէս: Անպատկան մէջ պատահած կիզիչ յիշատակներուն՝ Փօլստեան կը հակադրէ բարձունքներուն յաղթական եռուզեռը եւ իշնամի խաւարին դէմ կը վստի իր «Լոյսերը»:

Ներկայացնելէ ետք հատորին ոգին, եւ ընդդէմէ ետք զգացական մթնոլորտի մը մէջ Փօլստեանի յայտնած մտածումներուն շահեկանութիւնն ու կատարած ընդհանրացումները՝ շէշտենք որ կտորները տեղ տեղ վիրաւոր են արուեստի տեսանկէտով: Եւ ամէնէն աւելի խոստովանելի պակասով: Ազգակից նախադասութիւններուն միայն մէկուն տեղ տալով եւ լռելիայն հասկնալի բացատրութիւնները զիջելով՝ աւելի ուժ պիտի բովանդակէին անոնք: Միւս տկարութիւնը յուշումին շատութիւնն է եւ իրապաշտ դրուագներուն խորնայն ոգի թանձրութիւնը (էջ 31): Պէտք է երբեմն պրկել ջիղերը եւ յարգանքի բաժին մը ձգել դրական ույն միւս ուժին, որ կը կոչուի թելադրականութիւն: Այս դիտողութիւնը չի վերաբերիր հատորին վերջին հատուածին, ուր հեղինակը եւ իր երկրորդ անձը՝ «Ան», աշխուժ ու սուր տխրութեամբ մը կը կազմեն «Լոյսերը»-ն ինչպէս շուրջը եւ կենսունակ բաժինը:

Գ. Ս.



« Տ Ա Ս Ն Ը Յ Ո Ր »

Հայաստանի քննադատներին, Սոս-
րէն Աղաբաբեան, անցեալ տարի Վերձա-
դանքներն անուշով հատոր մը լոյս ըն-
ծայից, ուր քննութեան ենթարկուած են
«Առօրեայ հրահանութեան պատմու-
թեան ու տեսութեան հարցերը»: Առան-
ձին զէմքերու նուիրուած ուսումնասի-
րութիւններու կարգին՝ քննադատը 35
էջով ներկայացուցած է «Եղիշէ Չարեն-
ցի հոկտեմբերեան պոեմները»: Այս վեր-
ջինէն նմայի համար պզտիկ հատուած
մը...

«Հոկտեմբերը դարձաւ այն սահմա-
նագիծը, որով մար շրջան սկսուեց Չա-
րենցի կեանքի ու ստեղծագործութեան
մէջ: «Վիթխարի ցաւով» ազատագրուե-
լով անաջին շրջանի ստեղծագործութեան
հակասութիւններէ, Չարենցը արդէն
մար հայեացքով է մայրում իր ժողովրդի
գալիք ուղիներին: Այսպէս իր քաղաքը
լուսաւորում է մեր ստեղծագործական
մար ընթացքը, թիւեղացնում է մեր հո-
գեկան աշխարհը:

Ազատուեց հիմ կայանքից
Հոգիս՝ վիթխարի ցաւով:
Տաւնըստ: թաւնըստ հրի,
Ողջակէզ-կարմրակէզ բոցում,
Արթնացաւ արեւ-նայիրին
Իմ հոգու մար զնգոցում:

1917 թուականը, եին ու մար աշխար-
հի շարերգական բաժանման թուականը,
անմոռանալի «թերը հոգի» դառնում
են Չարենցի գաղափարական կտրուկ շր-
ջադարձի տարիները: Պարաշրջանի մեծ
նշարտութիւնը դառնում է մեր անգ-
նական կեանքի անխցիլի ու անբաժան
մասը: (Էջ՝ 256)

Ամբողջ ըստաւը այս է, նոյն իւր-
դրին լուրջ անսկիզբ եւ անվախճան նա-
խադասութիւններ, Հոկտեմբերին մեկ-
նող կամ Հոկտեմբերին յանգող այն ան-
բաժանելի բառակոյտը, որ հասարակաց
է մեր հայրենիքի քննադատներուն մեծ
տոկոսին: Բայց մենք Հոկտեմբերին մա-
սին ըստաւը եւ Չարենցի մասին անդու-
կրկնուած ուշադրութեան յանձնելու
համար շարտադրեցինք վերի հատու-
ածը, այլ մատնանշելու համար քննադա-
տին մէջբերած բանաստեղծութիւնը, բա-
նաստեղծութեան մէկ բառը:—

Տաւնըստ

Իրենց ազդադրութեամբ պահեցինք
բառը, չխախտելու համար իր վրայ կա-
տարուած նենգախորհութեան նենգ հա-
րադատութիւնը:

Մէջբերուած հատուածը վերցուած
է Չարենցի կենսագրավէպէն, «Չարենց-
նամէն պոեմէն, զոր, բանաստեղծին յա-
րութիւն առած տարին (1954) իր լոյս
ընծայած «Ընտիր երկեր» հատորին մէջ,

Պետհրատը, ուրիշ բանաստեղծութիւններու կարգին բաւական չարափոխած ու շարժարած էր արդէն, բայց չէր դպած անոր թուականներուն:

Թեհեւ աւելորդ չըլլայ Աղարաբեանի կատարած տեղափոխութեան մասին խօսելէ առաջ՝ խօսիլ տասնամեակ մը առաջ Պետհրատի սարքած յարգարանքներուն մասին եւ պատիւի նմոյսով մը վերջտանքի ցոյց տալ այնքան ծանօթ նենգափոխութիւնը:

«Ձարենց-Նամէշի մէջ Ձարենց գրած, հետադարձած ու վերահրատարակած էր՝

Էլ ինչո՞ւ ծիծաղէր եղգիս,
Երբ մի լուրջ քննադատ մի օր
Սարսելով դանիւնն աւ փայլէն —
Աւետեց ամբողջ տշխարհին,
Որ ծնունդ է մեծ մի պոետ...

Այս հատուածը 1954-ին լոյս ընծայած Պետհրատի «Ընտիր երկեր»-ին (էջ 325) մէջ եւ թէ 1955-ին կազմած հատուորին (էջ 51) մէջ եղած ու մնացած է հետեւեալ ձևով.

Էլ ինչո՞ւ ծիծաղէր եղգիս,
Երբ մի լուրջ քննադատ մի օր
Սարսելով դանիւնն աւ փայլէն —
Աւետեց ամբողջ տշխարհին,
Որ ծնունդ է — մեծ մի պոետ...

Նիկոլ Աղբալեանին անունը եթէ եղած տեղը պահուէր, ընթերցողը աւելի դժուարեամբ պիտի հասկնար հարկաւ, որ խօսողը «մի լուրջ քննադատ» է. յօդուած Ձարենցին խօսող մարդուն լրջութիւնը չէր պակսեր, բայց բանաստեղծին ու ընթերցողին հաւասարապէս խնայողութեամբ գրական այս անլուրջ վարձուքը:

Միայն այս քերթուածին մէջ չէ, որ միջամտած են Պետհրատի վարիչները, ուրիշ տեղեր եւս խեղաթիւրած են նահատակ բանաստեղծին վաստակը, ու կէս ձգուած այդ շար գործը քննադատը կը շարունակէ ահաւանիկ, նենգափոխելով այս անգամ թուականը, տասնըութը ան-

գամ վերաւորուած քերթուածին տասնըութը վերածելով «Տասնըութ»:

Կը թուի թէ իրենք պիտի չհրաժարին այս կարգի սխալագործութիւններ հանդիսադրելէ, իսկ մենք իրենց գործերուն առջեւ տեւարար գործացումի մատնուած պիտի ապրինք: Իրապէս ի՞նչ պէտք կար յետադիմական այս միջոցին: Ձարենցի անունին դիմաց Հոկտեմբերեան նախադասութիւններ դիզելու համար՝ առիթնէ՞ր կը պակսէին Աղարաբեանին, որ պէտք կը զգայ ոչ պարկէշտ եղանակներ կիրարկելու:

Գիտենք, որ տասնըութը հաճելի հնչիւն մը չունի Հոկտեմբերեան ակամջներուն, տասնըութը կը խորհրդանշէ ու կը յիշեցնէ իրենց դիտցածէն տարբեր ու իրական գիտական հրէ՛ մը, նայիրեան ուրիշ արթնութիւն մը ու յարուած մը, եւ բանաստեղծը այդ մէկուն կ'ակնարկէ արդէն, քննադատը այդ մէկէն կը սարսափի արդէն, որովհետեւ տասնըութէն առաջ ի՞նչ նայիրի, գոտանըյթին՝ նայիրի կապակցութեամբ արթնութեան կամ ազատութեան ի՞նչ խօսք:

Եւ յետոյ՝ այս գոտանըյթին հարազատութիւնը հոս ընդունելու պարագային՝ ինչպէ՞ս պիտի բժրոնենք ընդդրին մէջ իրմէ ուղիղ մէկ տող առաջ գտնուող բանաստեղծին սա խանդավառ բացազանչութիւնը՝

Տասնըութ:

Թուական կեանքի:

Պատմութեան հետ այնքան հաշտ ընթացող այդ կենսագրավէպին մէջ այս պիտի խորամանկութեամբ մուտք գործելով եւ շարունակ այսպիսի անհաճոյ խաղեր խաղալով ու խարդախելով՝ ի հարկէ ոչ Ձարենցը կը մեծնայ եւ ոչ ալ քննադատը վստահելի կը մնայ:

Մեր հայրենիքին մէջ, մարդիկ ե՞րբ պիտի հասկնան արդեօք տարրական այս բաները եւ առանց ընթերցողը վիրաւորելու ե՞րբ պիտի սկսին խօսիլ... ընթերցողին հետ:

«Vouloir être de son temps
c'est déjà être dépassé»

Իբրեւ խորագիր մեր գործածած վե-
րի Ֆրանսերէն տողը կը պատկանի Ֆր-
բանական արդի գրականութեան յառա-
ջապահ դէմքերէն՝ Էօթէն Բօնեպոյին,
որ իր թատերական գործերով եւ գրա-
կանութեան մասին իր յայտնած յան-
դուան եւ պայծառ մտքերով՝ վերջին
տասնամեակին իր դրայ հրաւիրեց գրա-
կան ամբողջ աշխարհին ուշադրութիւնը:
Իր յօդուածները ամփոփող Notes
et contre-notes հատորէն վերջուած
այս մտածումը ինքն իր մէջ վերլուծելու
համար շարտագրեցինք Հոս, այլ յիշե-
ցնելու համար իր յիշեցուցած գրական
ուրիշ կարծիք մը, որ կը պատկանի Ե-
րիշէ Զարենցին եւ ծանօթ է ամէնուն:

Թէ ուզում ես երգդ լսեն՝
Ժամանակիդ շնչելը դարձիր:—

Երեւութապէս գիտար հերքող երկու
այս մտածումներուն խորքը նոյնն է:
Իօնեպօն նոր արժէք մը նուաճելու
համար կը թելադրէ դուրս գալ անմիջա-
կան ժամանակէն եւ սուղուիլ գալիք ժա-
մանակներու մէջ, մինչ Զարենց դալիք
ժամանակներուն փոխանցելիք արժէքին
համար կ'սուցնէ ու կը պնդէ՝ — «կապ-
ուիր օնեպօնի իրաքանչիւր քա օրերին
եւ քա դարին»:

Զարենցին մտածումը օգտագործող
դրողներն ու բանաստեղծները, մանա-
ւանդ երբ զայն կ'օգտագործեն իր առի-
թով՝ այն ապաւորութիւնը կը թողուն,
որ բանաստեղծը թանձր իրականութեան
կ'ակնարկէ եւ ամբողջ առաջին օրինակը
տուած է ինքը, երգելով Հոկտեմբերեան
յեղափոխութիւնը, յեղափոխութեան ներ-
կայացուցիչները, անոր հաստատացողնե-
րը, Լենինը, Ալին, Մուսիկը, Կոմունա-

րը, գասակարգային պայքարը, այսին-
չը, այնինչը, Բայց մեղի կը թուի, թէ
ճշմարտութիւնը այդ չէ, կամ թոյլ՝ րո-
վին այդ չէ, եւ Զարենց շատ աւելի կը
մօտենայ կատարուած-վերջացած բանե-
րով չգրադող Բօնեպօնի ճշմարտութեան,
քան իր մեկնաբանները կը մօտենան ի՛ր
ճշմարտութեան:

Չմոռնանք, որ մէջբերուած տողերը
տանուած են լեթուգի բանաստեղծ Դարե-
կամիս հանրայայտ քերթուածէն, ուր
անողոք սասակութեամբ մը կը ձաղկը-
ւին «դարի տենդով» եւ «դասակարգի
խանդով» եռացող անբովանդակ եւ ինք-
նազոհ ազմկարարները եւ կարօտով կը
փնտռուի «մեր երազած պոետը մեծ»:

Որ օրերի վէճի միջից
Հիմնականը մանրից գատէ
Եւ կարկանդակ զինք ու վնիւս:

Կարեւորը, ի հարկէ, այդ «Հիմնա-
կանը» զտնելն է, որ, ինչ խօսք, պարա-
դայական իր կազմէն ձերբազատուած
կը ներկայանայ յաւիտեականութեան եւ
կը պարտադրէ ինքզինք բոլոր ժամա-
նակներուն: Այս է Զարենցին առաջա-
րկածը: Տարբէ՞ր է միթէ Բօնեպօնի Հե-
տապնւածը: Եթէ տարբեր է եւ զալիք
ժամանակներուն մէջ այժմէն բարձրա-
ցուցած իր կառուցումները գուրկ են այդ
«Հիմնական»էն, այդ պարագային, պարզ
է, մարդիկ շուտ կը հասնին իր «ժամա-
նակին» եւ դժուարութեան չեն բախի իր
ժանրը եւ մանրամասնութիւնները քան-
դելու:

Շատ մեծ տարբերութիւն մը չկայ
ժամանակի շունչին կամ մարգարէաշուն-
չին միջեւ: Կականը բան մը կարենալ չըն-
չաւորելն է: Շեւն է հակառակը:

ԱՌԱՆՅ... ՎՌԱՆՅԻ

Քիչ մը վարէն սկսող (Առանց ժեկետու-
թեան) արձակ եւ չափածոյ գրութիւնները բո-
ւորը մէկ կարգացած ենք զննարարներ մէջ,
Մամենանի չափածոյ սեւ երգիծանքը հետազոտ-
քերութեամբ կարգացուցաւ հարկաւ. օրաթեր-
թին ընթերցողներուն հոգմէ, ինչպէս, վաստ'հ
ենք, պիտի կարգացուի մեր ընթերցողներուն
հոգմէ: Տարօրինակ պիտի թուի միայն ընդհա-
նաւոր վերնադիրը՝ - Առանց ժեկետութեան,
Տակաւին ինչ կը փորձէր մեկնարանել Մամենան,
մեկնարանելիք ինչ մնացած է անգին: Անպար-
տան արձակող՝ պէտք է մտնենալ հարցի մը, որ
մեկնարանուի: Կը սպասենք որ Մամենան նոր
մեկնարանութիւններ հազարէն ընթերցողին, ան-
շուշտ տաւեց... զԱռանցին...

ԱՌԱՆՅ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

Հնարիկ Թումանեանի հետեւ-
եալ առանաւորը կ'արտագրեմ իր
գինարէն գրէն: Գիրքը լոյս
տեսած է Երեւան, Հայպետհրա-
տի տպագրութեամբ, 1958-ին:

ԶԻՆՈՒՈՐԸ

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆԻՆ

Հրգիհում էր արդէն Հոկտեմբերը:
Նարչեհում լինինեան զեղերի
Գուսում էր, երգում էր, գինուորը,
Ու երգով զեւում էր պայքարի:

Նա անցաւ քարտարու ճամբաներ,
ձուլակեց հրճուանքը յաղթութեան,
Փայտակնեց ծաղկավառ զարուհներ,
Երազեց գալիքը մարդկութեան:

Իր սիրտը նա բացեց աշխարհին,
Հնչիւնեան մէջ դառն գովերգեց
Ու երբեք իր պայծառ փառքին

Կարգալէ ետք վերադիւնալ ու-
տանաւորը, ունեցալ կարգ մը
մտածումներ, ու ինքնաբերաբար
արձանագրեցի հետեւեալը.

ՊՈՆՏ ԶԱՐԵՆՏԸ

ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

Երգում էր այնտեղ հայրենի երկրում
Հրաքերից պոկուած մի անձում պոկուած.
Հիշի՛ք է վնասեց նա տարբ մեծամեծ
Լեռնանաւ զարի գազափարմերիմ,
Բայց տարբեր քաղով, հաւրով իր սրտի՝
Նա միշտ գովերգեց զԵՄԵՐԻՆ հայրենի:

Կրակէ գրչով՝ բայց բերնով կաշկամզ,
Նա գովիք երեսեց՝ հոգը, ամովկամզ,
Մեծ իշտաներին իր ժողովրդի
Անել կացութեամ մի մար խորհելով,
Նա վկայ բերեց Տոնգլն Հռոմի,
Ու մրա բերնով, գրով զԺԱՅԻ
Խոնքրեց բոլոր Արձակամեծերին,
Ալիւսաներին, Գրիստափորին,
Ու զեռ շատերին, ու զեռ շատերին,
Միմչիւ իսկ Գուսումնաւորներին:

Նա գիտէր գինը իր հայրենիքի,
Ու գիտէր զերը ֆիլիստերներին.
Անա քէ ինչու՛ մի պատգամ վերջին
Նա քաղեց այնտեղ, - գաղտնի բանալի...

Դուք կարծում էք թէ յիմա՞ր էր իսկի,
Որ փառքիլ կարծէր աշխից Զեկայի.
Բա՛յց, երբ դառնալը հասել էր ռուբին
Հայ ժողովրդի, - իր սիրած ազգին՝
Այն ատեն անա իսկապէս, անվիշեք,
Նա իր խոսքն ասեց ու հագին տուեց,
Փայլելով ճամբէն աշուղ Նովայի.
Ու իր իսկ մահով մալիքագործից
Պատգամը Հայկի աւ վարդապետներին:

Հիշի՛ք է վնասեց նա տարբ մեծամեծ՝
Լեռնանաւ զարի գազափարմերիմ,
Բայց երբե՛ք, երբե՛ք եւ ոչ մի վայրկեան
Զդուսեց նա իր եարագաւ ազգին:
ԳԵՐՁ Թ. ՄՈՒՄԱՆԵԱՆ

ՎԱՀԱԳՆ ԿԱՐԵՆՑ ԹԷ... ՓՕԼ ԷԼԻՒԱՐ

«Սովետական Հայաստանում» (15 Ապրիլ) ամսագրում այս պեղ-տիկ գրութեան ընթերցումով՝ «Բացին» ընթերցողները պիտի յիշեն ուրիշ գրութիւն մը, որ երեւցաւ մեր թերթի փետրուարի ծախարիմ մէջ, «Գրական պատկերասրահ» խորագրով: Թէ՛ այս մէկը և՛ թէ՛ այն միւսը կը շօշափեն նայնը, այն՝ որ «Վանագն» կարենց կազմակերպել է փրանսացի բանաստեղծին:

Վ. Կարենցի քերթուածը մեծք առած էինք «Սովետական Գրականութիւն» ամսաթերթէն, իսկ այս գրութիւնը տարագրու-ալը գտնւեալ «Աւանգարդ» մէջ կարգադրած ըլլալուն լուրջ կու տայ: Հո՞նք ալ թերթերը արտասովոր մեղաւորին յիշած են զիմեջ արդ-եօք, թէ հա՛ն ալ կարենց փորձած է իր ճարպիկութիւնը, ոչ բա-նաստեղծական զվարթով մը նպատակաւորօրէն միտումով: Կը քուի թէ բանաստեղծն ետք բանաստեղծութիւնը իւրընկալող «Աւանգարդ»ը շատ քննադատելի թերթ մը չէ, և՛ այնքան ալ վրե-տանդիլ չէ ամօր մասին յայտնած... «Գաւառներ» կարծիքը:

Յորանասցի ականաւոր բանաստեղծ Փօլ Էլիւարից հատուկ նախ թարգմանու-թիւններ կան հայերէն լեզուով: Բանաս-տեղծ Վահագն Կարենցը յանձն է առել լրացնել այդ բացը: Իսկ ի՞նչպէս, վեր-ցրել է ֆրանսացի բանաստեղծի հանրա-յայտ «Ազատութիւն» բանաստեղծութիւ-նը և՛ «Վերածնալէն» է, ալ կերպ առած՝ Վ. Կարենցը փոփոխակներ է գրել Էլիւար-րի «Ազատութիւն» բանաստեղծութեան նիւթերով:

Նա, ահա «Աւանգարդ» թերթի այս տարուայ փետրուար 20-ի համարում տպագրուել է Վ. Կարենցի «Նոր խաղա-ղութեան» բանաստեղծութիւնը, որ Փօլ Էլիւարի 22 տարի առաջ գրած «Ազատու-թիւն» բանաստեղծութեան անյախող թարգմանութիւնն է յիշեցնում: Ի հար-կէ, «Հեղինակը» (այսինքն՝ Վ. Կարենց) կը պնդէ, թէ դա իր սեփականութիւնն է, քանի որ թերթն էլ ներկայացրել է որպէս այդպիսին: Իրօք, կարդալուց և՛ համեմատելուց յետոյ «Հակադաս» տարբերութիւններ են երեւում: Օրինակ՝

Փօլ Էլիւար վերնագրել է «Ազատութիւն», իսկ Վ. Կարենց՝ «Նոր խաղաղութեան», Էլիւար գրել է մօտ 85 տողանոց մի բա-նաստեղծութիւն. իսկ Վ. Կարենց սահ-մանափակուել է 16 տողով: Էլիւար «Ա-զատութիւն» է գրում «Թուող թռչուննե-րի թիւերի վրայ», իսկ Վ. Կարենց աւե-լի է արդիականացրել այս պատկերը և՛ ցանկութիւն է յայտնել «խաղաղութիւն» վրէժ «թիւերի վրայ» սահմանակներէ», Էլիւարի «Հաւաքուող կառոյցիս վրայ» տողը դարձել է «բարձրացող շէնքի դռ-ների վրայ», Էլիւար բանաստեղծութիւ-նը սկսում է «զպրոցակա տեսարաննե-րիս վրայ» տողով, իսկ Վ. Կարենց այդ նոյն տեսարանները «մանկական» որոշի-չով տարել է նախափերջին տող: Էլիւար սկսել է այսպէս.

Դպրոցական տնտրակներէս վրայ,
Ծառերի և՛ ճառարաններէ վրայ,
Աւագի և՛ ճեմ վրայ
Քա՛ անունն եմ գրում:

Իսկ Վ. Կարենց պարզապէս գրելու

ցանկութիւն է յայտնում:

Յուշադրիւրմնի բարերի վրայ,
Դարերով մամռած ժայռերի վրայ,
Բարձրացող շէմքի դռների վրայ
Ուզում եմ գրել եւ խաղաղութիւն:

Բայց, շնայած այս «հակայական»
աարբերութիւններին, «Երգ խաղաղու-
թեան» եւ «Ազատութիւն» բանաստեղծու-
թիւնների մէջ կայ մի հիմնական նմա-
նութիւն, որ առիթ է տալիս ասելու, որ
Վ. Կարենց կողմանակ է ֆրանսացի բա-
նաստեղծին:

Փօլ էլիւար «Ազատութիւն» բանաս-
տեղծութիւնը գրել է 1942 թ., երբ ֆր-
րանսացի ժողովուրդը պայքարում էր
Ֆաշիզմի դէմ, երբ ինքը՝ հեղինակը,
գիտակցելով իր պարտքը մարդկութեան
հանդէպ, ֆրանսայի համայնավար կու-
սակցութեան շարքերն էր մտնում: Բա-
նաստեղծութիւնը տողորում է պայքա-
րի եւ ազատասիրութեան ոգով, էլիւար
85 տողի մէջ թւում է այն ամէնը, ինչ
չբնականում է մարդուն, ինչ հարազատ
է եւ թանկագին, ինչի համար մարդիկ
երենց արիւնն են թափում: Բանաստեղ-
ծը այդ թուարկումներով կերտում է
պայքարող եւ ազատասէր մարդու
կերպարը: Կատարեալ մարդու էութ-
թիւնը կազմուած է «Խորոցական
տետրակներից», «Մանկութեան արձա-
գանդից», «Յոյսից եւ յուսերից», «Հա-
նապաղօրեայ հացից», «Թռչունների թե-
ւերից», «Գոմացող շան սուր ականջնե-
րից ու ծուռ թաթերից», «Ակամայ բա-

ցակայութիւնից» եւ այլն: Բանաստեղ-
ծութիւնը կազմուած է ջրան ջրաստո-
ղից եւ ամէն մի քառատողի վերջում
գրում է. «Թո անուն եմ գրում», իսկ
բանաստեղծութիւնը վերջանում է այս-
պէս:

Եւ գորութեամբ այդ խօսքի
Իմ կեանքն եմ վերսկսում,
Եւ ծնունդ եմ, որ ճանաչեմ քեզ,
որ ամուսնեմ քեզ
ԱՅԱՏՈՒԹԻՒՆ:

Այստեղ է բանաստեղծութեան ուժը.
էլիւար մարդու էութեան ամենափոքր եւ
անտեսանելի մասնիկների վրայ «Ազա-
տութիւն» է գրում: Հէնց այս հանճարեղ
մտայղացումը, հնարանքն է «վերցրել»
Վահագն Կարենց եւ էլիւարի հանճարեղ
գործը դարձել է մի ապաշնորհ ոտանա-
ւոր: Տուեալ դէպքում Վ. Կարենց նման
է այն սկսնակ նկարիչներին, որոնք փոր-
ձում են «շտկել» մեծ վարպետների կը-
տաները, ի հարկէ ապարդիւն: Վատ
չէր լինի, որ Վ. Կարենցն էլ զգուշանար
եւ նման «շտկումներ» անելուց առաջ յի-
շէր, որ դեռ 22 տարի առաջ ֆրանսացի
բանաստեղծը արգէն գրել է, եւ ի հար-
կէ, աւելի լաւ, քան Վ. Կարենցը հիմա
կը գրէր:

Յ. Գ. — Ձմռանանը տեսի, որ Վա-
հագն Կարենց Փօլ էլիւարին ծանօթացել
է ոչ թէ բնագրով, այլ թարգմանու-
թեամբ:

Ա. ԹՓՁԵԱՆ





Երևանյան

10/5/64, Պէյրուք

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ
«ԲԱԳԻՆ» ԱՄՍԱԳՐԻ,

Ձեր ամսաթիւրթի Սայաթ-Նովայի յատկացուած թիւին (Գ. Տարի, 1964 Յունուար, Թիւ 1) մէջ, մէկ էջի վրայ տրուած էին Եր. Պօյաճեանի, Գալ. Վահանի, Վ. Օշականի եւ Պ. Մնայեանի նոր գործերուն ծանուցումները: Գալ. Վահանի եւ Վ. Օշականի գործերը տեսնելու ժամանակին: Անգ-եալ տարի կարգացած էինք Վրացիներ խմբադրին Եր. Պօյաճեանի «Տա-մար տարագրի»-ն, որ բաւ նոր յատարարութեան զապառելու մօտ է», իսկ «մօտ օրէն» լոյս կը տեսնէ միւս խմբագրին, Պ. Մնայեանի «Եւ աշ Շում Եմ»-ը, որ ծանուցումէն ամիսներ յետոյ տակաւին լոյս չէ տեսած:

Շատ աւելի լաւ չէ՞ր, արդեօք, էթէ Պ. Մնայեան Ղնքերգողիմ համ-րերութիւնը խորագրով դործի մը յատարարութիւնը տուած լոյսը, պար-զապէս նախանձը չարմելու: Համար Պօյաճեանի ստեղծագործութեան, որ զապառելու մօտ է միայն, մինչ միւսը չտպուած՝ ...սպառած է արդէն:

Սակայն, տարբեր է պարագան, թէ եւ ուշացումը առաջին դծի վրայ է միտ՝ երբ բառի, թէ ՎՍտ Երէնը ուրիշ բան չէր, քան Մնայեանի վերջերս լոյս բնծայած «Աւագարտ» նաւը: Այս հաստատումը հիմնաւորող միակ ապացոյցը սուր... տկաններն են միայն...

Արդ, էթէ գոյութիւն չունի յիշեալ հաւանականութիւնը, այսինքն այն, որ «Եւ աշ Շում Եմ»-ը չի կրնար նայու վերածուած լոյսը եւ ոչ մէկ աղերս ունի Մնայեանի կլանող բաղդատականին հետ՝ ինչո՞ւ ուրեմն այս անապարանքը դէպի Կ. Ջարեան:

Խոստմնադրութիւն հկատուելու վառնդը ինքնին բաւական չէ՞ր, որ-պէսզի հեղինակը կարգով երթար եւ մենք զիչ մը շուտ տեսնէինք ու լը-սէինք... «Շում Եմ»:

ՀԱՅԳ ԵԱՀԱԳԻՏԵԱՆ

Սիրելի ընթերցող,

Տեղ տուիմք Ձեր նամակին, գնահատելով գրական Ձեր հետաքրքրու-թիւնն ու արթնատառութիւնը:

Յայտնեմք քեւ ուրիշ ընթերցողներ եւ նոյն հարցումը ըրած են, ըլ-լա՛յ մեզի, ըլլա՛յ նոյնիմք Պ. Մնայեանին:

«Աւագարտ» մար» բնաւ կապ չունի «Եւ աշ Շում Եմ»-ի հետ, բացի ի հարկէ հեղինակային իր կապէն, եւ եթէ առաջ հրատարակուած է՝ իր պարագայական գործ մը ըլլալու համգամակէն առաջ կու գայ: Որով՝

«Եւ աշ Շում Եմ»-ը կը մնայ հաւատարիմ իր անունին եւ լոյս կը տեսնէ յառաջիկայ աշնան, եթէ անշուշտ գրական ուրիշ աւագարտումներ չըրն ևն արգելք չցցունին իր առջեւ:



ԳՐԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Այս վերնագրով յայտարարութիւններ լայն տեսանք քննարկում մէջ եւ հրաւերներ ստացանք մեզ հետ. կատարողը պիտի ըլլար Պրն. Թորոս Սպիտակեան, նոր առում մը գրականութեան կամ համերգի մարզէն ներս:

Յաւել կ'արձանագրեմք, որ այս վերնագիրը արդարացնող շէնք գտանք կատարումին օրը, կիւլակէնկեան քաղաքացիներն մէջ: Ոչ երգի ծայր լեցնել, ոչ ալ գրական բանի մը հանդիպեցնել:

Ամսումքի երեկոյ մըն էր եւ արժանի կտորներ ընտրուած էին կատարողին կողմէ: Միմէն ետեւ ոչ մէկ ամբնական երկոյթ. կարելի է արտասանել ձեռն արժանի կտորներ, ինչու չէ: Սակայն ներքին չէ բեմ իլլել *Հասարակ* պատմելու համար, անձնօր շինքիմանքներու տեղը՝ ծէք կտորները հրամցնելու համար հաւարակութեամբ, կամ մէկ երկու ծանօթ գրագէտի միջակ ու միջակէն վար արժէքով, արուեստէ գալիկ կտորները. ներքին չէ ճշմարիտ երգ դերասանական ձեւերով, ծայրական միտմեջումներով ներկաներուն ծիծաղը շարժել կարելի կ'ըլլայ: Ըն

կամ, եթէ կ'ազէք, ներքին է՝ պայմանով որ վերցունք վրայէն գրական եւ համերգ բաները եւ տեղի չունենայ հանդիսարանի մը մէջ, այլ գինեակահի մը շուրջ. կամ ընտանեկան *Հասարակ* մէջ:

Բեմ բարձրանալու համար անհրաժեշտ է մտա մը գտնել, մասամբ գտնել արուեստ հրամցնել, արուեստին ծառայել:

Պիտի հարցուի տնտես, թէ այս պարագային ինչն է կ'անդրադառնանք մեզն ներկայի մը. կ'անդրադառնանք որովհետեւ Պրն. Թ. Սպիտակեան ձեռն յարմարութիւններ լաւ արտասանող մը դառնալու. ձեռն ծայրը՝ քաւ, քաւանցող, եւ դեռառնական քոշ կտորագրութիւն: Այստեղ պիտի ըլլայ եթէ մեզն կարելիութիւն մը պայտայի վստմուի եւ մնայ տնուլ:

Երկարատեւ աշխատանք, հասանցում, տարիեմանական հարստացում գրականութեամբ, արուեստի, արտասանութեամբ մարզին մէջ, կրնան վերածել Պրն. Սպիտակեանը ազգու արտասանողի մը:

Բ. Փ.


ՈՂԵՐԳԱՅԻՆ ԵՒ ՃԱՅԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Ողբերգութիւնները կը ներկայացնեն մեզի հասարակաց դժբախտութիւններ. սակայն որոշ հեռաւորութեամբ, տեսակ մը սրտէս հեռաւոր ստորկայ. որով, հակադրականութիւնը, առաւել կամ նուազ շափով յատկորէն տեսանելի, կը կազմէ ժիշտ ալ, խորքը տառաքին:

•••

Թատրոնի մէջ, կերպը ժիւ միտկը կը լեցնէ ամբողջ ժամանակը: Յատկաները կան երեսօլը այն է, որ այս լիթայութեւ նշմարելի չէ հանդիսատեսին կողմէ, որ ընդհանրապէս դժբախտի զգայնութիւնը կ'ունենայ իրական բանի մը, ոչ ոքի համար ժանր մունը պատճառարանութեանց պէտք չկայ: Պարզ է սակայն, որ Թատրոնը չի նմանիլ կեանքին, առօրեայ կեանքին, ուր ումէն ինչ կը փախչի, կը մնայ անհասկանալի, նորիսի իրեն, խօսողին: Որովհետեւ կեանքն ալ, ինչպէս կ'ըսէ Եւջէն Իյոնսկի, երբ կտաւէն հիւստան է, ինչ կտաւէ ար հիւստան է երազը: Թատրոնը սակայն՝ ոչ:

ԱԼԷՆ



ՆԻԻ-ԵՈՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՍՏՆԸ

ՆԻԻ-ԵՈՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՍՏՆԸ։ Մա-
յիս 31-ին, Նիւ-Եորքի միջազգային ցուցահան-
դիսի մեծ հանդիսավայրին մէջ տեղի ունեցած
են Հայկական Փառաստանի մշակութային հանդի-
սութիւնները, 10 հազարէ աւելի բաղժաւթեան
մը ներկայութեան, Պետքեւելով անորինակ յու-
զումի եւ խանգաժառութեան միջոցաւ մը։

Փառաստանին իրենց մասնակցութիւնը բերած
են Պոթընի շնորհակալութեամբ եւ Նիւ-Եորքի Վոլտեր
երգչախումբերը, Պոթընի շնորհակալութեամբ ազգ. պա-
րախումբը եւ Նիւ-Եորքի Վոլտերի պարա-
խումբը, անհատ արուեստագէտներ եւ խմբա-
վարներ՝ Ալան Յովհաննէս, Թուրքի Գրիգորեան,
Գարեգին Վրդ. Փիտէնեան, Հայկազ Մկրտչե-
ան, Մարտ եւ Անահիտ Աճէմեաններ, Անիթա
Տէրեան, Լուսի Բլիսնեան, Նուարդ Համբար-
եան, Մարի Ազատեան, Օնիկ Տիկեան, Պէտ-
րէս Գէլեան, Արմէն Պապեան, Ազատի Նա-
ւասարդեան, Նուրա Ջաքարեան, Վարդէն Պա-
պազեան, Բազմարի Մալեան, Մարգարիտ Յա-
րութիւնեան եւ ուրիշներ։

Հանդիսութեան ներկայ եղած են Ամերիկայի
Հայոց Առաջնորդ Գեղ. Հրանդ Ս. Աբգ. Տէր
եւ Տիկ. Ջորժ Մարտիրոսեան, Հայկական Յը-
ուսան կարգադիր յանձնախումբի անդամներ Վի-
գէն Պապայեան եւ յայտադրի պատրաստութեան
մասնակից բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւն-
ներ։

Փառաստանին քաջամը կատարուած է գեա-
ռաջ Նահատակչով եւ ամերիկեան ազգ. մաղ-
թերով։ Մերազան Հայրը կարգադրած է ազա-
ն հայկական հուշարարներու եւ ամերիկեան Յ
աւարդաւոր զբոններու արհեստեան արարողա-
թիւնը։ Ազգութիւններու Օրուան արարողակեա
Պ. Ուայթըր Պեքերտ ողջունած է մասնակից
խումբերը, արուեստագէտներն ու ժողովուրդը։
Ապա, Անիթա Տէրեան պաշտօնագէտ քաջուան
յայտարարած է փառաստանը։

Փառաստանի ընթացքին զործագրուած է շատ

հոթ եւ վերին ստահանի խնամուած յայտադրի
մը, ազգային հպարտութեան եւ զեղարուեստա-
կան տնտեսութեան վայելքի մը մասնակից ար-
մընելով Ամերիկահայութիւնը։

Յանձնախումբին կողմէ պատրաստուած մու-
նաւոր գրքայի մը՝ Հայոց պատմութեան եւ մը-
շակութիւն նուիրուած (խմբագրուած՝ Ժ. Մի-
նասեանի, մ. Մանուկեանի, Մ. Մինասեանի եւ
Վ. Պապայեանի կողմէ) արժանացած է շնորհ ըն-
դունելութեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ՊՈՍՅԸՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՈՐՆԻՆ ՄԷՋ

Պոթընի Համբարձիմ կեդրոնական Մատենա-
դարանի վարչութեամբ յատուկ հրահանգով, Հայ
Ազգային Երգչախումբը, զեկավարութեամբ Տի-
կիմ Անահիտ Քելշիւանի, յիստ յայտը համբար
մը տուած է Մարտ 22-ին, կիրակի, Մատենա-
դարանի շէնք եւ ընդարձակ սրահին մէջ, որ
լեցուած է մեծ մասամբ Ամերիկացիներով։

Նախեմ համբարձիմ սկսիլը, Մատենադարա-
նի վարչութեամբ տնօրէնութիւններէ մէկը, հալիւթ
եւ իմաստասիր ռեկորմով մը, պաճապուցած է
հայկական երաժշտութիւնը եւ արուեստը, եւ
ներկայացուցած Ազգային Երգչախումբը իր ամե-
հալ գործունէութեամբ, ըլլայ ծայրագիծը, ըլլայ
պատկերասփիւռի վրայ։

Համբարձիմ յայտագիրը բաղկացած է 18 եր-
գերէ եւ շարականներէ, Մեհրապ, Ալեմշուտ,
Կովիտա վարպետներ, Ալան Յովհաննէս, Եղ-
մայեանէ յորիմուած երաժշտական կառնիքէ։

Երգչախումբին զեկավարը՝ Տիկիմ Անահիտ
Քելշիւան համառաւ քաջատարութիւններ տուած է
այ ժողովրդական երգերու եւ շարականներու
երաժշտութեան մասին։

Ներկայ ժողովուրդը, յաւաք ծափահարու-
թեամբ, գնահատած է Երգչախումբը։

Համբարձիմ օրը, Համբարձիմ Մատենադարանի
վարչութիւնը՝ արտի մուտքիմ կազմակերպած էր
ցուցանանքէն մը, իմաստով եւ յատուկ գրաւոր
քաջատարութիւններով սեղաններու վրայ շարակով
հայկական ձեռագիրներ, երաժշտական գիրքեր
եւ նմայնիք, մտնողակարգական արուեստի գա-
ծեր, որոնք շատ լաւ ապուստարութիւն ձգած են
հանդիսատես Ամերիկացի հաւաքակալութեան վը-
րայ։

ՁԵԿՈՅՑ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԱՆԱՀԻՏ ՄՐՑԱՆԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Յանձնախումբն իր 22 Մայիս 1964-ի ժողովին որոշեց 1963-ին լույս տեսած լուսագոյթ գրական մրցանակը տալ Շուարշ Կարգունիին՝ իր «Սպիտակ Առաւօտ» առումը կրող հատորին համար:

ՄԷԿ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԳԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Օր. Մարի Պոյանեան (Պէյրուք)՝ Պ. Առաքել Տօղրամանեանին (Արժանթին)
Պրն. Սիմոն Սիմոնեան (Պէյրուք), Պրն. Շմաւոն Ասփարեանին (Գանատա)
Պրն. Կ. Սողիկեան (Միացեալ Նահանգներ) Տօղթ. Համբարձ. Քէջիկեանին (Միացեալ Նահանգներ)
Պրն. Հրաչ Ճալաւեան (Պաղտատ), Պրն. Մինաս Ճալաւեանին (Յրանաա):

❖

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալ հրատարակութիւնները:—

- 1.— «Ձահերք» (Համանուագ հինգ շաբաթօրէն): Ժ. Յակոբեան,
Պէյրուք, 1964:
- 2.— «Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ»: Կ. Սաաւնի,
Պէյրուք, 1964:
- 3.— «Նրկու նամակ» (Կ. Զարեանին եւ Սովետահայ իշխանութեանց):
Եղ. Պոյանեան, Պէյրուք, 1964:
- 4.— «Ուրփայի վերջին օրերը» (Գիւցագներգութիւն): Զարեհ Որբերեան:
Պէյրուք, 1964:
- 5.— «Հատընտիր պատմութեան»: Մարի Թուլէյն, Բարգմ. Զ. Սիրգայեան,
Թեհրան, 1963:
- 6.— «Հայ ժողովրդի մեր շրջանի պատմութեան ննգափոխումը թուրք
պատմագրութեան մէջ»: Ռ. Գ. Սահակեան, Ե. Ղ. Մարգարեան:
Մատենաշար «Արիֆ», Թեհրան, 1964:
- 7.— «Լոյսերը» — Կ. Փօլատեան (Արուստագէտ Շաքի ինքնատիպ նկար-
ներով), Փարիզ, 1964:

ՏԱՐԵԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒՆ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ

Վարչութեան հասցէ:—

DIKRAN KOUYOUMDJIAN
B. P. 587, Beyrouth ~ Liban

digitised by A.R.A.R.@